

Գ. ԼԵԿՊԱՅԱՆ

ՎԻՃԱԿԱՆ ՀԱՇԹԵՐԸ

ԵՎ ՄՐԱՅ

ՎԻՃԱԿԱՆ ՀԱՇԹԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆ

891-99-13

5387

4-44 | Լեռնային, Օր.
Աշուղները և նրանց
արվեստը. 120.



Աշվեսի վաստակավոր գործիչ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

891.99.092

L-44

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1981 թ.

ԿԱՐԵՎՈՒՄ Ե ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀ ՔԿՍ-ԻՆ ԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ո. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ



Վարեգին Լեվոնյան
Եկ Նրանց
Արքական

5387
A II 30298

Հ Ա Յ Պ Ե Տ Տ Ր Ա Տ
Ե Ր Ե Վ Բ Ն 1 9 4 4

Ժողովրդական պրոնեսիոնալ երածության և
նրա համակալից հատվածներից մեկի, առողջական
կուլտուրայի ուսումնասիրությունը, Սովետական երա-
ծության հերթական խնդիրներից մեկն է:

Նրեւ բանասիրության մեջ առողությունը գտնվի
է ուսումնագրական մեջ հիմնա-
կանում սահմանափակվում է առողջական եղանակ-
ների ձայնագրություններով, այն էլ բերևս ծեռագիր
վիճակում:

Արվեստի վաստակավոր զուծիչ առողջագետ Գա-
րեգին Լեվոնյանի այս աշխատությանը պարունակելով
իր մեջ առողջական արվեստին վերաբերող բանասիրա-
կան անհրաժեշտ գիտելիքներ, պես է որ օճանդակի
այդ բնագավառում կատարվելիք երածութան—զիտա-
հետազոտական աշխատանիւններին:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ գրականագիտուրյան մեջ աշուղներով և նրանց խաղերի հավաքումով անցյալ դարի կեսերին առաջին անգամ լրջորեն գրադիլ է բանասեր-գիտնական բժիշկ Գևորգ Ալյվերդյանը, մասնավորապես իր առանձին ուսումնասիրուրյան նյութ դարձնելով 18-րդ դարի հոչակավոր աշուղ Սայար-Նովային: 1852 թվին նրա հրատարակած «Սայար-Նովան» իր գիտական առաջարանով և հմտալից ծանրություններով իիմք դրեց մեր մեջ աշուղագիտուրյան:

Այնուեհտև, մինչև դարավերջը և ավելի ուշ հայ աշուղական խոդերի հավաքումով և հրատարակուրյամբ հայտնի են Ռուկան Հովհաննեիսյանը («Նոր Քնար Հայաստանի» 5 տետր, Մոսկվա), Միք. Միանսարյանը («Քնար Հայկական» Պետերբուրգ), Արիստ. Վ. Տևիանցը («Հայերգ» Թիֆլիս), Գրիգոր Բ. Գրիգորյանը («Սուխակ Հայաստանի» Բագու), Գարեգին Լևոնյանը («Հայ աշուղներ» Ալեքսանդրապոլի), Արշակ Բրուտյանը («Թամկական մրմունցներ» Ալեքսանդրապոլի), Տրդատ Վ. Պալյատնը («Հայ աշուղներ» Կ. Պոլիս, 2 գրքույկ), Ալեք. Մխիթարյանը («Խաղեր և տաղեր» Ալեքսանդրապոլ) և Գեղամ Թարգերդյանը («Հայ աշուղներ» Սրբան): Վերջինս ունի հայ իին ու նոր աշուղներից շատ անտիպ խաղեր, որոնք կազմում են աշխատուրյան Բ. հատորը (անտիպ): Սակայն Ալյվերդյանից հետո հիշվող այս տնօւթներից շատերը եղել են միայն աշուղական խաղերի հավաքողներ և հրատարակիչներ, առատ նյութ են մատակարարել բանասիրուրյան, բայց չեն գրադիլ այդ նյութերի բննուրյամբ, կամ աշուղական արվեստի ուսումնասիրուրյամբ: Բացառուրյաւն են կազմում Լևոնյանը և Բրուտյանը. առաջինը իր գրքում խաղերի հետ տպագրել է նրանց հեղինակների կենսագրուրյութեները, աշուղական տաղաչափուրյան, նվագարանների և մրցումների ամփոփ նկարագրուրյուններ. իսկ Ս. Բրուտյանը բացի խաղերի հավաքումից, տռաջին անգամ ձայնագրել է մի շարք աշուղական եղանակներ, անձամբ երգել տալով իր ժամանակի անվանի վարպետ Զիվանուն:

Աշուղագիտուրյան ո՛չ տեսական խնդիրներով, բայց առանձին աշուղների կյանքի և գործերի ժմենուրյամբ կամ նոր լուսաբանությաններով զբաղվել են Գևորգ Սաստուրը, Լեռն, Գ. Բաշինջաղյանը, Սաշա Օգանեզաշվիլին, Հովհ. Թումանյանը, Սուր. Հարուրյանյանը և Էլի ուրիշներ, բոլորը իրենց եռդվածներին նյութ դարձնելով Սայտք-Նովային: Այդ տեսակի շատ եռդվածներ տպագրվել են մամուլի էջերում և մեր մյուս խոշոր աշուղների մասին: Խոկ ամենից շատ աշուղագիտական խնդիրներով ու տեսական հարցերով զբաղվել է Գ. Լեռնյանը: Նու ծնված լինելով աշուղի ընտանիքում (Զիլանի) մոր կողմից էլ պատկանելով աշուղական սերունդի (մայր՝ քուն էր աշուղ Քյամալու և քույրը աշուղ Զամալու) մասնագիտունից շատ մոտ է եղել Երանց, սիրել է Երանց միջավայրը, տկանատես և ականջալուր է եղել աշուղական երգ ու նվազին ու մրցումներին, հետագայում այս ամենը պահելով իր հիշողության մեջ և օգտագործելով իր աշուղագիտական աշխատուրյունների համար: (Յանկը զբքի վերջում):

Ներկա աշխատուրյան մեջ եղինակն իր նյութը բաժանել է երկու գլխավոր մասի, առաջինի մեջ խոսում է առհասարակ աշուղների և մասնագիտապես հայ աշուղների մասին, երկրորդի մեջ աշխատան արվեստի ուսումնափուրյունն է անում, ցույց տալով խաղների տաղաչափական կանոնները, Երանց բազմապիսի ձևերը, հանգավորումը և շեշտականուրյունը:

Այս նյութերով եղինակն առաջին տնօգում զբաղվել է դեռևս անցյալ դարի 90-ական թվականների սկզբին, ուրիշագույն մի համառոտ նկարագիր տալով 1892-ին լույս տեսած իր «Հայ աշուղներ» գրքի մեջ: Ապա մի տասնյակ տարի անց, նույն նյութն ավելի զարգացրած և լրացրած կերպով տպագրել է «Ազգագրական հանդես»-ում հայ աշուղների մասին իր ընդարձակ աշխատուրյան մեջ («Ազգագր. հանդես» գիրք 10—13): Ներկայումս ցուցադրվող այս ուսումնափուրյունը իր լրիվ բովանդակությամբ և նոր խմբագրուրյամբ ենունանքը և ամփափումն է երկար տարիների իր աշխատանքների:

Աշխատուրյան մեջ զետեղված են նկարչութեան և երաժշտական մի բանի իլլյուստրացիաներ:

Ա. ԱՇՈՒԽՆԵՐԸ



շուղը հասարակական-ժողովրդական բանաստեղծ-երգիչ և նվազածու է Անդըր-կովկասի և Մերձավոր արևելքի ժողովուրդների մեջ:

Առուղ բառը արարական ծագում ունի՝ աւքզ, որ նշանակում է «սիրահար», «տարիածու»: Այդ բառը Թյուրքիայի միջոցով մտել է հայոց լեզվի մեջ՝ աւքզ, աւքզ, հետազայում բնդուճնելով հայացած առուղ ձևը, անցել է ոռւս զրականության մեջ:

Առուղական երգեր և ժողովրդական երգեր (նեղ մտքով) անհամատեղելի են. նրանք բոլորովին տարբեր ստեղծագործություններ են թե ըստ բնույթի և թե ըստ բովանդակության և, որ գլխավորն է, ըստ տաղաչափականն օրենքների. մինչդեռ շատերը, նույնիսկ զրականադեսներ, հաճախ շփոթում են մեկը մյուսի հետ:

Ժողովրդական երգերը (տեքստը) ծնվում են կարծես թե «ժամանակից և տարածությունից գուրսո», այսինքն զժվար է վնաս որոշելը թեկուղ տվյալ երգի ծնունդ առնելու ժամանակը և տեղագրական վայրը, երբեմն միայն հնարավոր է դառնում ենթադրաբար ասել այդ մասին մի խոսք, երբ որ այդ երգը հյուսված է մեղ ծանոթ մի բարբառով կամ թե նրա մեջ անցողիկ կերպով հիշատակված է լինում մի պատմական դեպք կամ աշխարհագրական անուն: Այդ երգերը իրենց նախնական կազմությամբ ծնունդ առնելով որևէ գյուղում կամ ավանում,


աշխատավոր գեղջուկի կամ գեղջկուհու բերանից, իրենց՝ նույն այդ հեղինակների կողմից հարմարեցրած եղանակներով թե են առնում թուզում թե նույն գյուղի և թե հարեան ընակավայրերի երգասեր շրջաններում։ Այդ երգերը հետագայում ենթարկվում են զանազան փոփոխությունների, հարմարվելով տեղական սովորություններին, տեղական տնտեսական և աշխարհագրական պայմաններին, դառնում են կոլեկտիվ ստեղծագործություններ։ Ինչպես սկզբնական տեքստերի, այնպես էլ հետեւյալ փոփոխությունների հեղինակները մնում են անհայտ, իսկ նրանց հավաքական ստեղծագործությունը դառնում է տվյալ ժողովրդի ընդհանուր սեփականությունը, մտնում է փոլկլորի դանձարանը¹⁾։

Ի՞նչ նյութեր են դրադեցրել աշուղներին առհասարակ և մեր աշուղներին մասնավորապես, իրենց խաղերն հյուսելիս, կամ ինչ հարցեր են շոշափվել այդ երգերի մեջ և ինչպես

Ամենից առաջ և ամենից շատ աշուղական գրականության մեջ, մանավանդ անցյալում, մեծ տեղ է բռնել սերը, սիրային երգերը։ Առուղ (աշըդ) բառի սկզբնական նշանակությունն արդարացած ենք տեսնում առանց բացառության բոլոր աշուղների մեջ, ոմանց մոտ ավելի շատ, ոմանց մոտ ավելի քիչ, բայց և այնպես չի եղել մի աշուղ, որի սիրային խաղերը բավական խոշոր թիվ չկազմեն, Այդ տեսակի սիրային հայ աշուղների մեջ առաջին տեղերն են գրավում Նաղաշ Հովնաթանը և Սայաթ-Նովան։ Վերջինիս մինչև այժմ հայտնի եղած 104 հայերեն և վրացերեն խաղերից սիրային են 69-ը։

Մինչ Սայաթ-Նովան իր սիրային երգերի մեջ գաղտնապահ է և կարծես թե աչքի առաջ ունի միայն մեկին, նրա անհասանելի սերով է տանջվում, Հովնաթանը ավելի սեալ է մոտենում կյանքին, նա վայելում է սերը լիառատ կերպով, Հայաստանից Վրաստան է փախել «կանանց դարդեն», իսկ թիֆլիզում նրա մոտ հաճախել են «գողալներ», ծաղիկներ են բերել

1) Այս մասին ավելի ընդարձակ խոսք՝ տես «Հայ ժողովրդական և աշուղական երգերը» մեր հոդվածը, «Տեղեկագիր Գիտ. և Արվ. ինստիտուտի», Երևան, 1929 թ. № 4.



ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ. ԻՐ ԴԱՎԹԱՐԻՑ

«ալ ունդ թղթեր» ուղարկել նրան, ու նա նորից մասձել է «նոր սիրելիների» «նոր նուբարների» մասին:

Ամեն առավոտ կուգաս ծաղկըներով
նման շեմսի զամարա,
Ծով աչքերդ լըցած անդին քարերով
Ռւնքերից վրա կապած հրեղեն կամար ա,

Նշանավոր աշոււղ Շիրինը (1827—57) որ ապրել է ընդամենը 29 տարի, երկու տարեկան ժամանակից կուրացած, նա չի ուզում արեի լույսը, իրեն արեգակ է համարում իր սիրուհուն:

Հոգի ջան, նոր բաց էլած վարդ մանուշակ ես ինձ համար,
Զեմ ուզում լույսն արևու, զուն արեգակ ես ինձ համար,
Անմահական ջրերով լցուն բաժակ ես ինձ համար,
Պատվական մարգարիտով հորինված թագ ես ինձ համար:

Աշուղ Զիվանին սերը հասկանում է անփոփոխ, հարաժամ,
իր ընտրած և հոգեպես կապված անձնավորության հետ, որպես
չափ ընկեր, սիրով և համերաշխ կենակցելու մեջ։ Մեզ չի պա-
տահել ոչ մի գրականության մեջ կարդալ կես զար տեսող սիրո-
մասին այսպիսի տողեր։

Հիսուն տարի ինձ հետ մեկտեղ,
Լուծ է քաշել սիրով, համեղ.
Երգ ձռնեցներ ռադար ու գնդ,
Ելեք, պառավ յարըս եկավ,
Փայլուն անդին քարըս եկավ։

Իսկ ընկեր է եղել ինձի,
Մարմընուս մեջ որպես հոգի.
Նվիրել է վեց հատ որդի.
Ելեք, պառավ յարըս եկավ,
Ապավինս, սարըս եկավ... և այլն։

Քանակական տեսակետից սիրային երգերից հետո հին ա-
շուղների մեջ խոշոր տեղ են զբավում կլրոնա-բարոյագիտական
բովանդակություն ունեցող, ինչպես և խրատական ուսանավոր-
ները։ Աստվածաշնչի, հոգենոր տաղերի ազգեցությունը գեռես
մեծ էր ու շատ զգալի։ Բիբլիական սյուժեներ՝ Սղամ, Եվա, Աղ-
քատ Ղազար, Սողոմոն իմաստուն, Հոբ երանելի և նման ֆի-
դուրաներ զարդարում էին աշուղական խաղերի գրեթե ամեն մի
քառյակը։ Ու երբ այդ խաղերի հեղինակները «աշխարհեմեն բե-
զարում» էին, քարոզում էին միջնադարյան միտիկ կրոնա-
վորների պես քաշվել մի վանք, իրենց չգործած մեղքերը քա-
շելու։

Կու հագնիմ մազեղեն, կու հագնիմ շալն,
Կերթամ ու ման կուզամ, վանքիրն մե-մեկ։

Եվ եղել են աշուղներ, որոնք այզպիսի մտայնությամբ
տալրել են մինչև անցյալ դարի կեսերը և ավելի ուշ, ինչպես
աշուղ Խվան, Հավես, Մալուլ, Շայթի...։

Աշուղական գրականության մեջ երբորդ տեղը բռնում են
հեղինակների՝ իրենց ժամանակում պատահած նշանավոր դեպ-
քերը նկարագրող գաստանները։ Երկրաշարժ, հեղեղ, մողեխ,

պատերազմ, ոռվ և այլն, ունեցել են իրենց ականատես արձաւագրողները մեր անցյալ աշուղների կողմից: Նշանավոր են 1679-ին Երևանի երկրաշարժը նկարագրող աշուղ Սաֆար-Շղլու, 1795-ին Աղա Մահմեդ խանի կողմից թիֆլիսի ավերման ականատես Շամչի Մելքոնի, 1840-ին Ակոսիի կործանումը ողբացող Աղբար Աղամի և 1877-ի ոռւս թուրքական պատերազմի Կովկասյան ճակատի կոփիլսերը նկարագրող աշուղ Զիվանու դաստանները:

Երգերի այս խմբին պետք է միացնել աշուղների և այն դաստանները, որոնց մեջ նրանք նկարագրական գովք են առում իրենց սիրելի որևէ վայրի՝ քաղաքի, գյուղի կամ անցյալում հայտնի պատմական-կրոնական տեղի: Գովքեր կան, օրինակի համար, նվիրված Երևանին (Նաղաշ Հովհաննեան, Միսկին Բուրջի, Զիվանի և ժամանակակից աշուղներից՝ Հրկեղ), եզմիածնին (Քիչիկ-Նովա, Միսկին Բուրջի, Քյանհան և այլն), Աշտարակին (Քյանհան), Մողնուն (Սայաթ-Նովա), ու Կարսպետին (Յաղուը Օղլի և ուրիշները), Օշականին (Լաչին), Թիֆլիսին (Շամչի Բալե), Թելեթին (Շամչի Մելքոն), Հաշտարիսանին (Մայիս), Էրզրումին (Զիվանի) և այլն:

Այստեղ պիտի հիշենք մեր աշուղների և այն դաստանները, որոնք դրված են ընդդիմախոսաբար, գիտակի ձևով. նրանք խոսեցնում են միմյանց հետ մեջնդմեջ (մի մի քայլակով) երկու անձնավորություն կամ գաղափարներ, սովորույթներ, ապա վերջում նրանցից մնկը հաղթող է հանդիսանում կամ հաշտվում են մի ելակետի հանգելով: Այդպիսի գաստաններից հիշենք «Քաղաքացին ու գյուղացին», «Աղապն ու կարգածը», «Հոգին ու մարմինը», «Շնորքն ու բախտը», «Պատն և ուտիսը» և այլն:

Չորրորդ տեղն իրենց քանակով հայ աշուղների գործերի մեջ գրավում են այն երգերը, որոնք բովանդակում են հասարակական-սոցիալական մոտիվներ: Նկատելի է, որ 19-րդ դարի կեսերից զգալի կերպով պակասում է ինչպես կրոնաբարոյական, այնպես էլ սիրային երգերի թիվը, նրանց տեղ հանգես են գալիս օրվա չարիքի, կյանքի մեջ եղած անհավասարության, հարուստի և չքավորի, զրկողի և զրկվածի մասին նոր երգեր. ամելայն նկատելի չէ բողոքի ոչ մի շեշտ, այդ անհավասարու-

թյան պատճառների քննության ոչ մի փորձ, թէ ինչպես է ու
անգութ աշխարհը

Մինին ողորմել ա, տվել ա նասիր,
Մինին հուալ ա տվել, թողել ա քասիր:

Աշուղի մտածողությունից հեռու լինելով չարիքի արմատա-
ները գտնելու փորձը, նա այդ բոլորը վերագրում է բախտին,
ֆալագին:

Աշուղ Թուրքինջն այնքան է հուսահատվում իր ժամանակի-
«վատ տարիներից» որ ուղում է նույնիսկ անձնասպանություն-
գործել—

Թուրքինջն եմ զարդի արբար, չեմ իմանում թե ինչ անեմ,
թե լինի լոխման հերիմ, եւ շահ չունի գանգատ անեմ.

Չի կարելի սուր քաշեմ, ինքո ինձի տամ սպանեմ,

Չեմ էլ մեռնում պրծնեմ, ցափի ձեռքից բանդիվան եմ...

Աշուղ Զարգյարը տեսնում է փողի ույժը, տեսնում է թե-
ինչպես ամենքը գլուխ են խոնարիում մարդկային ոչ մի ալ-
ժանիք չունեցող, ընդհակառակը, ուրիշին զրկող ու հարստու-
թյուն դիզող աղային, Սունդուկյանցի պատկերած Զիմզիմով-
ներին, ու ահա գալիս է այսպիսի եզրակացության:

Եթե մի էշ փողոց տանիս, մանուցանես նրան մենակ,
Չուլըն ապրչումից լինի, փալանն մահուգից բարակ,
Իսկույն նորան կու անվանեն պատվելի պարսն ավանակ,
Եթե տեսնեն շալակն է լքցրած տոպրակն փողի...

Հասնում ենք 70—80-ական թվականները: Կովկասյան-
իրականության մեջ հայ առևտրական կապիտալն սկսել էր ուռ-
անաւալ, գրա հետ և զուգընթաց զգալի զարձնել հասարակության-
գասակարգային շերտավորությունները: Մամոււ թատրոն, դպրոց-
ների ցանցի համեմատական մեծացում, զալիս էին նոր հով-
մացնելու ընթացիկ կյանքի մեջ: Մյուս կողմից՝ տեղի էր ու-
նենում մի տեսակ «ազգային զարթոնք»: ոսւսթուրքական
«ազատագրական» պատերազմը, Բենլինի գաշնագրության չա-
րաբաստիկ 61-րդ հոդվածը, Բաֆֆու՝ այդ ժամանակներում մի-
մյանց հետեւից լույս տեսնող հայրենասիրական վեպերը, Գա-

մառ Քաթիպայի «Ազատ երգերը», այս բոլորը խթան էին հանդիսանում հայ քաղըենուն, մանր առետրականին ու սակալվաթիվ մտավորականության միտքը զարգացնելու ու նրանց «եկեղեցական համայնքից» գարձնելու «ազգ», քաղաքական իմաստով:

Ճիշտ այդ ժամանակներում Շիրակում հանդես է գալիս մի երիտասարդ զյուղացի աշուղ՝ Զիվանին, որ չէր կարող իր երգերի մեջ նյութ չդարձնել հասարակական սոցիալական քաղաքական խնդիրներ, չզբաղվել «հայ ազգի վիճակով»: Սակայն այս աշուղի՝ ազգային խնդիրներին նվիրված երգերի մեջ նկատելի է մի դրական տենդենց, և այդ այն է, որ այնտեղ չկան ռազմաշունչ, ամպրոպային, հոխորտացող տողեր, նա իր ազգը չի գերազանում ուրիշ ազգերից, նրա կարծիքով «ողջ ազգերը մեկ թաղարի ծաղիկ են», որ ունին տեսականութեակ գույներ, որ նրանք «հասակներով տարբեր մեծ ու փոքրիկ են» և ունին ջոկ-ջոկ հատկություններ:

Ես սիրում եմ մերձավորիս, բայց չեմ ատում օտարին,
Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ իր քարին,
Թե օտարը ինձ չձնչե, մեկ վաս չհասցնե,
Չեմ կամենալ մինչեւ անդամ օտարը հանդիպի քարին...

Բայց նա տեսնում է որ այդ ազգերի խաղաղ համակեցության արգելակներն «աշխարհի հզորներն են», անկախ նրանց ինչ ազգության պատկանելուց:

Հզորները խեղճերուն խորտակել են,
Ազահները ամեն մի զուռ փակել են...
Ով հզոր է, նա է հարուստ գործավար,
Բայց խեղճ աղքատն է միշտ հողին հավասար...
Մարդիկ կխեղճանան զրկելով իրար,
Բնականից աղքատություն չկա, չէ:

Ահա այն խոշոր տարբերությունն այս շրջանի աշուղի մտածողության, նըա նախորդների «բախտի» հասկացողության միջև: «Բնականից աղքատություն չկա» և եթե կյանքում նա կա, գրա պատճառը «հզորներն» ու «ազահներն» են, ի հարկե այս պարզ ճշմարտությունը մեր օրերում և մեր երկրում գիտե

ամեն մի աշակերտ, բայց երբ նկատի առնենք, որ այս և այսպիսի շատ երգեր գրված են մեզանից 60—70 տարի առաջ ու երգված հրապարակով, մենք պետք է միանգամայն նշելի համարենք այդ արթնացման փաստը:

Աշուղն ըմբռնել է, որ հարուստները ձեռք ձեռքի են տը-
ված, կազմակերպված են հանդեպ չքավորների, ուրիմն պետք է
որ չքավորներն էլ կազմակերպվեն, որ «մեծ ուժ դառնան»:

Հարսւստները մեկը մեկին ձեռք տված,
Դարձել են բռնակալ աշխարհահալած...
Անխնա վաշխառան և հարավիկ գողը
Խել են աղքատի ձեռքից իր հողը:

Եվ թող—ասում է Զիվանին—

Հարազատ տերերն իրանց հողերուն պահապան գառնան,
Տկարները մեծ ուժ կազմեն, իրազու հետ թող միանան:

Ու երազում է աշուղը, թե կդա այն օրը, որ՝

Ոչ տեր լիներ և ոչ ծառա աշխարհում,
Այսպես երջանիկ օր պիտի դամ արդյոք,
Բոլոր մարդիկ սիրեն եղբոր պես իրար,
Լեռ, բլուր, գաշտ ու ձոր գառնան հավասար,
Հարթող գութան, արոր պիտի դամ արդյոք...

Աշուղ Զիվանին չմնաց մենակ իր այդ մտքերի քարոզով՝
նա որպես իր ժամանակի հայ աշուղների կենարհնական դեմքը՝
ունեցավ իր հետեւողները:

Ահա միայն մի օրինակ աշուղ Զամալուց. նա արդեն հաս-
նում է այն եղբակացության, որ՝

Աշխարհում ամեն բան փոփոխական է,
Իսկ աշխարհն անփոփոխ կա ու կմնա,
Լույս չտված սպասելը զուր բան է,
Խավար ու մութ միտքը կա ու կմնա:

Փողովրդին ասաջնորդող չլինի,
Հասկացնող, բացատրող չլինի,
Զըկված դասին հեղաշրջող չլինի,
Զըկողը ճոփ, փարթամ կա ու կմնա:

Զամալի, միշտ պետք է խոսել, քարոզել,
Աշխատավոր մարդկանց միտքը բաց անել,

Իւանի նա յուր արժեքը չկ ճանաչել,
Խեղճ, թշվառ, ոտնակոխ կա ու կնաա:

Հինգերորդ տեղը գրավում են, այսպես ասած, աշուղինարձակողական երգերը, բացահայտ կամ երգիծաբանորեն, հեղնանք, խարազանում, նույնպես փոխաբերաբար կամ այլաբանորեն, և հասարակական բացասական երևոյթների ու գեմքերի ծաղրում: Այսպիսի երգերից են Շամշի-Մելքոյի «Տալավրեցի շուն Առաքելը», նույն աշուղի «Խարազ Զալին», Աղբար Աղամի «Փիս Մահուդը» և վերջապես Զիվանու հանրածանոթ «Խելք աշեցեք»-ը:

Վեցերորդ տեղն աշուղական երգերի մեջ մենք տալիս ենք այն ոտանավորներին, որոնք նյութ ունին իրենց հեղինակների անձնական անհատական կյանքը. «աշուղը ինքն իրեն», իրդասն ու չարքաշ վիճակով, աշխարհից և միջավայրից գանգատով ու տրտունջով: Քիչ չեն այդ տեսակի երգերը, որովհետև աշուղների մեծագույն մասի կյանքը եղել է չարքաշ և աստանդական:

Յոթերորդ և վերջին տեղը տալիս ենք աշուղական այն տեսակի երգերին, որոնք մտքեր են, դատողություններ, եղբակացություններ՝ աշխարհի, կյանքի մասին: Այստեղ ևս խոշոր չափով հանդես է դալիս նրանց աշխարհայացքի ծավալը, դրսեվորվում նրանց իմաստասիրության և մտքի խորության չափը:

Իժբախտաբար շատ սահմանափակ է նման երգերի թիվը՝ աշուղներից շատ շատերը չունին այդպիսի և ոչ մի ոտանավոր: Հին աշուղներից միայն մի քանի երգ ունին Սայաթ-Նովան («Աշխարհ մե փանջարա է», «Բեղասլին որ խոսեցնիս»), Շիրինը («Երեկը ինձ այսօր թվում է երազի նման»), Մալյուլը («Սիրաս նվազել է») և այլն: Իսկ անցյալ դարի վերջին քառորդից մեր աշուղների մտավոր հորիզոնն անհամեմատ ափելի ընդարձակելու հետևանքով, այդ տեսակի խաղեր ավելի շատ են երևում: Զիվանին, օրինակի համար, նման երգեր ունի մի քանի տասնյակ, որոնց մեջ առանձին հոչակ է ստացել «Զախորդ օքերը»:

Իրենց սոցիալական ծագումով նաև աշխատանքի վայրով աշուղները բաժանվում են հետեւալ կարգերին.

Ա. ԳԱԼԱՏԱԿԱՆ ԱՇՈՒՂՆԵՐ — Ապրում էին օսմանյան սուլ-
թանների, Իրանի շահերի և Վրաստանի թագավորների պալատնե-
րում կամ Փեղալների և իշխանների ապարանքներում։ Արև-
մտյան եվրոպայի միջնադարյան բարգերի նման նրանք էլ գո-
վերգում էին իրենց տերերի «առաքինությունները» կամ պա-
լատական գեղեցկուհիների նազանքը, երգում էին նաև «աշ-
խարհի ունայնությունը» որպեսզի կարողանան մասամբ մեղ-
մացնել գորոդ իշխանագորների փառասիրությունը։ Թյուրքիա-
յում 16-րդ դարից հայտնի են մի շարք բարձրաստիճան էֆենդի,
բեյ, նույնիսկ փաշա աշուղներ, որոնք շատ հարգելի անձնավո-
րություններ էին ճանաչված փադիշահների և պալատական
մեծամեծների համար։ Նրանք հորինում էին փիլսոփայական
տեխնիկանցներ ունեցող երգեր և մանավանդ, սիրո երգեր։ Հոչա-
կավոր Ֆուզուլին (մեռ. 1562 թ.) որ պալատական մեծ աշուղ-
բանաստեղծ էր Սուլեյման I-ի (1520—1566) պալատում և ստա-
ցել էր «սուլթան ել շուտարա» (բանաստեղծների արքա) պատ-
վանունը, Մահմուդ I-ի օրով (1730—1754) Նարի էֆենդին, և
սուլթան Մեջիտի օրով (1839—1861) Քեշիշ Օղլին (հայ) իրենց
բարձրորակ երգերով հայտնի են ամբողջ Մերձավոր արևելքում։
Նմուշի համար մենք հայերեն փոխագրությամբ առաջ ենք բե-
րում Ֆուզուլու և Քեշիշ Օղլու երգերից մի մի հատված, սիրա-
հարական և իմաստաօիրական, ցույց տալու համար, նրանց
բարձր, հանդիսավոր ոճը, որ զգալի է նույնիսկ թարգմանու-
թյան մեջ։

Յ Ո Ւ Զ Ո Ւ Լ Ի

Նա է աշուղ, ով տալիս է կյանքը իր սիրեկանին,
Թող չսիրե նա ոչ ոքի, ով ներհակ է պայմանին,
Կյանքը իր սիրուհուն տալն է մեծ շնորհը աշուղին,
Կյանք չտվողը թերի է, չի սիրում իր զեղանին,
Սեր քաշելը սիրահաը թող սովորի թիթեսից,
Լույսը սիրելու համար զոհ է գընում վառարանին,
Կյանքը իր սիրածին տալու թող ոչ ոք չտվարծենա,
Այդ բանը վայել է միայն Ֆուզուլու աստիճանին։

(Թարգմ. Զիվանի)

ମୁଖ୍ୟମନ୍ତ୍ର ଓ ଅଧ୍ୟାତ୍ମିକ ପଦିଷ୍ଠାନ

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତପ୍ରକଳ୍ପ

ପରିଚାରିତ ପରିପ୍ରକଳ୍ପ ପରିପ୍ରକଳ୍ପ



A 30298 - 5387

Թիրտս ամեն ժամ միակերպ ուրախ այսպես չի մնա.
Մի օր անշուշտ կը հոգնի, վառ սերն այսպես չի մնա.
Առավոտյան հովասուն զեփյուռն այսպես չի մնա,
Հաստատագույն երկնքի շրջանն այսպես չի մնա,
Կոչնչանա աշխարհը լույս, մութն այսպես չի մնա.
Չորս տարեքաց գոյության վիճակն այսպես չի մնա...»

(Թարգմ. Հմ. Վ. Արշակունի)

Բայց այն աշուղները, որոնք սոցիալական ծագումով պատկանում են «առողին» գասերին և պալատական աշուղ են դարձել միայն իրենց արտակարգ ընդունակությունների շնորհիվ՝ այդպիսիները, չնայելով որ նույնպես մեծ հարգանք են վայելել բարձր գասերի կողմից, չնա քաշվել երբ հարկ է եղել, պարզ կամ ալեքորիկ կերպով ծաղրել իրենց տերերի թերությունները։ Հանձարեղ Սայաթ-Նովան (18-րդ դար), Վրաստանի երեկոյին թագավորի աշուղը և սաղանդարը իր վրացերեն երգերի մեջունի այնպիսի համարձակ տողեր ուղղված թագավորի և Վախթանգ արքայորդու դեմ, որ միայն պատիվ կարող են բերել իրեն։

Նա թագավորին ասում է—

Թող ինձ աղատ, վաս մարդ լինել չեմ ուզում,
Այս աշխարհում փարթամ ապրել չեմ ուզում,
Թեզ մոտ մի վաս խոսք տաելը չեմ ուզում,
Ես ռամբի եմ, իշխան դառնալ չեմ ուզում։

Գրիգորիի «Սայաթ-Նովա» երգ 20-րդ

(Թարգմ. Գ. Մուրադյանի)


Իսկ Վախտանգին ուղղած երգի մեջ, աշուղը նրան փոխարքերաբար անվանում է «հասարակ շուշա» ոսկի շրջանակի մեջ՝ իսկ իրեն ալմաստ։

(Նույն տեղ, երգ 1)

Բ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՇՈՒՂՆԵՐ—Այս կարգի աշուղների մըշտական քնակության վայրերը եղել են կենտրոնական կամ գավառական քաղաքները։ Նրանք իրենց երգ ու նվագով և մրցություններով հանդես էին գալիս տեղական արևելյան տիպի սըր-

ԱՀԱՐԱԿԱՆ ԱՐՁԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՅ

Գ. ԲՐԱՅՏ



ճարաններում (դայթախանակամ, ուղղակի՝ դայթա) մոտ երկու մետր բարձրություն ունեցող էստրադաների վրա ծալապատիկ նստած, բազմամբով հասարակության առաջ: Ամեն օրճարան ուներ իր մշտական այցելուները, մանր առևտրականներ, արհեստավորներ և բանվոր-աշխատավորներ: Քաղաքի աշուղներն ունեին իրենց անսամբլները կազմված 3 կամ 4 հոգուց, տարբեր տեսակի նվագարաններով (սապ, քյամանի, սանթուր և դափ) և կցված այս կամ այն սրճարանին: Այս անսամբլների մեջ ավագ վարչետը զեկավարում էր երգ ու նվագը և նրա անունով էլ կոչվում էր տվյալ երգչախումբը: Իսկ տվյալ քաղաքի բոլոր աշուղներն ունեին իրենց արհեստակցական միությունը, որն ուներ իր կանոնագրությունը և իր վարչությունը գլխավորությամբ ամենի կողմից քվեարկությամբ ընտրված արհեստավետի, ուստաբառու: Վարչության կից կար փոխառու դրամարկղ, որի եկամուտը գոյանում էր անդամների ամսավճարներից: Իրենք աշուղները մշտական, որոշակի եկամուտ չունեին, այլ բավականանում էին սրճարանի այցելուների: Կամավոր և պատահական նվիրատվություններով, մեկ էլ հարսանիքներին, խնջույքներին, ուր հրավիրվում էին երգելու և նվագելու: Մենք այսուեղ նույնությամբ առաջ կրերենք մեր տրամադրության տակ եղած երկու փաստաթուղթ, որ վերաբերում էն Ալեքսանդրապոլի (Լենինական) արհեստակցական միության կազմակերպչական գործերին անցյալ դարի վերջում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՏԱԲԱՇՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Հազար ութհարյուր ինսուն և մեկ թիվ 15 փետրվարի
Ալեքսանդրապոլ քաղաք

Մենք ի ներքո ստորագրյալներս, Ալեքսանդրապուրմ գտնվող աշուղներս փոխադարձ համաձայնությամբ մեր միջից ընտրեցինք արհեստավորաց գլուխ (ուստաբանշի) պ. Մերովե Ստեփանյան Լեռնյանին—Զիվանի և նրա երկու օգնականներ Համբարձում (Համբո) Աղամյանին և Գրիգոր (Գոգոր) Տալյանին: Նմանապես ընտրեցինք մեր մեջ հավաքված գումարի համար գանձապահ՝ Անտոն Մահտեռի Հովհաննիսյանին, նույնպես ուստաբաշու հրամանները կատարելու համար Մուշեղ Մելքոն-

յանին. Մենք պարտավորվում ենք կատարելու մեր ընտրելիների բարի խորհուրդները, որի համար և ստորագրում ենք:

(Հետևում է 18 ստորագրություն և վերջում՝ ի հաստատություն այս արձանագրության, ուստաբաշու՝ աշուղ Զիվանու ստորագրությունը):

Հստ երևոյթին Ալեքսանդրապոլի աշուղների ընտրական ժողովի այս արձանագրությունը գավառական իշխանության կողմից հավանության չի արժանացել և հետևապես պաշտոնական հաշվառման չի ենթարկվել. այդ պատճառով ուղիղ մի տարի անց կարգադրվել է նոր ընտրություն կատարել, արձանագրությունը կազմել հայերեն և ուսւերեն լեզուներով և տակ իշխանության հաստատման:

Ահա երկրորդ ժողովի արձանագրությունը.

МИРСКИЙ ПРИГОВОР

1892 года февраля 24-го дня мы низеподписавшиеся Азиатские музыканты гор. Александрополя собравшись сего числа на сходке для подтверждения порядка в нашем цехе единогласно избрали из среды себя старосту (уставаш) одногорожанина нашего Серовба Степановича Дживани (Левонян) и кандидатов по нем Амбарцума Адамова и Антона Антонянца, которые обязуются подчиниться во всем правилам закона в чём и подписуемся, гор: Александрополь.

ՀԱՄԱԽՈՍՏԱԿԱՆ ՎՃԻՌ

1892 ամի 24-րդ օրն փետրվարի, մենք ներքո ստորագրյալներս ասիական երգիչներս Ալեքսանդրապոլ քաղաքի հավաքածներս, այսօր ժողովում, մեր արհեստականության մեջ կարգապահություն վերականգնեցնելու համար ընտրեցինք մեր միջից արհեստավորների գլխավոր (ուստաբաշի) մեր համաքաղաքացի Սերովի Ստեփանյան (Լևոնյանին) Զիվանի և նրա օգնականներ Համբարձում Ադամյանին և Անտոն Անտոնյանցին և մենք պարտավորվում ենք օրենքի բոլոր կանոնների համաձայն հնապահդատների:

Առ որ ստորագրենք ի. ք.
Ալեքսանդրապոլ:

(Հետևում է 25 ստորագրություն, որոնց մեջ ճանոփաշուները Մկրտիչ Տալյան (Զամալի), Վարշամ Տրդատյան (Պայծառ), Գրիգոր Տալյան (Շերամ) և Ֆիզահի:

Այս «համախոսական վճիռը» ներկայացված է երկրորդ քաղմասի պրիտավին, որն իր կողմից նույն թվի մայիսի 22-ին հատուկ մակագրությամբ ուղարկել է իր օգնական Մկրուչինսկուն «ամենախստիվ կերպով» (տպատելիություն օբրազու) ստուգման ենթարկելու: Վերջինս իր պարտականությունը կատարելուց հետո, հունիսի 2-ին վերադարձնում է պրիտավին, իսկ առ ել հուլիսի 2-ին ուղարկում է գավառական ոստիկանական գարչության: Այսքանով դեռ չի վերջանում գործը՝ գավառապետը հուլիսի 30-ին մի հատուկ գրությամբ (նո. 1359) համախոսական վճիռն ուղարկում է քաղաքի գեղուտատաներին, որոնք իրենց կողմից հաստատում են ընտրությունը և ստորագրում հուլիսի 31-ին (նո. 262):

Նշելի է այն, որ ցարական իշխանություն պաշտոնյաներին ճանոփ չի եղել առուղ բառը, կամ չեն կամեցել ընդունել, այս բառի տեղ գրել են ասիական երածիուներ, իսկ հայերեն թարգմանության մեջ գրվել է ասիական երգիչներ:

Աշուղական պրոֆմիության կանոնադրության համաձայն եթե ավյալ քաղաք գային այլ քաղաքի աշուղներ, նրանք իրավունք չունեն իրենց երգ ու նվազով հանդես դալ հասարակության մեջ, մինչև որ անզական ուստարաշու թույլտվությունը չստանային և միության դրամարկղը չմուծեին երեք ամսվա անդամավճարի չափ մի գումար:

Քաղաքային վարդեատ աշուղներն, իրենց մոտ աշակերտ էին առնում պատանի, սկսնակ աշուղների, որոնք միշտ մանէին գալիս իրենց վարպետի հետ, ձեռքում ունենալով նրա սազը, կամ քյամանին, լսում էին նբանց երգ ու նվազը, հյուռում էին պարզ, անպանույն երգեր, անպատճառ աշուղական տաղաչափությամբ, որի ձեկրին ժամանակի ընթացքում ընտելանում էին շատ լսելով կամ կարգալով վարպետ աշուղների երգերը: Երբ չորս հինգ տարի անցնելուց հետո, աշակերտը վարպետի կոչում ստանալու համար իրեն համաձայնությամբ դիմում էր բավարար չափով պատրաստ, նա իր վարպետի համաձայնությամբ դիմում էր ուստարաշու, ինդիմում իրեն քննության ենթարկելու: Վերջինս

քննության օր էր նշանակում քաղաքի այն սրճարանում, ուր ժրգում ու նվազում էր նրա վարպետը: Նշանակված օրը և ժամին, ցերեկով հավաքվում էին քաղաքի վարպետ աշուղները, միության նախագահի կամ



ԱՇՈՒՂՆ. ՆԿ. Ա. ՁԵԹՎԱԾՑԱՆԻ

ուստաբաշու գլխավորությամբ: Ալսվում էր քննությունը: Քննվող երիտասարդը սրտի տրոփյունով հանգես էր գալիս պատասխանելու աշուղական արվեստի խնդիրներին վերաբերյալ տված հարցերին: Այնուհետև նվազում և երգում էր որևէ արեւելյան եղանակ, ցույց տալու իր շնորհքը և պատրաստությունը նվագի և երգեցողության մեջ: Երբ այս բոլորը հավանություն էր գտնում վարպետների կողմէց և նա արժանանում էր նրանց խրախուսական խոսքերին, այն ժամանակ ուստաբաշին կանչում էր նրան իր մոտ և երեսին մի ուժեղ

ապտակ հասցնում, առաջին անգամ նրան կոչելով վարպետ: Երիտասարդ վարպետը նախ համբուրում էր ուստաբաշու ապա և իր վարպետի ձեռքը ու խորը զլուխ տալով շնորհակալություն հայտնում ներկա եղող մյուս վարպետներին: Այն ժամանակ նոր վարպետին ընդունում էին միության մեջ, պատրաստում էին նրա վկայականը քննությանը մասնակցող բոլոր վարպետների ստորագրությամբ: Մենք այսակը առաջ կբերենք այդ տեսակի վկայականներից երկուսը, որ գտնվում են մեր անձնական արխիվում: Առաջինը տվել է անվանի աշուղ Շիրինը 1850 թվին, Թիֆլիսում իր աշակերտ Մավլանթիին, երկրորդը՝ հայտնի աշուղ Ֆիզահին իր աշակերտ Ֆերյատուն 1884-ին Ալեքսանդրապոլում:



ՇԻՐԻՆ

Նկար Գ. ԱՐՈՒԵՏՅԱՆԻ

Ի ներքո ստորագրյալ Վաղարշապատու բնակիչ՝ Շիրին
Մահտեսի Կարապետյանցո, ընկալյալ էի աշակերտ Սարգիս
Եղիզարավին շնորհակալուրյամբ մեկ զմեկուց լրանալով ժա-
մանակն իմ եռժար կամակն օրինուրյամբ աստուծու ներքո
ստորագրողաց վկայուրյամբ ուստա օրինեցինք և ետունք
նմա մեկ վայելուչ մախստա, այսինքն անուն աշուղուրյան որ
է Մալբութի, կիչանակն կտառարյալ, տատված կատարելու-
րյան շնորհեց տա տն'ամոք և շնորհալի ամենայն տեղի և
բարի բախտավոր պահպանի խոնարհուրյամբ, երե ինչ քե-
րուրյուն ունի, աստված լցուցանե, վտան որո սույն պատ-
ճառով տամ այս օրինուրյան գիրն ոչ ոք չինի հակառակ
հարցնելու դրա աշակերտելու կամ օրինվելու:

ՇԻՐԻՆ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐՈՊԵՏՈՎ,
(Ստորագրված է կարմիր թանաքով)

(Հետեւում է 9 ստորագրություն, որոնցից երկուսը վրա-
ցերեն, վերջին ստորագրությունը Թղաջան ուստաբանի:

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Ի հազար ուրն հարյուր ուրսունը չորս ամի 18 ապրի-
լի Ալեքսանդրապոլում.

Ես ի ներքո ստորին ստորագրյալս Ալեքսանդրապոլի
բնակիչ Գեորգ Կարապետյանս (աշըն Ֆիզահի) տալիս եմ
զայս վկայականս ուսւյն գալաքի Դիրեքլար զյուղի բնակիչ
Խաչատուր Գեորգյանին առ այն զի, նա ծառայելով ինձ
մոտ աշուղուրյան արիստին—Խավատարմուրյամբ, այժմ
սովորած լինելով, տրժան համարեցինք ուստա հանել և
ներկա եղյալ ի ներքո գրյալ վարպետների հետ օրինեցինք
մեր ասնաֆական կարգով և տվինք աշուղուրյան մախստ
աշըն—Գերյատի: Այլ և խնդրում ենք ամենակարողն ասո-

Վածտասցե շնորհ, ხամեստության և բարի անուն ի պարծանույուր և մեր արենստավորաց ամեն:

Առ որ ստորագրեմք.

Գեվորգ Կարապետյանց—աշըդ Ֆիզաեկի

Սերովիք Լեվոնյան—աշըդ Զիվանի

Մկրտիչ Տալյան—աշըդ Զամալի

Կարապետ Կարապետյան—աշըդ Զահրի

Լեվոն Լուսավորչյան—երգիչ

Հարուրյան Հաշոյան—երգիչ

Ներկա Եղյալ Խաչատրուր Քահանա Քյալաշյանց

ԱՅԻFF

Քահանայի

Քաղաքային աշուղներն իրենց քաղաքներում մնում էին ոչ մշտապես: Նրանք անսամբլներ կազմած գնում էին մոտավոր՝ և հեռավոր քաղաքներ ու ավաններ իրենց ելույթներով, իրենց երգ ու նվագով լսելի գառնալու այնտեղերի աշխատավոր դասերին, հայրենիքից պանդխտության մեջ գտնվող զարիբներին: Աշուղներն այնտեղ էլ գովում, գովերգում էին ազգային և հասարակական ազնիվ գործիչներին և անվախ կերպով ծաղրում, խարազանում ժողովրդի ցեցերին, անարժաններին: Նրանք չէին վախենում, որովհետև կորցնելու ոչինչ չունեին. մի անկապտելի և անբաժան սեփականություն ունեին նրանք, դա իրենց սազն էր, իրենց հոգու և որտի ընկերը:

Ահա ինչպես է նկարագրում անվանի աշուղ Զիվանին իր մի երգի մեջ աշուղի թափառական կյանքը.

Ասթև թաճիկ է աշուղը,

Այսօր այստեղ, վաղը այլ տեղ.

Դարձող ճախրիկ է աշուղը

Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մերթ կիսարադց, ծարավ, պապակ,

Մերթ անհաջող, մերթ հաջողակ,

Թափառում է նա շարունակ,

Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մի տեսակ լուսատութիկ է,

Լուը տաշածող մունետիկ է,

Հողմից հալածված ամպիկ է,
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:
 Զուր հույսերով խարխափում է,
 Գյուղեր, քաղաքներ չափում է,
 Կայծակի նման խփում է,
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:
 Զիվան, մի տեղ դադար չունի,
 Մեղմի պես միշտ կթռչկոտի,
 Այս ընթացքով պիտի մեռնի,
 Դուզե այստեղ, զուցե այլ տեղ:

2



ՋԱՄԱԼԻ

ԶԻՎԱՆԻ

Աշուղ Զամալին, Զիվանու քանի տասնյակ տարիների
 մտերիմը և բախտակից ընկերը, ոչ պակաս զգայուն տողեր
 ունի հայ աշուղի մասին, նա երգել է այսպես.

Մշտական քու ազգիդ ցավը դու երգեցիր, հայ աշուղ,
Մելամաղձիկ, տխուր ձայնով զեղպեղեցիր, հայ աշուղ,
Մրտիդ խորքից ախ քաշելով, հառաչելով տխրագին,
Շատ քարացած, անզգա սիրտ փափկացուցիր, հայ աշուղ:

Վատերին միշտ մտրակելով, լավերին միշտ գովելով,
Դեպի լավը, զեպի բարին գրզուցիր, հայ աշուղ:
Երբ վիճակվեց Խղճուկ հային հեռու տեղեր ցըգելու,
Ազգիդ հետքից շատ երկրներ թափառեցիր, հայ աշուղ:


Հուսահատված, կորչելու մոտ, հայի սառած սրտերը,
Ոգեորիչ, հուսու երգով նորոգեցիր, հայ աշուղ:
Բայց քու կյանքդ շատ չարքաշ է փորձով գիտե Զամալին,
Անհայտության մեջ ու զրկված թառամեցիր, հայ աշուղ:

Քաղաքային աշուղներից նստակյաց կյանք էին վարում
Նրանք, որոնք աշուղական արվեստով պարապելուց զատ ունեին
և իրենց որևէ արհեստը, այսպիսիներից հիշվում են զերձակ
(Խայաթ), ոսկերիչ (Զարդյար, Նիրանի), կոշկակար (Ազբար
Շղամ), մոմագործ (Շամչի Մելքոն), քարտաշ (Թուրինջ) և այլն-
նրանք անսամբլներ չունեին, այլ մենակ էին հանդես գալիւ-
ընտանի հավաքույթներում, տոնական խնջույքներում, նվա-
գում ու երգում իրենց սեփական աշխատությունները, Կային
և այնպիսիները, որոնք ավելի համբավ էին ստացել որպես
ասացողներ (сказители), նրանք պատմում և արտասանում էին
թեթև ժանրի պատմվածքներ, ոտանավորներ և անպատրաստից
կաղմված քայլակներ, զանազան ծանոթ անձնավորությունների
մասին:

Պատմող և ասող աշուղներին են պատկանում և նրանք
որոնք երկուսով ելույթներ էին ունենում բացօթյա, եկեղեցինե-
րի և քարվանսարաների բակերում, հրապարակներում և խաչա-
ձևող փողոցների անկյուններում, պատահաբար հավաքած
մարդկանց համար պատմելով արևելյան սիրավեպեր, ինչպես
աշուղ Ղաքիր, Քյարամ և Ասլի, Քյորողի և այլն: Այս հրապա-
րակային ելույթները փոքր ընդհատումներով տևում էին 2—3
ժամ, աշուղներից մեկը սազը պարանոցից կապած անց ու-
ղարձ անելով շրջան կազմած ունկնդիրների միջև մեծ ոգևորու-
թյամբ ժաղիտն երեսին, հաճախ ոտքը գետին խփելով պատմում

प्रकाश लाल

उमा पुस्तक




Էր վեպը կամ ճեքիաթը՝ Երբ հասնում էր այն տեղերին, որ պետք է երգվի, առաջ էր գալիս մյուս ընկերը և երդում իր սազի նվազակցությամբ։ Դիալոգների ժամանակ նրանք կանգնում էին դեմ առ դեմ և մեջ ընդ մեջ խոսում կամ երգում։

Քաղաքային աշուղների կարգին են պատկանել անցյալում
նաև, այսպես ասած ծագրախոս աշուղները, նրանք հագնվում
էին ալ կապա, կարմիր զլիսարկ, անսպասելի կերպով հայտնվում
էին ընտանեկան կամ հասարակական խնջույքներին, հարա-
նիքներին, զանազան ծաղրական շարժումների և զվարձախոսու-
թյունների հետ զավեշտական քառյակներ էին արտաքանում
նվիրված «Օրվա հերոսներին»: Թյուրքիայում նրանք կոչվում
էին լարիթանի, Վրաստանում՝ Խամուրի, Հայաստանում՝ Բամ-
բառակ: Եղել են նաև, այսպես ասած, ժոնդեր աշուղներ, միա-
ժամանակ նվազել են մի քանի գործիք: Այդպիսիներից անցյալ
դարի առաջին կեսին կ, Պոլսում շատ հայտնի է եղել ենիչերի-
ների մեծավոր՝ Սլե աղայի աշուղը՝ Սարի Օղլանը (հայ), «ը-
ճարպիկ կերպով նվազել է ձեռքերով սազ, ուքերով սանթուր,
ըերանով սրինգ: Իսկ աշուղ Միսկին Բուրջին Գյանջայում
(այժմ Կիրովաբադ) փողոցներում շրջելով, ծաղրական քառյակ-
ներ երգելով խաղացրել է իր ձեռքերում բոնած տիկնիկներ
(մահաց. 1847 թ.):

Քաղաքային աշուղներից մնաց մեղ հիշելու, նըսանց, որպնդ հորինում են առուղական երգեր, պատահում է որ նույնիսկ երգում են, բայց երգում են իրենց համար, մասնավոր և ընտանի շրջաններում, չեն նվազում որեւէ գործիք և չեն պատկանում պրոֆեսիոնալ աշուղների թվին։ Այդպիսիները մերձավոր արևելքում ճանաչված են «զալամ շուվաբասի» (գրչի բանասեղծ) անունով, կոչվում են նաև «զաղա»։

Մի քանի խոսք սազանգարելի մասին,

Անդրկովկասի, ինչպես և Իրանի և Թյուրքիայի քաղաքներում հասարակական խնջույքներում, հարսանիքներում և երեկույթներում հանդիս են զալիս նվագածուների անսամբլներ, գրանք սաղանղարներն են, որոնց երբեմն շփոթում են աշուղների հետ։ Անդրկովկասում նրանց անսամբլները («Պատա») կազմված են լինում 4 հոգուց, որ նվագում են քյամանչա (ճիւանուր), թառ, նաղարա և դափնի, իրանում և Թյուրքիայում սա-



Արմաղակ Արմաղակ


Գիտություն Աշխարհ

զանդարները կոչվում են խանանգա և նվագում են քանոն, կամ դափ, սանթուր երեմն և մի փողային գործիք՝ կլարնետ: Սաղանդարական խմբերի մեջ երգում է միայն դափ նըլվագողը: Նրանք մեծ մասամբ նվագում են իրանական կլասիկ երաժշտությունից ամբողջ Մերձավոր Արևելքին և Անդրկովկասին ծանոթ մելոդիաներ (չարդյան, սեղյան, շուր, հեյրաթի, հեղագ, բայաթի շիրապ և այլն): Երգում և նվագում են նաև իրենց ժամանակում տարածված ուրախ և թեթև տեսակի երգ եղանակներ: Երաժշտական գործիքները եթե աշուղների ձեռքում ամելի շատ ձայնակցելու համար են, այստեղ բռնում են առաջավոր տեղ, դրա համար էլ սաղանդարներն անհամեմատ ավելի լավ են նվագում քան աշուղները: Նրանք հասարակության մեջ երեւում էին ավելի ճոխ հագնված, մահուզի չերկեզկայով կամ չեքմանով, արծաթի գոտիով և ժամացույցի ոսկի շղթայով: Նրանք իրենց հոնորաբն ստանում էին հրավիրքատիրոջից և ոչ թե աշուղների նման բավարարվում էին հանդիսականների կամավոր նվերներով:

Գ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՇՈԽՂՆԵՐ—ԵՐՐՈՐԴ կարգին են պատկանում գյուղական, գեղջուկ աշուղները, որոնք միայնակ, հազվադեպ երկուսով, իրենց սաղերով և երգեցողությամբ հանդես էին գալիս ձմեռները՝ գյուղերի այգաններում և տների հավաքույթներում: Գարնանը, ամառվա ամիսներին և աշնանը երբ գյուղացի աշխատավորությունն զբաղված էր լինում իր դաշտային աշխատանքներով, նրանք գնում էին մոտակա ավանները կամ քաղաքները և երգում ու նվագում էին փողոցներում, հրապարակներում կամ եկեղեցիների և տների բակերում: Նրանք մեծ մասամբ կույր էին և անգրագետ, ու շրջելով՝ իրենց ուղեկիցների հետ փնտում էին բացօթյա մի մարդաշատ տեղ, ծալապատիկ նստում էին ուղղակի գետնի վրա, և սկսում երգ ու նվազը: Աշուղական երգեր սիրող անցորդները մի քանի բոնկ կանգ առնելով նրանց մոտ, մի քիչ լսում էին նրանց թախծոտ երգը և որևէ զրամ գցելով նրանց առջեւում փուած թաշկինակի վրա, հեռանում էին: Իսկ այդ կարգի աշուղներից նրանք, որոնք դերվիշների նման խմբերով ման էին գալիս փողոցներում ու երգում, չունենալով իրենց ձեռքում որևէ երաժշտական գործիք, կոչվում էին «մարուպ»:

Նկար Պ. ԲՈՂԻՏՅԱՆ

ԳԵՂՋՈՒԿ ԱՀԱՐԴԱՐ ՔԱՂԱՔԻ ԽԱՐԱՐՈՒՄ



Լշուղները և նրանց առմեսութ—3

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ



բական ուղղության կամ հոսանքի նշանաւոկությամբ աշուղական դպրոցներ գոյություն են ունեցել Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում զանազան ժամանակներում: Իրենց, աշուղների գոյությունը հասարակական միջավայրում որպես անհերքելի փաստ հայտնի է 16-րդ դարից: Թյուրք զրականության մեջ հրապարակված են աշուղական երգերի ժողովածուներ, որ պարունակում են հայտնիքնարերգու—շահիրների աշուղական տաղաչափությամբ զրված բանաստեղծություններ, և որոնց հեղինակներն իրենց համարում են «աշըգ»: Այդպիսիներից են Բերտել փաշա, Փելիք Էֆենդի, Ֆիտնամ խանում, Նելրիս Էֆենդի, Ռուհի, Նամիյին Ագյանի և այլն:

Հայ աշուղները հիմնավորապես հանդես են գալիս 17-րդ դարում, զրանցից առաջ, միջին գրաբերում, այդ տիպարի բանաստեղծ-երգիչներն ու թափառիկ երաժիշտները կոչվել են գուտան: Եթե միջնադարի մեր տաղասացները—կամ տաղերգութանաստեղծները, մեծագույն մասամբ հոգեորականներ էին և փակված իրենց վանքերի և մենաստանների պատերի մեջ, գրում էին անհատական ու հոգեոր տաղեր, ապա աշուղները, գերազանցապես լինելով աշխարհիկ, հասարակական դեմքեր, իրենց երգելն ու խաղերը հորինում ու երգում էին դրսի, փողոցի ու հրապարակի համար: Տաղասացները առանց բացառության, լինելով գրադետ, նույնիսկ «ուսյալ» մարդիկ, իրենց տաղերը

գրում էին տաղարաններում, որ հետո տարածվում էին գրավոր, արտագրությամբ, իսկ աշուղները, փոքր բացառությամբ, լինելով կիսագրագետ, անգրագետ, երբեմն և կույր, իրենց խաղերը հորինում և տարածում էին բանավոր կերպով (ինչպես օր անհայտ հեղինակների ժողովրդական երգերը), որոնք հետո միայն գրի էին առնվում զավթարեների մեջ կամ իրենց (եթե գրագետ էին) կամ ուրիշների կողմից:

Մինչև 19-րդ դարի վերջը և մեր դարի քառասնամյակը, ուրիշն 340 տարվա ժամանակամիջոցում, հայ ժողովրդի երեք խոշոր հատվածներում հայտնի եղած մեր աշուղների թիվը 400-ից անցնում է: Եղել են անվանի աշուղներ այդ հատվածներում, որոնք դրսեվորել են խոշոր տաղանդ, հանդես են եկել որպես համաժողովրդական երգիչներ, տարածել իրենց համբավը և դարձել աշուղական դպրոցների հիմնադիրներ: Այդ դպրոցներում եղել են շատերը վարպետ աշուղներից, որոնք իրենց հաջող երգերով սեր և համակրություն են վայելել իրենց միջավայրում, իսկ մնացած մեծագույն մասը կազմել են շարքային աշուղները, որոնք հետեւ են մեծ վարպետներին, իրենց հորինած միջակ և թույլ խաղերից ավելի երգել են նրանց երգերը, աղղվել նրանցից, իրենց անունը հայտնի դարձնելով միայն շրջակա գյուղական վայրերում:

Հայ աշուղական գրականության մեջ ժամանակագրությամբ առաջին խոշոր դիմքերը հանդիսանում են Նաղաշ Հովհաննը (1661—1722) և Պաղտասար դպիրը (1680—1763): Հովհաննը բանաստեղծ և նկարիչ (Նաղաշ) երեանից գնացել է Թիֆլիս և դարձել Վրաստանի թագավոր Վախթանգ V-ի պալատական երգիչը և նկարիչը: Պաղտասարը՝ բանաստեղծ, քերականագետ և երաժիշտ Կոստանդնուպոլառում, տեղական հայոց դպրոցների համար կազմել է քերականության դասագրքեր, եղել է տպարաններում հմուտ սրբագրիչ, նաև երաժիշտ-տեղաբան: Թե մեկը և թե մյուսը իրենց երգերում դեռևս կրում են միջնադարի աղդեցությունը, աշուղական ձևերով ոտանավորներ գրելու հետ գրում էին և դրաբար տաղեր, ինչպես տաղասացները: Պատկանելով այդ փոխանցման շրջանին Հովհաննը թե Պաղտասարը մնում են իրենց «ուսոյալ անձերի» դիրքերում և չեն դառնում պրոֆեսիոնալ աշուղներ, բայց իրենց

Երգերի բարձր ոճով ու հանդերի հարստությամբ աղջեցություն են թողնում հետագա աշուղների վրա:

Առաջին հայ-աշուղական դպրոցը հիմնվել է Նոր-Զուղայում 17-րդ դարի առաջին քառյակում (պարսկա-հայկական դպրոց): Հիմնադիրներ հանդիսացել են անվանի աշուղներ Դուլ Էզազը և Մկրտիչը: Դարակեսերին և ավելի ուշ նրանց հետեւել են Դուլ Սարգիս Շիրիշկանցին, Ամիր Օզիին, Դուլ Արգունին, Բաղեր Օզիին, Վանվանը, Սաֆար Օզիին: Վերջինու 1679 թվին գտնվել է Երեւանում և ականատես լինելով հունիսի 4-ին պատահած սարսափելի երկրաշարժին, այդ տարերային դժբախտության մասին գրել է մի գեղեցիկ դաստան «Երեանի շարժը».

Երկինքը մութն առավ, գետինը թնդաց,
Անգունգիցը բղիսեց ջուրն Երեանա,
Երկիրը շարժ ելավ, սար ու ձոր գողաց,
Քանդվեցավ պատն ու դուռն Երեանա:

Պլավ բազագիսանեն, խանգարված շուկան,
Ավերվան տուն ու տեղ, քյոշք, ապայ, գուքան,
Քանդվեցին վանքեր, ու ատճար որքան կան
Աստվածանից եկավ սուրն Երեանա, և այն:

(«Հայ առողներ» Գ. Թարվերդյանի, էջ 10)

Նոր Զուղայի դպրոցը իր գոյությունը պահեց մինչև 18-րդ դարի 80-ական թվականները, տալով մի շարք վարպետ աշուղներ թե տեղում և թե Խոյում, Սալմասում և այլ տեղերում: Այդ անուններից հայտնի են Պետրոս Զուղայեցի, Դուլ Հովհաննես, Արգին Օզիի Հայրապետ, Մինաս Օզիի, Միսկին Ստեփան, Զաքե, Դուլ Ավետիս, Զարբի, Խոյի Վարդան, Ալավերդի, և ամենից ավելի նշանավորը Դուլ Արություն սալմաստեցի աշուղները:

Այս դպրոցի աշուղներն իրենց խաղերը գրել ու Երգել են պարոկերեն, ագրբեջաններեն և հայերեն՝ Նոր Զուղայի բարբառով: Նրանց սիրած տաղաչափական ձևերն են գյուրեյիթ, դոշմա, մուխամմազ, գաստան:

Երկրորդ տեղը բռնում է քյուրի-հայկական գպրոցը, որի կենտրոնն էր Կ. Պոլիսը: Հիմնադիրներն հանդիսացում են ան-

վանի աշուղներ Արթինը և Ռումանին, Այս դպրոցն ակսվելով
18-րդ դարի 30-ականներից, շարունակվեց մինչև 19-րդի
70-ական թվականները: Շատ հազվագյուտ երեսոյթ էր նկատ-
վում երբ այս դպրոցի աշուղներից մեկը գրեր կամ երգեր հա-
յերեն: Նրանք իրենց երգերն հյուսում էին թյուրքերեն, Օս-
մանյան կայսրության պետական լեզվով:

Այս դպրոցի աշուղների երգերի բովանդակությունն ան-
համեմատ ավելի խոր է: Փիլիսոփայական տեսողենցներ, միստի-
կա, աշխարհային թախիծ, հասարակական բարոյականություն,
այս ամենը կան այս հոսանքի կլասիկ հեղինակների երգերի
մեջ: Ուզը այստեղ վերամբարձ է, հանդիսավոր, մինչև իսկ սի-
րային երգերն աղատ չեն պատեհիկայից: Այս դպրոցի հայ
աշուղները ինչպես և թյուրք արվեստակիցները անպայման մեծ
պղեցություն են կրել այնպիսի նշանավոր թյուրք քնարերգու-
թանաստեղծներից ինչպիսիք են Ֆուղուլին, Նարին, Բաքին և
ուրիշները: Նրանք, ինչպես որ վերջիններս, իրենց ոտանավոր-
ներում առատ կերպով գործ են ածել արագական և պարսկական
բաներ: Այս դպրոցի ամենախոշոր ներկայացուցիչներն են Քեշի
Օզի, Շուքրի, Նիջումի և Շաքիրի աշուղները:

Երբորդ տեղը բռնում է վրացահայկական դպրոցը, որի
վրա նկատելի է պարսկահայկական դպրոցի վաղ ազդեցությունը: Այստեղ հիմնադիրն հանդիսանում է հոչակավոր Սայաթ-Նովան,
Անդրկովկասյան աշուղների մեջ ամենամեծ դեմքը, աշուղ պրո-
ֆեսիոնալ, որ ապրում էր Թիֆլիսում 18-րդ դարում: Ճորտ,
պատանի հասակում ջուլհակ, արհեստավոր, հետագայում քա-
ռաքային երգիչ—սաղանդար, աղա պալատական աշուղ՝ երեկ-
ու և թագավորի մոտ, իսկ ծերության տարիներում Հաղպատի
վանքի միաբան: Սայաթ-Նովան իր սքանչելի երգերը գրում և
երգում էր վրացերեն, հայերեն և աղբյուջաններեն լեզուներով և
միատեսակ հստականալի և սիրելի էր Անդրկովկասի այդ երեք
եղբայրական ժողովաւրդներին: Միջազգայնական անմահ աշուղի
հայերեն խաղերի ժողովածուն առաջին անգամ լույս է տեսել
Մուկվայում 1852 թվին, գիտական խմբագրությամբ և առա-
ջարանով գիտնական և գոլուրիստ Գեվորգ Ախվերդյանի: Հե-
տագայում այդ ժողովածուն երկրորդ հրատարակությամբ լույս
է տեսել Թիֆլիսում 1914 թվին բանասեղծ Հովհաննես Թու-

Թանյանի ջանքերով։ Սովետական իշխանության տարիներին Երևանում Սայաթ-Նովայի երգերն հրատարակված են Հայպետհրատի կողմից երկու անգամ խմբագրությամբ և ուսումնասիրությամբ Գ. Լևոնյանի։ Աշուղի վրացերեն երգերի ժողովածուն լույս է տեսել Թիֆլիսում 1918 թվին բանառտեղծ-բանասերի։ Գրիշաշվիլու առաջաբանով և խմբագրությամբ։ Ինչ վերաբերում է Սայաթ-Նովայի ադրբեջաներեն խաղերին, նրանք, ցալ ի սիրտ, մինչև այժմ մնում են չհրատարակված։ Հեղինակի հիմնական ինքնագիր դավթարը գտնվում է Երևանում, Պետական Գրական թանգարանում, իսկ մի ուրիշ դավթար, գրված 1823 թվին Պետերբուրգում, աշուղի որդի Օհանի ձեռքով, գտնվում է Գիտությունների Ակադեմիայի գրադարանում։

Սայաթ-Նովան ապրել է պատկառելի հասակ (82 տարի) և ալանվել է 1795 թվին Թիֆլիսում Աղա Մամեդ խանի գորքերի հարձակման ժամանակ։ Այլ վերսիայով նա ապրել է մինչև 1801 թվականը և մեռել է իր բնական մահով։

Անդրկովկասյան ազգությունների եղբայրացման և խաղաղ համակեցության գործում Սայաթ-Նովայի գեղեցիկ օրինակին հետևում են Վրաստանի թե նրա ժամանակակից և թե հետագա արվեստակիցները։ Վրացի թե հայ աշուղներն իրենց խաղերը հյուսում էին երկու լեզվով էլ ու հայերեն թե վրացերեն երգում էին նույն սիրով, նույն վարպետությամբ։ Աղբայիշանի աշուղները և թե մի կողմով ընդհանուր կապ ունեին իրենց Անդրկովկասյան արվեստակիցների հետ, մյուս կողմից արեելյան եղանակների կատարման գործում կապված էին մնում իրանական կլասիկ երաժշտության արագիցիաներին։

Սայաթ-Նովայի գլորոցի աշուղներից ամենից ավելի հայտնի են իրենց երգերով Շամչի Մելքոն, Բուղազ Օղլանը, Քեչիկ-Նովան, Սայադ Օղլին, Լազար Օղլանը։

Վրացահայկական աշուղական այս դպրոցը կազմակերպվելով 18-րդ դարի 50-ական թվականներին, իր գոյությունը պահում է մինչև 19-րդ դարի վերջերը։ Աշուղ Հաղիբին կարելի է ասել, վերջին խոշոր ներկայացուցիչն էր այդ դպրոցի։

Սայաթ-Նովայի գլորոցի աշուղներն իրենց հայերեն խաղերը գրում էին Թիֆլիսի բարբառով, որի մեջ խառն էին բազմաթիվ պարսկերեն և աղբայիշաներեն բառեր։

Կը Երանեա ու ապրանան դրա և այսուհետ գործառք այլ մի մաս
մաս նախատամին մասնակոր պատշ է ի չժնութեա զբա-
խան թար բունքայ գուշ.....
Եւ արալնիդի զանու մինամ հարա զօնդի եր համա-
անցինքի եղա ըստ մինմ եարա վրդում դուր մատ-
եր համ շինա սօնսդի ի թեա բար եզ գոր համա- գոր
դիրմի աշունի զասամինա կշին բաֆիր առանգութուր
ի եղինաքի եր դ առու փառուր եազն ո որ ասիանգունա-
չունուն ո մի սօնսդի աշունիդ ա չըն գուր սայխադնուզա-
մի աշունիր խարայի դ պարայի արան դ որ սափար ն ու զա-
շեւ աշզիլնէ կշին չուշըրա մն զը եկրեդ դ որ ընսդ ա

գուշ.....

և մաս անու սօնսդի առանգութուր մն

Ա թիմ թիմ գի է լ լ լ ն ։ ՄԲ ԿՐ Բ Ա պի ո ո ա զ ա ս ա ս ա ն ա ն ։
Ա թիմ թիմ գի է լ լ լ ն ։ Պ լ ը ւ յ է ս ա լ ը թ ա լ ո ց
Խ ա ն կ յ մ ա ր ա ս ի ն է ե ս ա ս ո ւ ր բ ա ր է բ ա ր ո ւ ն ս ա ս ո ւ ն ։ Խ ա ս
Ս ի ր ո ւ ս ա ս ո ւ ն ը ա յ մ ա ք ի ր ի ն ո ւ ս ա փ ս ա ր ո ւ ն ։ Խ ա ս
Ո ր ս ա մ ա յ մ է ե ր դ ի ր ը պ ա յ ի ր մ ա ր դ զ ա լ դ ի մ ա ր
ա ր ու ն ս ա մ ու ն ։ ա ն ա ս պ ա ս ո ւ ն բ ա ր ա ս ո ւ ն ։ ա ր ու ն
զ ա ր վ ա ր ո ւ ր է ի ր ի ս ա մ ու ն ։ ս ա մ ու ն ս ա մ ու ն ։
Ա պ ա յ ո ւ ն գ է դ ո ր ի ժ ա ն ե ա մ ։ ո ւ ս ա մ ու ն ս ա մ ու ն ։ ի ն դ ը մ
Տ ե կ ը տ ս ի ց ի շ ը ր ։ մ է կ ը ս ի մ ա շ ո ւ ր է ի ր ո ւ ր բ
Բ ո ւ թ ի ն ը ն ո ւ ն ս ի յ ա լ ը ն ե յ ի ր ։ մ է ս ո ւ ն ի չ ո ւ ն չ ո ւ ն ։ ո ւ ն ի ն
չ ա ր ա ս ո ւ ն է ն է կ ը ր ը ր յ ի ր ։ օ ւ ս ո ւ ն չ ո ւ ն չ ո ւ ն ։ ո ւ ն ի ն
ն ա ն ո ւ ն չ ը ն մ ա յ ա ր ի ն ա զ ո ւ ն է ի շ ը ր ։ չ ո ւ ն չ ո ւ ն ։ չ ո ւ ն չ ո ւ ն
ն ա ն ո ւ ն չ ը ն մ ա յ ա ր ի ն դ ո ւ ր գ ո ւ ն ի չ ո ւ ն չ ո ւ ն ։ ո ւ ն ի ն

Մ Ի Է Զ Ս Ս Ա Մ Ն Ո Վ Ա Յ Ի Դ Ա Վ Թ Ա Ր Ի Ց

Անցյալ դարի 20-ական թվականներից հարավային Անդր-
կովկասի ազգաբնակության հասարակական կյանքում տեղը-
ունեցան խոշոր դեպքեր: Ռուս-պարսկական պատերազմի (1827)՝
հետևանքով, աշխարհազրական քարտեզից անհետացան Երևանի-
և Նախիջևանի խանությունները: Նրանց մեջ մտնող հայկական-
գավառները միացվեցին ցարական Ռուսաստանին: Ավելի ուշ՝
արեւյան և մանավանդ ուսություրքական պատերազմների կա-
պակցությամբ փոփոխության ենթարկվեցին Անդրկովկասի հա-
րավային սահմանները, փոփոխության ենթարկելով և այդ վայ-
րերում ապրող ազգաբնակության շերտերին: Ահա այս քաղա-
քական իրադարձությունների պատճառով կազմակերպվում են
շշուղական նոր խմբավորումներ, ստեղծելով միմյանցից հեռու-
ղանազան վայրերում, միմյանցից անջատ, միմյանց հետ սերտ-
կապ չունեցող մանր դպրոցների: Այդ դպրոցների կենտրոնները
եղել են երրումը, գլխավորությամբ աշուղ Նիտայու, Կարսը՝
աշուղ Թուջջարի, Ալեքսանդրապոլը (Լենինական), աշուղ Բագերի,
Երևանը՝ աշուղ Շիրինի, Գյանջան (Կիրովաբադ) Միսկին Բուր-
ջու և Շամախին Զարգյարի և Թուրբինջի: Շամախու դպրոցի
շոշափուկները հասնում են մինչև Դաղստան և մինչև Աստրա-
խան: Լեռնային Ղարաբաղի և Ղանգեզուրի աշուղները ունեցել
են երենց ընդհանուր կենտրոնը Խնձորեսկը: Այս մանր դպրոց-
ների աշուղներից շատերը իրենց երգերը զբում էին թյուրքե-
րեն (Նիտայի, Թուջջար) և աղբրեջաներեն. փոքրամասնությունը
միայն զբում էր և աղբրեջաներեն և հայերեն: Վերեւում մեր-
հիշած աշուղական երեք գլխավոր դպրոցներից այս մանր
դպրոցների վրա ամենից ավելի երեսում է Թյուրքիայի աշուղ-
ների աղղեցությունը:

Վաթուունական, յոթանասունական թվականներին Անդր-
կովկասի հասարակական կյանքի տնտեսական և մտավոր բնա-
գավառներում նկատվում է առանձին վերելք: Դպրոցական-
ցանցը մեծանում է, հայերեն և վրացերեն լեզուներով հրատա-
րակում են լուրջ լրագիրներ և հանդեսներ. նոր գեղարվեստա-
կան գրականությունը պատկերում է ժողովրդի հասարակական-
ութեալ կյանքը, ժողովուրդ, որ մինչև այդ գտնվում էր եկեղեցու
ուժեղ աղղեցության տակ: Նկատելի էր նույնպես որ երիտա-
սարդական խմբեր, ձկտում են գնալ Պետերբուրգ և Մոսկա-

Փրենց կրթությունը կատարելագործելու համար: Ծուսական գրականությունից ընտիր երկերը հետզհետե դառնում են Անդրկովկասյան ժողովուրդների ընթերցանության սիրելի գըրքերը:

Այսպիսի մի ժամանակում թվում էր թե աշուղները և նրանց գրականությունը կիսուցնեին իրենց վաղեմի նշանակությունը ժողովրդական շերտերում: Բայց ահա երեսում է վերջին նշանավոր աշուղը՝ Զիվանին, որին է պատկանում հայ աշուղական գրականության մեջ նոր, ազգային գպրոցի հիմնադրի պատիվը: Երբ նախորդ գպրոցների աշուղները, փոքր բացառությամբ, իրենց երգերը հյուսում էին զանազան բարբառներով կամ ուրիշ լեզուներով, Զիվանու երգերի լեզուն արդեն մաքուր գրական լեզու է: Անհամեմատ ավելի հարուստ է այս գպրոցի գրականության թեմատիկան: Ինչը գպրոցի հիմնադիրը հանդես եկավ որպես քաղաքացի, հասարակական մարդ և հայրենասեր: Նա որդեգրեց ճնշված ժողովուրդների աղասաղըրության գաղափարը ցարական և սուլթանական բանակալությունից: Երգեց իր ժողովրդի ազգային ազատագրության ձգտումները, միենույն ժամանակ եռանդուն կերպով քարոզեց աշխատավոր ժողովուրդների եղբայրությունը և խաղաղ համակեցությունը: Այս զպրոցի հիմնադրի բանաստեղծությունն իր զեղցկությամբ և երաժշտականությամբ անկառած զիջում է Սայաթ-Նովային, բայց իր բովանդակությամբ նա անհամեմատ ավելի հարուստ է և բազմակողմանի: «Նախ քաղաքացի և ապա պոետ» այս նշանաբանն իր ամբողջությամբ ընդունվեց այս գպրոցի աշուղների կողմից: Եվ իրոք, նրանց սիրային և բարոյախոսական երգերի թվում մենք տեսնում ենք մեծ քանակությամբ ոտանավորներ այնպիսի թեմաներով, որոնց մասին չեն խսկ մտածել նախորդ գպրոցների աշուղները: Նոր զպրոցի աշուղներն իրենց երգերում խոսում էին սոցիալական կյանքի, անարդարությունների մասին, գասակարգերի անհավասարության մասին, իրենց ժամանակի քաղաքական-հասարակական իրադարձությունների մասին: Նրանք (Զիվանին, իր ընկերները և հետեւողները) խարազանում են «աշխարհի հզորներին» շահագործողներին, հասարակական ցեցերին և «ազգային» տըզ-

- - - - -

1906. 11. 15. 11:15

բուկներին, զրելով և ժողովրդական հավաքույթներում բարձրածայն երգելով:

Զիվանու մահվան առթիվ մամուլում լույս տեսած հոգվածներում, նրան անվանեցին «հայ, աշուղների վերջին մոհիկանը»: Սա գուցե և ճիշտ է, որովհետեւ նրանից հետո չի երեսվացել ուժով և դիապազոնով նրան հավասար մի այլ աշուղդայց հայ աշուղները շարունակում են իրենց գոյությունը մինչև այսօր:

Հայաստանի ժամանակակից աշուղներից կան այնպիսիները, որոնք պատկանում են ավագ սերնդին: Գրել, երգել ու նվագել են նախասովետական շրջանում, բայց մեր օրերում հիմնովին կազմակերպվել են որպես սովետական ազնիվ քաղաքացիներ և հանդես են եկել իրենց նոր երգերով:

Այդ աշուղներից կարող ենք թվել Խայաթին, Աշխույժ Ապարանցուն, Մահուբի Գևորգին և նոր Սոխակին: Սրանք պատկանում են Զիվանու դպրոցին, շարունակել են նրա տրադիցիաները թե իրենց թեմատիկայի և թե արվեստի տեսակետներով, Զիվանու խոշոր ազգեցությունը երեսում է ավելի և Աշխույժ Ապարանցու և նոր Սոխակի երգերի մեջ. այդ աշուղները նույնիսկ երգեր ունեն նվիրած իրենց մեծ վարպետին: Իսկ սովետական շրջանում առաջ եկող աշուղներն արդեն երկրորդական, երրորդական տեղ տալով բարոյագիտական, սիրային և այլ բնույթի խաղերին, առաջին տեղը տվել են և տալիս են մեր պայծառ օրերին, սովետական շինարարության, ժամանակակից առաջատար կարմիր բանակին, երկրի պաշտպանության և աշխատանքի հերոսներին: Այդ աշուղների թիվը հասնում է մի քանի տասնյակի բայց նրանցից ավելի հայտնի են Գրիգոր Շամշադինցին, Աշխույժ Շռւշեցին, Հրկեղը, Շիրակը, Պարկեշտը, Խաղային, Թաստին, Եսայանը, Կամսարյանը. մնացած շատերը դեռևս լավ չտիրապետելով աշուղական արվեստին իրենց երգերը գրում են սովորական ուտանավորի ձևով:

Անցյալում եթե ունեցել ենք մի քանի կին աշուղներ— Մարո-Նախիջևանցի, Վարսո Ղարսեցին, Թամար Երևանցին, ապա սովետական տարիներում հանդես են եկել նորերը և

Քրենց երգերով ծանոթ դարձել մեր ժամանակի աշուղների շրջանում: Նրանցից ավելի ևս հիշելու արժանի են Սանդուխտը (Աղբարա) և Զերեդը (Սպարան):

Ժամանակակից աշուղների մեջ նկատելի է և բավականին ուշագրավ մի երեսոյթ, որ նրանք աննշ ան բացառությամբ իրենց անուններ են ընտրում հայերեն բառերով: Անցյալի մեր աշուղները, ըստ վաղեմի արեւելյան սովորության, իրենց անուններ էին դնում ՚նովա, Օղլի, Օղլան, Զագե վերջավորություններով, կամ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն կամ աղբարեջաններեն բառերով, ինչպես ՚Քյանհան, Զահրի, Շիրին, Զիվանի, Զամալի և այլն, ապա մեր նոր աշուղներին մենք ճանաչում ենք Հրկեզ, Շիրակ, Կարկուտ, Սոխակ, Որսորդ, Պարկեշտ, Խոնարհ և նման անուններով:

Մեր նորագույն աշուղների երգերի մասին մի գաղափար տալու համար, առաջ ենք բերում այստեղ աշուղ Շիրակի մի աիրուն երգը նվիրված Կայքիրեքին:

Եյ ջան, Սովետական կարմիր Հայրենիք,
Ծաղկունքով զարդարված բուրաստան ես դու,
Ստալինյան լույսով ստացար բարեիք,
Աշխատավոր զասին մեծ պաշտպան ես դու:

Սովետական աշխարհ, սիրուն ես, կայտառ,
Անմար ջահի նման դարեր մաս վառ,
Ծաղկում ես օր օրի, դու շեն ու պայծառ,
Շքեզ, չնաշխարհիկ, աննման ես դու:

Աշուղ Շիրակն ասավ զու ես հիմնական,
Հաստատ ես, հաստատ էլ մնա հավիտյան,
Կեցցե Ստալինը վաեմ, պատվական,
Նոր կյանքի ստեղծող պատվական ես դու:

Բ. ԱՐՎԵՍՏԸ



շուղական արվեստը, որ հիմնականում գրեթե նույնն է և միատեսակ բոլոր առուղեցրի համար, ունի երեք գլխավոր պահանջներից ունի ուսանալորներ աշուղական տաղաւախից անպատճառութից հանդես գալ աշուղական հրապարակային մրցումների ժամանակ, ապա մենակ, կամ անսամբլների մեջ ելույթներ ունենալ երգերով և նվագածությամբ: Վարպետ աշուղաւախից ոչ շատերը հանդիսացել են նաև աշուղական տաղաչափության ներ ձեռների կամ նօր եղանակների հեղինակներ:

Աշուղական տաղաչափությունը ուրույն տաղաչափությունն է, նրա սկզբնական ձեռնը իրենց կանոններով արարական և պարսկական ծագում ունեն, այդ ձեռնը հետագա դարերում անցնելով մերձարևելյան մյուս ազգերի մեջ—թյուրք, ուղղեկ, աղբեկջանցի և հայ աշուղներն ընդունել են նրանց չափերն ու կանոնները, նաև ենթարկել որոշ փոփոխությունների, հնարելով նույնական բարդ ձեռք և նոր ձեռք:

Միջին դարերից եկած հիմնական—կանոնական տաղաչափական այդ ձեռնը, ամենքից ավելի շատ մշակվել են ու հարըստացել թյուրքիայում՝ թյուրք և թյուրքերեն լեզվով երգող հայ աշուղների կողմից: Մշակության ենթարկված այդ ձեռնը բացի տուների, տողերի, ոտքերի, վանկերի և հանգերի պարտագիր օրենքներից ունեն և իրենց տոնիքական պահանջները, շեշտականության կանոնները, որոնք ավելի նկատելի են գառնում:

ասմունքի, քան երգելու ժամանակ, և որոնք պետք է ասել,
իրենց դժվարության պատճառով շարքային աշուղների կողմից
ճշտությամբ չեն կիրառվել:

Մենք անհրաժեշտ ենք համարում նշել այստեղ այն կա-
րեր հանգամանքը, որ աշուղական յուրաքանչյուր ձեր ոտանա-
վոր ունի իր ասմունքի ուրույն տեսակը, ունչիտատիվ եղանա-
կավոր ընթերցումը: Այսպիսի ընթերցման ժամանակ է, որ ավե-
լի ևս նկատելի են դառնում տվյալ ձեր ոտանավորի տողերի մեջ
վանկերի անշեշտը, քաշը և շեշտվածը: Այդ կանոններին են հե-
տեւ վարպետ աշուղները, փույթ չունենալով թե իրենց շեշտե-
րը համընկնմամբ են քերականական կամ տրամաբանական շեշ-
տերի հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Աշուղական տաղաչափության մեջ կան մի քանի կանոն-
ներ, որոնք ընդհանուր են բոլոր ձեռքերի կամ ոտանա-
վորների համար: այդ կանոնները զուտ աշուղական են և չկան,
այսպես ասած «արլիստական», «գրքային» բանաստեղծության-
տաղաչափության մեջ:

Կ ա ն ո ն տ ո ա զ ի ն

Երգի առաջին տան ա. և բ. տողերը կրում են միևնույն-
հանգը, գ. տողը ազատ է հանգից, դ. տողն ունի ա. և բ. տո-
ղերի հանգը: Մնացած բոլոր տուների առաջին երեք տողերը
առանձին առանձին առած միատեսակ հանգ ունեն, իսկ 4-րդ
տողերը վերջանում են այն հանգով, որ ունեն առաջին տան ա-
ը. և դ. տողերը:

Մինամա

Ա. տուն	Բ. տուն	Գ. տուն
...	1	...
...	1	...
...	0	...
...	1	...

Օրինակ

Կակուղ փուշը ձեռ չի ծակիլ, արյուն կառնի կամացուկ:
Խաղաղ ջուրը ձայն չի հանիլ, մարդ կխեղդե միշտ ծածուկ:

Հաջող շունը ձայն է տալիս որ գալիս է քեզ վրա,
Դու այն գամբոից երկյուղ կրե որ չի հանիլ ձայն ու ձուք:

Առավոտուն թե ամպերը կարմրած չեն վախ չկա.
Հորիզոնը սև էլ լինի, այն օրը անձրև չի դա.
Թե սազերը զրդոված չեն, կարկուտից մի վախենա,
Հազարավոր տարիներուց փորձըված բան է հատուկ...¹⁾

Կանոն երկրորդ

Երգի առաջին տան առ և գ. տողերը կրում են միենույն
հանգը, բ. և դ. տողերը մի ուրիշ հանգ. մնացած բոլոր տուների
առաջին երեք տողերն ունեն մի մի նոր հանգ, իսկ 4-րդ տո-
ղերը վերջանում են այն հանգով, ինչ որ ա. տան ը. և դ. տո-
ղերը:

Ա.	տուն	Բ.	տուն	Գ.	տուն
.	1	.	3	.	4
.	2	.	3	.	4
.	1	.	3	.	4
.	2	.	1	.	1

Օրինակ

Մարդ ինչ առարկայից որ քաշե վասա,
Զի հեռանա, կրկին կսիրե նըան,
Հասակավոր լինի, կամ թե զեռահաս,
Կոխալի այս բանի մեջ մշտական:

Մարդ որքան ունենա ուսում, հրահանգ
Զէ կարող ունենալ խաղաղ բարի կյանք,
Դիսե ինչ բանից պիտի գա փորձանք,
Դիտմամբ այս վասնին կլինի արժան... և այլն.

Կանոն երրորդ

Երգի առաջին տան բոլոր տողերը կրում են միենույն
հանգը. մնացած տուների առաջին 5 տողերը կրում են մի մի
նոր հանգ, իսկ վերջին 6-րդ տողերը այն հանգը, ինչ որ ունեն
ա. տան տողերը.

1) Այս, ինչպես և հետեւյալ բոլոր էջերում երգերի մեր առաջ բերած
օրինակները, որոնց տակ չեն նշված հեղինակները, պատկանում են աշուղ
Ջիվանուն:

Ա. տուն

Բ/ տուն

Գ. տուն

1

2

3

1

2

3

1

2

3

1

2

3

1

2

3

1

2

3

1

1

1

Օրինակ

Ո՞վ սիրելիք, ականջ արեք, հասկացեք սերի կը ակալը,
Միշտ կը այրի, էլ չի հանգչի, ինչպես մաքուր աշտանակը.

Սիրեկանը կդիտենա սիրեկանի ժամանակը.

Նորանց սերը չի կարվի մինչեւ ցմազից բարակը

Վարդի համար լինչ է քաշում ողորմելի էն սոխակը

Մինչ բացվելը նա չի տեսնում զուր է անցնում իր ամակը:

Սերի բանը հասկացողի համար հատուկ շատ գժվար է

Յուր անձը կորցըրած կըլի, կասեն իստակ այսահար է

Չեն հասկանալ սիրո ճմլյալ ի սեր սրտիվ սիրահար է...

Վերջին տող՝

Սիրածը ձեռից չի թողուլոչ հատուկ ոչ հասարակը, ՔԻՄՑԱԿ և այլն.

Մնացած տուների վերջին տողերն ունեն «մանիշակը»
«ընդունակը» և այլն:

Կանոն չորրորդ

Երբ երգի առաջին տան ա. բ. և գ. տողերը վերջանում են
միենույն բառով կամ բառերով, այն ժամանակ հանգ ընդունում
են այդ կրկնվող բառին (կամ բառերին) նախորդող բառերը իսկ
մնացած բոլոր տուների առաջին երեք տողերը կը ում են նոր և
տարբեր հանգեր և 4-րդ տողերը հանգավորվում են առաջին
տան ա. բ. և գ. տողերի նման, այսինքն հանգ ընդունում են
նախավերջին բառերը:

Ա. տուն

Բ. տուն

Գ. տուն

—1—

—2—

—3—

—1—

—2—

—3—

—0—

—2—

—1—

—1—

—1—

—1—

Օրինակ

Ես գիտեմ, այսպես չե մնա իմ հայրենիք աշխարհը,
Կանհետանա չարիքը, ցույց կուտա բարիք աշխարհը-
Երանի ձեզ հարցուր տարի հետո ծնվող սիրելիք,
Բոլորովին վերափոխված դուք կտեսնիք աշխարհը,

Զուր տեղը արյուն թափելը, կոփվը կվերջանա,
Ամենայն մարդ անկարստ իրան պարենը կունենա,
Բոնությունը իսպառ-սպուռ շրջանից կանհետանա,
Կղառնա բնության հետ համակարծիք աշխարհը,

Այս տեսակ հանգավորման ձեւ նկատվում է և մեր ժողովը ականական երգերի, հատկապես «Հանգյուղումների» մեջ.

Զաղացս ման եմ տվել
Սիրել եմ, ջան եմ տվել,
Օխոք տարի սիրության
Մեկ օր պայման եմ տվել.

Կամ Սպիտակ ձին նալն ինչ կանե
Սիրունը խալն ինչ կանե,
Քեզի սիրող իզիթը
Աշխարհ մալն ինչ կանե.

ԱՅՍ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կանոններից առաջինի նպատակն է երգի առաջին տաճա-
ա. և բ. տողերը միատեսակ հանգով վերջացնելուց հետո, գ-
տողն հանգից ազատ թողնել հանգստի համար, ապա դ. տողին
տալով դարձյալ նույն հանգը ամբողջացնել և ամփոփել տունը-
իսկ ամբողջ երգն ամփոփելու նպատակ ունի հետեյալ բոլոր
տուների վերջին տողերը ա. տան վերջին տողը պես հանգավո-
րելը,

Երկրորդ կանոնը նույն նպատակներն ունի, միայն այս-
տեղ առաջին տաճա մեջ տողերն ընդունում են խաչաձև հանգա-
վորում, այսինքն փոփոխակի:

Երրորդ և չորրորդ կանոնների մեջ ուր յուրաքանչյուր
տունն ունի իր առանձին հանգը, կամ հանգից հետո կրկնվող
բառը (կամ բառերը) դարձյալ նրանք հանգիստ են առնում և
ամփոփում տուների վերջին, միատեսակ հանգ կրող տողերով:

Այսպիսով այս տեսակի երգերի հեղինակները վերջին բառերի կրկնությամբ ուզում են ավելի լաւ, ավելի դգալի դարձնել իրենց խոսքը, մյուս կողմից աշխատելով ընթերցման և ասմունքի ժամանակ ձանձրակի չգառնալ:

Այս կանոնները, իրենց հիմնական ձևավորումն ստացել են իրանում. միջնադարի մի քանի պարսիկ քնարերգու բանաստեղծների մոտ (Հաֆը, Խաքանի, Բարս Թայիր) մենք տեսնում ենք տաղաջափության այդ ձեռքի կիրառումը:

Ահա օրինակի համար մի քանի առղ Հաֆըից.

Քեզ սիրելս սիրուններին ակներե է ճրագի պես,
Սիրոյնների միջումն եմ ես ամեն գիշեր ճրագի պես,
Սիրուդ ձեռից համբերությանս սարը կակղել զառել է մոմ,
Սիրուդ ջրից ու կրակից ես հալվեցա ճրագի պես:

Թարգմանիչը՝ Մաքուտյան, ըստ երկույթին գժվարացել է կրկնվող «Ճրագի պես» բառերին նախորդող բառերը հանդավորել բնագրից չհեռանալու նպատակով:

Աշուղական երգերի մեջ կա գարձյալ մի կանոն, արևելյան մի վաղեմի սովորություն, որ հեղինակներն հորինած երգերի վերջին տան մեջ հիշատակում են իրենց անունը, դա պարզ է, ունեցել է այն նպատակը, որ ուրիշներին հայտնի լինի տվյալ երգի հեղինակը: Այսպես արել են նրա համար, որ այդ երգերը, մեծագույն մասամբ, տարածվել են բանավոր, երգելով, ու ժողովրդական երգերի նման անցել բերանից բերան: Նույնպես վարդիլ են Պարսկաստանի և Թյուրքիայի քնարերգու բանաստեղծները:

Մեր տաղասացները ուրիշ կերպ էին անմահացնում իրենց, եթե ուզում էին. նրանք հորինած տաղերի (ոչ բոլորի) տուները սկսում էին իրենց անվան տառերի հերթականությամբ: Այդպիսս առել է մինչև Պաղտասար դպիրը (18-րդ դար), իսկ տաղասացներից ոմանք ավելի վաղ, աշուղականի նման իրենց անուններն հիշատակել են նաև տաղերի վերջին տան մեջ, ինչպես որ Հովհաննես Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը և ուրիշները:

Այժմ մի առ մի մենք առաջ բերենք աշուղական տաղաչափության մեջ ծանոթ 40-ի չափ ձեռքը իրենց անուններով և

օրինակներով: Բոլոր այդ ձևերը ըստ մետրիքական կազմության
և ըստ ներքին բնույթի մենք բաժանում ենք չորս խմբի կամ
տեսակների:

Ա. ՀԻՄՆՍԱՅՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐ

1. Դյուբեկիք (Դյուբեյք, Երկսիբ)

Սովորաբար 3—5 տուն, տունը 4 տող, տողը 8 վանկ (4—4)
Արաբական չափանիշը միստեֆիլուն—միստֆիլուն:

Աշուղական խաղերի շատ գործածական ու պարզ ձևերից
մեկը, առողերը հանգավորվում են 2-րդ կանոնի համաձայն,
ամենից ավելի՝ դյուբեյքի թիւներ պատահում են շեշտված՝ տու-
ների ա. և գ. տողերում,

Օրինակ.

Առանց վախի | առանց ահի
Քաջերն | տուն | Սասունան սար,
Քեզնից հրդեհ | կապատահի
Կըակի բռն | Սասունան սար:

Հին աշուղների երգերի մեջ մենք պատահում ենք գյու-
բեյիքերեր 2 տողից, 16 վանկից (8—8):

2. Ղազել

Սովորաբար 3 տուն, տունը 4 տող, տողը 15 վանկ, (3—4
4—4, կամ 7—8):

Արաբ. չափ մեթուլուն—մեթափիլուն—մեթափիլուն—մե-
թափիլուն: Ամբողջ ստանավորի մեջ միատեսակ հանդ են ընդու-
նում ա. տան ա. բ. և գ. տողերը և մյուս տուների բ. և գ. տողերը,
իսկ ինչպես ա. տան գ. տողը, այնպես էլ մյուս տուների ա. և
գ. տողերը ազատ են հանգից:

Օրինակ ա.

Հոժաբ եմ | ինչ որ կուզե | թող անե իմ | սիրեկանս
Մարմինս | սուր սուսերով | թող կարմտե | աննմանս
Խղճալույս | սպանելու | կամք ունի իմ | զովականս
Գնալով | ազաշնում եմ | զիս ձգե | լով պարանս

Օրինակ բ.

Առավոտը շատ մոտ է, | լույսը շողալուն քիչ մնաց,
Խավարը ընկած գետին, | արեց գալուն քիչ մնաց,

Համբերանքդ ծնվ արա, | հույս ու հավատդ պինդ պահիք
Սև գեշերեց ձանձրացնդ | բախտիդ խաղալուն քիչ մնաց:

Շեշտերն ինչպիս կնկատի ընթերցողը ա. օրինակում այս-
պես են.

— 1 — — — 1 — — — 1 — — — 1 —
— 1 — — — 1 — — — 1 — — — 1 —

Բ. օրինակում

— — — — 1 — — — — — — — 1 —
— — — — — 1 — — — — — — — 1 —
— — — — 1 — — — — — — — 1 —
— — — — — — 1 — — — — — — — 1 —

Սայաթ-Նովան զագելք գրել է 16 վանկով (4—4—4—4) հատկապես իրանական հին եղանակներից մեկով երգելու համար: Իր «Աշխարհումս ախ չեմ քաշի» խաղի տակ նա ունի այսպիսի ծանոթություն՝ «Էսովես զագալի, դաստա բե դաստա թարփա-նուրի ձենում»: Այս չափով է գրել Վահան Տերյանն իր «Հըա-ժեշտի զազելլ»:

Յ. Դիվանի

Սովորաբար 3 տուն, տունը 4 տող, տողը 15 վանկ (4—4—4—3). արաբական չափանիշը մեթափլուն—մեթափլուն, մե-
թափլուն—թափլար:

Ամբողջ սուանավորի մեջ տողերը մեջ ընդ մեջ վերջանում են միենույն հանգով, բացառությամբ ա. տան բ. տողի, որ ընդունում է նույն հանգը: Մյուս տուների մեջ ա. և դ. տողերը աղատ են հանգից:

Երբ հանգավորվող տողերը վերջանում են միենույն բառով կամ բառերով, այն ժամանակ հանգ ընդունում են այդ կրկնվող բառին (կամ բառերին) նախորդող բառը (կանոն 4-րդ): Առանձին ուշագրության արժանի է այստեղ առմունքի շեշտականությունը, շեշտերն ընկնում են յուրաքանչյուր ոտքի առաջին վանկի վրա.

1— — — 1— — — 1— — — 1— —
1— — — 1— — — 1— — — 1— —

Օրինակներ

Դանդաղ մի անի, | ջան ու ջիգար | միտքդ զիվաց | չը տեսնե, |
Ա'չըկ խավրի, | անգաճ խուլնա | երեսդ թաց | չը տեսնե,

Աայաթ-Նովա

Քո փափազով | վառվում եմ ա | բի սիրեկան | ուր տեղ ես,
Երկնային ամ | պերու մեջ նո | առդ ծիածան | ուր տեղ ես.

4. Սեմաչի

Սովորաբար 3 կամ 4 տուն, տունը 4 տող, տողը 16 վանկ
(4-4-4-4):

Արաբ. չափ. մեթափիլուն — մեթափիլուն — մեթափիլուն —
մեթափիլուն:

Առաջին տունը հանգավորում է, ինչպես դագելը, այսինքն
նույն հանգով վերջանում են ա. բ. և գ. տողերը, մնացած տու-
ների ա. բ. և գ. տողերն ընդունում են նոր հանգեր, խկ գ.
տողերը ա. առն հանգավորում են (կանոն 1), Եթե հանգավորվող
տողերը վերջանում են նույն բառով կամ բառերով, հանդ ըն-
դունում են դրանց նախորդող բառերը (կանոն 4):

Շեշտվում են ամեն մի տողի մեջ ստքերի 2-րդ վանկերը.

—1— — —1— — —1— — —1— —
—1— — —1— — —1— — —1— —

Օրինակ

Անույժ ձմբան | արև՝ գարձակ | գառարանը | հայնց բախտին,
Ձյունով ծածկված | սարի պես է | սեսարանը | հայնց բախտին,
Կամ

Հիմնալի | սիրուն աշխարհ | եղան գործիդ | վերանասու.

Հարուստների | համար դախատ | չրավորին | դժոխք ես զու:

6 տող ունեցող սեմային կոչվում է մուսետսես սեմայի

5. Պատմա

Սովորաբար 3—5 տուն, տունը 4 տող, տողը 11 վանկ (այս-
պիսի ստքերով. ա. 6-5, բ. 4-4-3, և գ. 3-3-3-2)

Արաբ. չափ. 1. մութրեփեթափիլուն-մութրեթափիլուն:

2. Մեթափիլուն, մեթափիլուն-Փեռլուն. 3. Փեռլուն-Ցե-
ռլուն-Ցեռլուն-Ցեռլ:

Հանդավարպում է կանոն 2-րդի համաձայն:

Դոշման նկատված է աշուղական տաղաչափական հեշտ ձեռքից մեկը և ամեն մի շարքային աշուղ այդ ձեփ խաղեր ունի, շատ հաճախ ուշագրության չառնելով տողերի մեջ սաքերի և հատածների կանոնները, հետեւելով միայն վանկերի թվին որ է 11. մինչդեռ վարպետների մոտ մենք տեսնում ենք զոշմաներ պահանջվող կանոնների պահպանումով:

Դոշմագիր շեշտականությունն էլ տարբեր է ամեն մի ձեփ մեջ:

ա. ձեփ մեջ— — — — 1— — — — — 1
— — — — 1— — — 1—

բ. ձեփ մեջ— — 1— — — 1— — 1—
— — 1— — — 1— — 1—

գ. ձեփ մեջ— — 1— — — 1— — 1— 1—
— 1— — 1— — 1— 1—

Օրինակներ

Ա. Մարդ կա զարդարված է | ոսկով, արծաթով,

Մարդ կա որ կաշին | քամար է՛լ չունի,

Մարդ կա ուրախություն | կանե շարաթով,

Մարդ կա որ մի ափնուր | սաշար է՛լ չունի:

Բ. Սիրեկանի | մոտ գնալը | զուրին է,
Բայց զատվիլը | շատ դժվար է | սիրելի,
Սեր քաշնի | խելք ու միտքը | խորին է,
Մի ծածկը՝ ված | գաղափար է | սիրելի:

Գ. Դիմացկուն | համբերն | կչկչան | հավիս
Աշխանցմ | կորած չի | խորանը | տեղն է,
Մաքրածին | ու պարարտ | իմ ածմն | հավիս,
Կուշտե՛կուշ | վազնը | մանգալը | տեղն է:

Սահաթ-Նովան, վերոհիշյալ երեք չափերը վարպետորեն միացրել է իր «Ինչ կոնիմ հեքիմ» դումայի մեջ (տես գրքի մերջում):

6. Պատման (Տեսքան)

Տաղաչափական բոլոր կանոններով հար և նման է դումային, միայն թե դաստանը կազմված է լինում մի քանի տասնյակ տուներից և ինչքան էլ որ շատ լինի նրա տուները, բոլոր այդ

տուների 4-րդ տողերը վերջանում են ա. տան հանգով, երբեք չկրկներով հանգ կազմող բառը:

Պատմական, նկարագրական, բարոյագիտական նյութերով հանդես գալիս, աշուղներն ընտրում են գաստան ձեզ և երկարու բարակ արտահայտում իրենց մտքերը: Դաստանները երբեմն զրում են դիալոգի ձեւ, միմյանց հաջորդող հարց ու պատասխանի տուներով, ինչպես Շիրինի «Շնորհքն ու բախտը» կամ Զիվանու «Ազապն ու կարգածը», «Բաղաքացին ու գյուղացին»: Շատ հազվագույտ է գաստանը գրել գուբեյրի ձեռով, այսինքն չվանկի տողերով: Հին աշուղները գաստան երգելուց առաջ բարձրը ձայնով արտասահմում էին հետեւյալ պարսկերեն նախագասությունը «Փիշեվիյս ի՞չ տոսքան իյն տասքան», այսինքն «լսեցեք ով բարեկամներ, իմ դաստանը» (պատմությունը),

Օրինակ

Ականջ արեք ուրախալի և տիտոր
Երկու հզոր տերությանց պատմությանը,
Հայոննեցին իրարու պատերազմի լուր,
Աղեքսանդր կայսը, Համբետ սուլթանը...

7. Մուխամմազ (մյուխամմես)

Սովորաբար 5—7 և ավելի տուն, տունը 4, 5, 6, երրեմն և 8 տող, տողը հետեւյալ չափերով՝ ա 14. վանկ (4-3-4-3), բ. 15 վանկ (3-4-4-4), գ. 15 վանկ (5-5-5) և դ. 16 վանկ (4-4-4-4) և ե. 20 վանկ (5-5-5-5): Այս չափերը կապ ունեն իրենց եղանակների հետ: Ըստ երեսութիւն հին, հիմնական չափը եղել է 5-5-5, որովհետեւ մուխամմազ բառը պարսկ նշանակում է հինգանկյունի:

Հանգավորվում են կանոն 3-րդի համաձայն: Շեշտավորվում են գլխավորապես ուաքերի վերջին վանկերը, իսկ երբ որևէ տունի մեջ հանգավորվում են սովորաբար նախավերջին բառերը, (կանոն 3-րդ) այն ժամանակ շեշտ կրում են այդ հանգ ընդունող բառերը: Մտորե մեր բերած օրինակներում այդ ակներեկդառնա:

ա. Երբ որ զուընց | տեղն աստված | օգնել կուզե | որբ ազգինշ-
նըա մհջը' | կուղարկի' | ազգասիրու' | թյան հոգին.

Շ Ի Ւ Ի Ն

բ. Հոգի ջան | նոր բաց երած | վարդ մանիշակ | ես ինձ համար
Զեմ ուզում | յույսն արենւն | զուն արեգակ | ես ինձ համար
Պատվական | մարգարիտնվ | նորինված թագ | ես ինձ համար-
ել ապելի | բաժին չունիմ | այդ զու մենակ | ես ինձ համար-

Շ Ի Ւ Ի Ն

գ. Քանի վուը ջան իմ | յար քի զուըրան իմ | ապա ինչ անիմ,
Արտասունք անիմ | շատ հոգուց հանիմ | յար զազետ տանիմ,
Ասիր ջեյրան իմ | թող քի սեյր անիմ | յար մայիկ անիմ,
Մուտ բախչեն նազով | քիզ գովիմ սազով | յար ելթիմազով:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

դ. Անզաջ արա | դոչքեղ ասեմ | տալազերեցի | շուն Առաքել
Բնությունը | ազվեսի է | ինք մի մեյ | մուն Առաքել
Չուսեն չուսա | բարձրանում ես | վունց որ մի թռ | չուն Առաքել
Արի զուն ինձ | մի սպանիլ | կարե սրտիլ | խուն Առաքել

ՇԱՄՁԻ ՄԵԼՔՈ

ե. Աշխարհն ընդհանուր | քո սիրույդ համար | քաշում է փափառ | ով սիրուն
սիրուն | զինիր քիզ պես | ամենայն երկիր | փայլուն արուսյակ | ով սիրուն
սիրուն | զուսա | ամբան | կուզա ժամանակ | ով սիրուն
կատանաս համբան | քիչ էլ սպասե | կուզա ժամանակ | ով սիրուն
ֆառք ու սպատիվը | քեզի կհանձնեն | քույրիկ նըմանակ | ով սիրուն
սիրուն:

Ց. Պյուսեզես կամ մյուսազաւ

Սովորաբար 4 կամ 5 տուն, տունը 4 տող, տողիրեց առաւ-
ջինը և երրորդը 14 վանկ (5-4-5) խակ երկրորդը և չորրորդը 6
վանկ (5-1):

Արաբ. չափ. մութեսեմափլուն-մեթափլուն-մութեսեմափլուն
մութեսեմափլուն-մա-

Հանզավորումը. միհնույն հանզն են ընդունում, ինչպես
ա. տան տողերը, այնպես էլ մյուս տուների գ. և դ. տողերը, իսկ

Արկորդից մինչև վերջին տուների մեջ ա. և բ. տողերը ընդունում են նոր և տարբեր հանգեր:

Շեշտեր կը ում են երկար տողերի մեջ առաջին սորքերի նախավերջին վանկերը, և Յ-րդ սորքի միջին վանկը, իսկ կարճ տռաղերում 4-րդ վանկը, այսպես.

— — — 1 — — — | — — — 1 — —
— — — 1 — — —

Տրտում ու տը՛խուր | շրջազնյող | անդադար եմ ես
ո՞հ, ապիկար եմ | ես,

Տատրակի նը՛ման | անընկեր, ան | միիթար եմ | ես
բախտից օտարեմ ես,

9. Պալանդարի (Գալեների)

Սովորաբար 3 կամ 4 տուն, տունը 4 տող, տողը 14 վանկ (5-4-5):

Արար, չափը, հանգավորումը, ինչպես որ մյուստեղետը, միայն առանց կարճ տողերի: Շեշտերը տարբեր են զույգ տողերի (բ. դ. դ. և այլն) վերջին սորքերում: Սակայն այստեղ միենույն հանգը (ինչ որ ա. տան ա. բ. և դ. տողերում) տողամեջ կրկնվում է մինչև վերջը, ամբողջ ստանավորի մեջ: Ինչպես ա. տան դ. տողը, այնպես էլ մյուս տուների ա. և դ. տողերը աղաստ են մնում հանգավորումից:

Կարկուտ, ջօնեզեղ | շանթ ու կրակ | եկան ու անցան,

Ժայսի վրայից | աննպատակ | եկան ու անցան,

Արդար ու տնկուն | մարդը մնաց | իր տեղը անշարժ

Անթիվ սրիկա | զող ավագակ | եկան ու անցան:

Նույն այս չափով է գրված Զիվանու հանրածանոթ «Զամուրդ օրերը»:

10. Շարքի

Սովորաբար 3 կամ 4 տուն, տունը 5 տող, տողը 11 վանկ (4-4-3). հանգավորվում է առաջի 3 տողը մի հանգով, 4-րդ և 5-րդ տողերը մի նոր հանգով: Այս տողերը կրկնվում են բոլոր եռատաղ տուների վերջերին, նրանց դարձնելով 5 տուն: Աշու-

Դական տաղաչափական այս ձևը հարմարեցրած է Շարքի (արեւ-
վելյան) հասուլ եղանակին.

Գարունն եկավ | ձմբան զնւռը | զոցվեցավ,

Սպասելով | մեր սրտերը | խոցվեցավ

Քիշերն անցավ | առավնորը | բացվեցավ,

Զարթիր, զարթիր | իմ աննըման | անձկալի

Տեսությունդ | է ամենուս | ցանկալի:

Եեշտավորվում են, ինչպես մեր առաջ բերած օրինակից
երեսում է հիմնական տան տողերում ա. և գ. ուժերի վերջին
վանկերը և բ. ստքերի նախավերջին վանկերը:

Աշուղական այն ուսմնավորները, որոնք տարեփի 5 տող կաղմն
ունին, բայց նրանց տողերն ունին ոչ 11, այլ 15 (4-4-4-3)
վանկ, այդպիսինքերը իրենց եղանակի անունով կոչվում են
քառիբ մուխաւիք. օրինակ.

Դեռ զիշեր է, առավոտ չէ, հանգիստ քնիր, իմ զավակ,

Աչա ծիծու առ բերանդ եթե ունիս զու փափագ,

Թեե զրաից քո ականջիգ դիաչում է սուր աղաղակ,

Քնիր, քնիր սիրուն մանկիկ, ժոմանակ չի զարթելու

Մի հավատա, որ խարում են, ոչինչ չունին քեզ տալու:

III. Շաբի

Սովորաբար 3 տուն, տունը 4 տող, տողը 11 վանկ (6-5)

կազմությունը և չափը ինչպես զուման:

Հանգավորումը կը կնակի, այսինքն տողերի մեջ հանդ են
ընդունում և առաջին ուժերը (ամեն տունի մեջ առանձին),
իսկ կանոն 2-րդի համաձայն միանման հանդ են կրում ա. տան
բ. և գ. և մյուս տուների գ. տողերը.

Սքեման այսպես.

Ա., տուն

Յ., տուն

— — — — 1	— — — — 1	— — — — 3	— — — — 3
— — — — 1	— — — — 2	— — — — 3	— — — — 3
— — — — 1	— — — — 1	— — — — 3	— — — — 3
— — — — 1	— — — — 2	— — — — 3	— — — — 2

— — — — — 4 — — — — 4
 — — — — — 4 — — — — 4
 — — — — — 4 — — — — 4
 — — — — — 4 — — — — 2

Օրինակ

Ով վարդ արեելյան, բույս կենդանության,
 Խըրախուր հայկական, ցույց տուր քո տերեւ,
 Կսպասե քո գարնան ծառա թե իշխան,
 Քեղնից ողջ հայաստան կսպասե պարզեւ,

Սոխակ սիրաբանը է երգիչ տաճըգ,
 Խնդրում է արժանըգ, լույս բուրաստանըգ,
 Կանչե այգեպանըգ, ուղղե շրջանըգ,
 Բաց քո պատուհանըգ թող ծագե արեւ,

Շարքին ունի և մի, կարելի է ասել բառախաղային առանձ-
 նահատկություն, ուր ամեն մի տունը եթե կս անենք և այդ
 կեսերը կարդանք առանձին առանձին նորից կարող ենք միտք
 դուրս բերել, այսպես.

Ով վարդ արեելյան	Բույս կենդանության
Խըրախուր հայկական,	Ցույց տուր քո տերեւ
Կսպասե քո գարնան	Ծառա թե իշխան
Քեղնից ողջ հայաստան,	Կսպասե պարզեւ.

Նույն տեսակ կարելի է կս անել և ջոկ ջոկ կարդաւ մյուս
 տուննը:

Այժմ կարդանք աշուղ իվանի օաքիից մի երկու տուն-

Որդի եմ Աղամա, սերյալ Թորգոսմա
 Ծննյալ եմ Արամա, կասեն թե հայ ես,
 Իսկս ով կիմանա, նյութս չորս բան ա,
 Հետըն հոգի ջան ա, բե բանական ետ:

Ինն ամիս ճանապարհ, եկամ բեխաբար,
 Ընկամ ես էս աշխարհ, տեսամ լույս, խավար
 Հասամ օխտըն համար, խելքըս էր հիմար
 Հարցըմ մի խաբար, աստն ինսան ես:

Սայաթ-Նովայի դպրոցի աշուղներն երգի այս ձեզ կոչում
էին գուշամա: Ահա Շամչի Մելքոնի մի գուշաման, որ ուրիշ
տեղեր տպագրվել է տողատված, մենք վերականգնում ենք իս-
կական ձեզ.

Հավատովս հավատամ, իմ վուտովս գամ,
Օրը իրեք անգամ լամ աստվածածին,
Տանիս արքայութին; տուր ինձ թողութին,
Թի երկրպագութին տամ աստվածածին:

Շիրինի դպրոցի աշուղներից Գյուրջի Նավեն իր մի օաբին
գրել է տասնավանկ տողերով, այդ երգը մեր հին երգարան-
ներում տպագրված է նույնպես տողատված, մենք վերականգ-
նում ենք իսկականը.

Ով անողորմ յար, քաշի մոտղ տար,
Քեղնից առավել չունիմ սիրահար,
Տեսակով գյանջ ես, սիրո նահանջ ես,
Ինձ բավ է տանջես սիրովկ չարաչար...

12. Թաղալա

Սովորաբար 10 և ավելի տուն, տունը 6 տող, առաջին 5
տողը 16 վանկ (5-5-6) վերջին տողը 6 վանկ (4-2):

Հանգավորումը. ա. տան բոլոր տողերը իրենց թ. և գ. ոտ-
քերի վերջում ընդունում են նույն հանգը. այնուհետև մնացած
տուներում սկզբի 4 տողերը, իրենց թ. և գ. ոտքերի վերջում,
ամեն անգամ ընդունում են մի նոր հանգ, իսկ 5-րդ և 6-րդ
տողերը կրում են ա. տան հանգը:

Եեշտվում են բոլոր ոտքերի վերջին վանկերը:

Ահա Թաղալայի վերջին տուներից մեկը, որի վերջին 2
տողերը հանգավորված են առաջին տան բոլոր տողերի ա-
հանգի նման:

Եկ ծանուցանեմ, | բանն կուսանաց | լոիր ունկերը բաց
Օրինակ է մեզ | զգայարանաց | որ միշտ լինի սանձած,
Մինչ գալ փեսային | դու կացիր վառված | չիցե լինես հանգած,
Ինչպես հիմարքն | մնացին քնած | ու վերջերն իլան լաց
Մային հարսանիս | գուրքն փակեցան | հետո հիմարքն գան
մընացին արտաքսման:

ԻՎԱՆ

13. ՍԵԼԻՍ

Աշուղական այս ձեի ոտանավորը որ գրվում է 14 վանկից
(5-4-5) տուներ չունի, բոլոր տողերը գրվում են միմյանց
հետևից, տողմեջ ընդունելով ա. և բ. տողերի հանգը, նույն
տեսակ շարունակվելով մինչև վերջը.

Գրքախտի ծնունդ աննմանս միտքս է ընկել,
Հոտով անուշիկ բալասանս միտքս է ընկել,
Հայր իմ շուտափույթ օգնության հասիր տառապելույս,
Համեստաբարո սիրեկանս միտքս է ընկել
Տեսնել եմ ուզում սիրելույս այդին մյուս անգամ
Անդին գոհարս, կարկեհանս միտքս է ընկել:

ՍԵԼԻՍԻ մեր բերած օրինակում հանգեր ընդունել են տո-
ղավերջերին կրկնվող «միտքս է ընկել» բառերին նախորդող ոտ-
քերը (կանոն 4):

14. ԹԵԵՑԻՍ

Այս անունը կրում են աշուղական գրականության մեջ այն
ոտանավորները, որոնց մեջ տողավերջերում հանդ կրող բառերը
նույնն են, բայց ունեն աարբեր իմաստներ, այսպիսով ստաց-
վում է մի տեսակ կալամբուր:

Ահա օրինակ դումայի ձեռվ մի թեեցիս

Խմ տփած հարգանքս, պառվելի ընկեր,
Անկեղծ սիրելիի պատիհ համարե՛,
Խմացիր քո սերըդ որտումս է ընկեր
Սյրիլո քո տեսույդ, քեզի համար է:

Հազել, զարգարվել ես գեղեցիկ հալավ,
Ամեն մարդ քեզ կասե գեղեցիկ, հա, լավ
Հոգիս կրակովդ, գեղեցիկ, հալավ,
Թի խիզճ ունիս մեկ մտածե համարե:

Զիվանուս վերքերն արի՛ քարան ցալ
Մարդ եմ ես, սիրելի, չեմ իսկ քար անցավ,
Քո մասին գլխիցս քանի քար անցավ,
Լեր ցավակից, արի թվե, համարե:

15. Սարլա

Այսպես կոչվում են աշուղական այն ոտանավորները՝
որոնք ունին 5 տուն և որոնց բ. գ. գ. և հ. տուների վերջին
տողերում հերթականությամբ կրկնվում են ա. տան տողերը.

Օրինակ

Բարձր ձայնիվ բարբառեցեք,
Տապակեցեք կաքավ ու լոր,
Դուք մեկ կարաս էլ բացեք նոր
Բերեք մազան տանձ ու խնձոր.

Սեղանը լի է պաշարով,
Եղբայրք նստեք շարվեշարով,
Որպես թագ մարդարտաշարով,
Բարձր ձայնիվ բարբառեցեք:

Սեղանի շուրջ դուք քանց ժաղիկ
Գինի խմեք ու ծիծաղեք
Այսօր քանց վաղըն է աղեկ
Տապակեցեք կաքավ ու լոր:

Թանի սաղ ենք, ուտենք, խմենք
Ինչու պիտաք է զարդ անենք մենք,
Թող ողորմի տան երբ մեռնենք
Դուք մեկ կարաս էլ բացեք նոր:

Գյուլ չիման անուշահոտ
Մանուշակ, ոմբուլ ու նարոտ
Մեկ թաս խմեք նաղաշի մոտ
Բերեք մազան տանձ ու խնձոր:

16. Սանդրանե

Այս անունը կրում են աշուղական այն տեսակի ոտանավորները, որոնց յուրաքանչյուր տան տողերը իրենց ոտքերով ունեն, այսպես սսած, աղյուսակածե կազմություն, այսինքն ամեն մի նոր տող կրկնություն է նախորդ տողի, առաջից մի ոտքի հապավումով, վերջից մի նոր ոտքի ավելացումով:

Ստացվում է այն, որ ամեն մի տան վերջին տողը, կազմակած է լինում նախորդ 3 տողերի վերջին ոտքերից, հանգերի կրկնողությամբ, մի նոր ոտքի ավելացումով:

1	2	3	4
2	3	4	5
3	4	5	6
4	5	6	7

Օրինակ

Գիտությունը մշտապես, ով մարդ, առանձին թև կուտա,
Մշտապես, ով մարդ, առանձին թև կուտա, պարզե կուտա,
Ով մարդ, առանձին թև կուտա, պարզե կուտա, լավ ձե կուտա,
Թև կուտա, պարզե կուտա, լավ ձե կուտա, խիլ և կուտա:

Մյուս տուներն էլ այս կազմությամբ, բայց նոր հանգաւ-
մուրումով:

18-րդ դարի սկզբներում գրված մի ձեռագիր գովասանագրի
մեջ մենք պատահում ենք նման մի ոտանավորի, որոշ տարբե-
րությամբ: Ահա այդ ոտանավորի առաջին տունը.

Ի սէր սիրոյդ տենչիւ փարիմ,
Սիրոյդ տենչմամբ ես յոյժ յարիմ,
ՏԵնչիւ ես յոյժ սրտամարիմ,
Փարիմ, յարիմ, մարիմ, տապիմ¹⁾:

17. Բահրի բավիլ

Այս անունը կրում են աշուղական այն ձեի ոտանավոր-
ները, որնց տողերը, հետևապես և տուները, այսպես ասած,
ունեն ալիքալոր ընթերցում, այսինքն կարգացվելիս թողնում
են ելեջի տղափորություն: Դրվում են տուների, տողերի, ոտ-
քերի և հանգերի զանազան դասավորությամբ, որից և բահրի
առաջ, բահրի ռամաւ, բահրի սելիս և այլն:

Բահրի թափիլները չեն երգվում, այլ ասմունքի համար են:

Ահա մի երկու օրինակ Շիրինից և Աղբար Աղամից:

Ով վարդ լվլիֆար, բացվի սարեսար, քեզ դիմե աշխարհ,
աշխարհի միջին չունիս բարեբար, ծագմանն արեու գեմքդ է

1) Յուցակ հայերեն ձեռագրների, Թիֆլիսի Ներսիս. հոգեոր գպըսից,
Կազմեց Ստ. Կանայանց, 1893 թ., էջ 58:

Հարմար, անպատմելի գեղեցկությունդ, յար, երբ գովաբանեմ, մի կանի ազբար:

Աղբար արած եմ քո պատմությունդ, ասեմ բերանով պայծառությունդ: Հայտնի ասեմ քեզ մի նշանով. ձայնդ օրինակ երգարանի քաղցր նմանով: Գովքդ ամենայն տեղ տարածեմ բառով ու բանով:

Շ Ի Բ Ի Ն

Իմ լավ բալան ես, շատ աննման ես, ճարտար, իմաստուն, գովելի բան ես, նքվասու նման վարդի նշան ես, մայիսվարյությունը թափ թառան ջան ես, հոտով բալասան անմահական ես, աղնիվ սիրամարդ գրախտական ես:

Դրախտի մեջը սեհրը պիտի քու, շոհլաթեն տվել քեղնըքիցը գու...

Միաքս խափանես, ինձ կանի թարած, հոգիս մարմնուցս կլինի խարած: Միբաս, կու այրե անշեջ սերըդ քած, անձս կու մնա միայն անիլած: Ել չի լինիլ քեզ մոտ իմ խորհուրդս հաճ... և այլն:

Ա.ԶԲԱՐ Ա.ԴԱՄ

Սայաթ-Նովան մոտավորապես այս ձեռվ է գրել իր «Բարիթավուրը» որ Ախվերդյանի կողմից հնթարկված է տողատման:

Սնդած արա բարիթավուր, գնա, հիգն խաղ մի անի, յարի սիրտն դաղ մի անի, էղ կրակն չաղ մի անի, չաղ շուռ արի, յարսուն տարի, յարին բեղամաղ մի անի:

Բեղամաղ չըլի միզանից, չը հիռանա անմիղ բանից, յարն նազով հոգիս հանից, հանած ծառ է, էշխով վառ է, չի վախենա առւթան խանից:

18. Պաֆիա

Պաֆիա (գաֆիե) կոչվում են այն ոտանավորները, որոնց մեջ հանգավորումը նպատակ է դարձած: Տողերի մեջ զրեթե ամեն մի ոտք հանգ է կրում, պահելով աշուղական տաղաչափության ընդհանուր կանոնները:

Ահա մի տուն դաշիա աշուղ Զահել-Օղլանից.

Ցար է սիրուն, շար է սիրուն, քար է սիրուն, վառ է սիրուն,
ես իմ ջանս քո ձեռնեմն թամամ գարբեգար է սիրուն,
Դաստամաղ է, ծոցիդ սաղ է, սալթ մուշկ ու ամպար է սիրուն
Աչքս մնաց, խելքս գնաց, բոյըդ սալբու ծառ է սիրուն,
Համ թայզուլ իս, համ բըրուլ իս, էդ լեզուդ բարբառ է սիրուն,
Ինչ որ կոսիս, հետս խոսիս, ինձի գիդ ու ճար է սիրուն:

19. Բայարի

Աշուղական խաղերի մեջ տաղաչափական ամենակարճ ձևը
բայաթին է, յոթնավանկ (4-3) կամ (3-4) տողերով:

Օրինակ

Իմ սիրոս աղ ես արել
Զիգարս գաղ ես արել
Ինձանից հեռացել ես
Ինձ բեղամաղ ես արել:

(Գյուղջի Նալե)

Ինչպես հայտնի է այս չափով են հորինված հայ ժողովը-
դական երգերի մեջ «վիճակի» քառյակները. հարբանները՝
ստքերի տարրեր դասավորությամբ:

3-4 Այ տղա բաղի միջին
Ոտներգ շաղի միջին
Կանչի, կանչելուդ մեռնիմ,
Ես եմ քու հաղի միջին:

4-3 Պուճուր աղջիկ սկավոր
Խալխի գոները սավոր
Գնա, մերըդ կանչում ա
Թող ինձ շանե մեղավոր:

Տարիներ առաջ մենք այն կարծիքն ենք հայտնել, որ բա-
յարի կոչվող ստանավորի ձեւը աշուղականից է անցել ժողովը-
դականին, այժմ կասկածում ենք թե ումնից է ում անցել գուցե-
և հակառակը լինի, ինչպես որ բանաստեղծ Հով. Հովհաննիսյանը,
անշուշտ ժողովը դականին հետեւով, զրել է իր սիրուն «Ալագյա-

բարձր սարին» կամ բայաթու հանգավորման ավելի հարազար
«Արագն եկավ»ը՝ թեև ութվանկյան տողերով:

Արագն եկամվ լափին տալով,
Ժեռ քարերին ափին տալով,
Ո՞րուեղ թաղեմ ես իմ դարզը
Չոր գլուխս տափին տալով.

20. Թուբայի

Ռուբայի (բյուլայի, քառյակ) են կոչում աշուղներն իրենց
այն ոտանավորները, որոնց տուները (քառյակները) մտքի
տեսակետից ամբողջացած են և որոնց չորս տողերն էլ վերջա-
նում են միատեսակ հանդով:

Բ. ԲՍՐԴ ԶԵՎԵՐ

21. Կազել-Դիվանի

Այս ձեմ մեջ միացած են դագելի և դիվանու տաղաչափա-
կան ձևերը, առաջինից վերցրած է ոտքերի դասավորությունը
(3-4-4-4) երկրորդից՝ տողամեջ նույն հանգերի կրկնությունը:

Անդադար վատ վատ լուրեր հնարում է դրագարտիչը
Մշտական շատացներով տարածում է լսած քիչը,
Լավ բանին ամենին չի շարժըվի իր տեղիցը
Երր լսեց մի վատություն ձեռք կառնե աղտոտ գրիչը:

Քանի որ օգուտ չունինք, զատաներուն ինչ ենք տալիք
Վերցընե թող մեր միջից այզպեաներին տեր փրկիչը
Ժողովուրդը քաջ զիտե լավս ու վատը, չարն ու բարին
Հուգայի դասն է դասում նա նենդալոր զեշ մատնիչը...

Կա դագել-դիվանու մի տեսակը Բինելեր կոչվող, որի տու-
ների մեջ բ. և դ. տողերի սկզբի Յ ոտքերում բառերը կրկնվում
են, սկիզբ առնելով նախորդ տողերի վերջին կամ նախակերջին
հանգ ընդունող բառերից:

Աշխատիր կյանքիս հատոր, աշխարհի մեջ պայծառ լինիս,
Պայծառ արփի, արփի արկ, արկի պես վառ լինիս,
Արբության, պարկեշտության կյանքին հետեւիր, պատվելի,
Պատվելի մարդ, մարդ կատարյալ, կատարյալ ու վառ լինիս:

Մտքովդ ձեւ, չափե, եղիր բանիմաց զգայուն.
Զգայուն սիրտ, սիրտ բարության, բարության պատճառ լինիս.

Ու զգության հանապարհը բռնե հետեւը, ով Զիվան,
Ով Զիվան, դու, զու պատկերով՝ պատկերով կայտառ լինեմ:

22. Պալանգարի մռւխամմագ

Մի ոտանավորի մեջ միացած են զալանգարին և մռւխամմագը, առաջինից վերցված է չափը (5-4-5), երկրորդից տուների 6 տողերի և նրանց միահանգ վերջավորությունը.

Վարդ վարդ ասելով | կյանքը զնա | ցել է սոխակին,
Մի օր մի ժամա | նակ չէ հասել | իր նպատակին,
Ափսոս հազար ափ | սա նորա սի | բելի փափազին,
Ռո չէ խնայում | խղճալու պա | տանի հասակին
Դարձյալ ավաղ ա | ուն նորա եր | զին, եղանակին
Ունայն սիրովը | ծաղրատեղ ե | դառել թութակին.

Տասնեմի ամիս | համբերելով | հույս է նկատում
Խավար միգախառ | զավառիցը | լույս է նկատում,
Անմարդ անսպատ | տեսքից խրա | խույս է նկատում
Արմատը վլթած | ծասից նորա | բույս է նկատում
Վարդին սոխակը | սրտովը սուրբ | կույս է նկատում
Կարծում համեմատ | հավասար է | իսկ արեգակին.

23. Պալանգարի-մյուսեղես

Միացում այս երկու ձեռերի, չափը երկուսին էլ հատուկ 5-4-5-ն է, իր կցորդ առղերով և իրենց հանգավորումով մյուս տեղես է, սակայն միենույն ժամանակ զալանգարի է որովհետեւ սրա ա, տան գ, տողը և մյուս տուների ա, և գ, տողերը ազատ են հանգավորումից:

Երբ որ կը լսեմ իմ նազելույս երգելը մեղմիկ,
Ինձ թվում է բամբիռ.
Զայնը գրավիչ, հրեշտակային, խոսքերը քաղցրիկ,
Սրտիս կուտա գրգիռ,
Երբ որ կհեռանամ նազելույս մոտիցը մեկ ժամ,
Մեկ տարի կըդառնա,
Հոգս ու ցավերս կավելանա այս օրը սաստիկ,
Մտքիս կուտա կնծիռ,
Իմ սիրեկանս ինչ ժամանակ խոսում է ինձ հետ
Նորոգվում է կյանքս,
Երբ որ կրանա սուրբ քերանը հանում է ձայնիկ
Ես նայում եմ հակճիռ և այլն.

24. Մուխամմագ-մյուսեղեկես

Աւնի մյուսեղեկեսի չափը 5-4-5 վեցվանկյան կցորդներով, սակայն այստեղ կցորդները ամեն տան մեջ կըում են նույն տան երկար տողերի հանգը: Հաջորդ տուներն ունին նոր հանգավորում, բացի իրենց վերջին տողերից, որոնք իրենց կցորդի հետ միասին, տաղաչափության ընդհանութը կանոնի համաձայն, կըում են առ տան հանգը.

Ահա մի օրինակ.

Նոր ես զուս եկել աշխարհումս, ով շահի սուլթան,
Դու եռ թագա ջիվան,
Պահիր պըանըդ զիշեր ցերեկ ինձի բանդիվան,
Իմ հոգիս ու իման.
Կեռկեռ ունըերդ դառ վարադնած նմանի քյաման
Զալ աչքերդ ֆինջան.
Պայծառ երեսդ բոլորել է լուսինի նման
Շողքըդ արեգական:
Լեզուդ խոսում է բյուլբյուլի պես քաղցը պատվական
Վարդ կոհիրի գյուլջան
Բոյըդ, բոխախըդ թամամ լիբը շաբած է մարչան
Մի սուրանի դյարդան,

Երկրորդ տունը սկսվում է այսպես.

Տուտի զուշի պես քաղցը խոսսս ինչ ժամանակի
Քարնան եղանակի.
Այսպես նման ես զաստա կապած փունջ մանուշակի
Հոտ ունիս մեխակի...

Վերջին տողը,

Երանի նըսան ով ճանաչի քեզ պես անմաման
Կը լինի զանազան:

ՆԱԽԱՆԴ ՕՂԼԻ

25. Պումա-մյուսեղեկես

Այս ձեի մեջ տողերի չափը զոշմայինն է (6-5) բայց ինչ-պես մյուստեղետն ունի հարակից կարճ տողեր (ոչ 6 այլ 5 փանկից) որ հաջորդում են առ տան բ. և դ. և հետեւյալ տուների դ. տողերին: Հանգ ընդունում են առ տան մեջ առ և դ. տողերը

միատեսակ, բ. և գ. տողերը կից տողի հետ միասին մի ուրիշ տեսակ: Իսկ հետեւալ տուների մեջ առաջին Յ տողերը կըում հն ամեն անդամ նոր հանգիր, իսկ 4-րդ տողերը կից տողի հետ միասին այն հանգը՝ ինչ որ ա. տան բ. և գ. տողերի հանգը: Սքիման այսպես, (ըերված են միայն 2-րդ ոտքերը)

Ա. տուն	Բ. տուն	Գ. տուն և այլն
— — — — 1	— — — — 3	— — — — 4
— — — — 2	— — — — 3	— — — — 4
— — — — 2	— — — — 3	— — — — 4
— — — — 1	— — — — 2	— — — — 2
— — — — 2	— — — — 2	— — — — 2
— — — — 2		

Այսուհետ ինձի լույս չէ հարկավոր,
Քանի որ քեզ ունիմ, իմ ազնիվ հազյակ,
Աչերդ արեգակ,
Թե ունիմ ցնծություն, քեզ իմ պարտավոր
Դուն ես ինձի համար ամեն ժամանակ
Կենդանի ջութակ:

Այսերդ անթառամ պարտեզի ծաղիկ,
Շըթունքդ շաքարից, մեղրից անուշիկ.
Վերջապես ինձ համար, ով իմ գեղեցիկ,
Զկա ողջ աշխարհը քեզի նմանակ
Դու ես միայնակ:

26. Մուխամմազ դյուքելիք

Միացած են այդ երկու ձեւերը այսպես.

Մուխամմազի տուների մեջ մի 16 վանկյան տողից հետո,
հաջորդում է դյուքելիքի 8 վանկյան մի քառյակ, ապա մուխամմազի բ. տողը, կազմելով 6 տող նույնահանգ. հետեւալ տուները շարունակվում են նույն կարգով, ամեն անդամ առաջին 5 տողերում ընդունելով նոր հանգ, իսկ 6-րդ տողերում պահելով ա. տան հանգը:

Այս բոլոր աշխարհի միջին չկա քեզ հարմար, սիրելի
Աչերդ զամպար սիրելի,
Ունքերդ կամար, սիրելի

Բերանդ շաքար, սիրելի,
 և զուգուգ մխիթար, սիրելի,
 իմաստուն ես և խելամուտ, ամենաճարտար, սիրելի
 Շուշանի պիս շատ գեղեցիկ զարդարվելուդ զարձա առուշ,
 Պոռւնկներդ մեղքից անուշ,
 Այտերդ կարմիր ու քնքուշ,
 Շուտ շուտ արի ոչ թե ուշ-ուշ
 Քաղցրությունդ է հասուկ նուշ:
 Ենձ վառվուն աշերովէ արիր սիրահար, սիրելի:

27. Սուխամմազ-օաբի

Այս ձեւի մեջ միացած են մուխամմազը իր 16 վանկյան
 առողերով և ա. բ. և գ. առղերի միատեսակ հանգավորումով ու
 շաբին այդ տողերի հիսի հանգավորումով:

Հասան խանի զարդ ու բալեն մեզ բերուց աման, Բայազեդ
 Ֆիքըր արուց մտքի տալեն որ տանի թեհրան, Բայազեդ,
 Ռուսն եկավ Աբարանն, առաջըն կորեց բորանն
 Բարձեցինք քոչ ու քարվանն եկանք քեզ սեյրան Բայազեդ

Վերջին երկտողը.

Կարապետն ասեց խոսքի սաղն, չորացավ բաղչան ու բազն
 Քանդեցին այլան, օթաղն, ափսոս երևան Բայազեդ:

ԱՇՈՒԴ. ԿԱՐԱՊԵՏ

28. Մյուստեղես-ոռուբայի

Այս բարդ ձեւի մեջ միացած են մյուստեղեսը 5-4-5 չափի
 կըրկին տողերով և իրենց կցորդներով, ապա մի 6 վանկյան ոռւ-
 ժայի (քառյակ) և նույից մյուստեղեսի երկու տող իրենց կցորդ-
 ներով, ուրեմն մի տան մեջ 12 տող, նույն հանգով:

Զիլֆուն մագերդ չորս գումանդ թուխս ամպի նման,
 Խիստ կապել ա դուման
 Լցված լուսին ես, բոլորակի տանուհինդ օրվան,
 Եղանակի աշնան:

Ե՞յ մարալ ու ջեյրան
 Եկ, զուս արի մեյրան
 Դանամ քեզի հեյրան
 Իլնիմ քեզի զուրբան.

Զուլստ աչքերդ վառ նմանակ է չանզլի չբաղվան
Շողքդ արեգական
Թերթերունքներդ սուր սուր խանչալ նաշտարի փերյան
Ունքերըդ է քյաման:

ԹՌԻՐԻՆԶ

29. Պուսմա-բայարի

Այս ձեւոր կոչվում է նաև Եղակլամա իր մեջ միացնում է
մի տուն դրշմա (4-4-3) և մի տուն բայարի (4-3), բայց վեր-
ջնս իր 4 տողերով մտնում է դոշմայի մեջ նրա 3-րդ տողից
հետո, ունենալով իր տարբեր հանգավորումը: Բացի այդ, ինչ
բառով որ վերջանում է դոշմայի 3-րդ տողի վերջում հանգ ըն-
դունող բառը, նույն բառով էլ սկսվում է բայաթու առաջին
տողը, շղթայվում է նրա հետ:

Ինչ քեզ տեսա, էնդուց դեսը ջանիս չիմ,
Գարձկար էլա, էլ իսկի իմ բանիս չիմ,
Միբառ պառակ, մըգամ նովջըգանիս չիմ
Նովջըգանին յար պիտի,
Յարին էնտիբար պիտի,
Ամենակդ խըստ տամ
Սաղ բաղիփն չար պիտի,
Վատ ջուղարն քու սիբողիդ թվանը ա:

ԱԼՎԱՆ ՕՆԼԱՆ

(Վերջին տողի հանգը հարմարեցրած է խաղի առաջին
տան հանգին, մեր առաջ բերած օրինակը 2-րդ տունն է):

Գ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԵՎԵՐ

30. Ալիքելամա (այբբենաբար)

Այսպես կոչվում են աշուղական գրականության մեջ այն
ոտանավորները, որոնց առողերը կամ տուները հերթական կար-
գով սկսվում են և վերջանում այբուրենի բոլոր գրերով (հայե-
րենում ԱՅԲ-ից մինչև ՔԵՆ): Այսպիսի ձեռով ստանավորներ եղել
են և եվրոպական ազգերի մեջ և ընդհանուր տերմինով կոչվել
են աբեցեզարի: Այս ձեփ ստանավորներ ունեն և միջնադարի
հայ բանաստեղծները: Հայտնի են Ներսես Կլայեցու «Առավու-

լուսոն» և «Աշխարհ ամենայնը» և շատ ուրիշ տաղեր Միջնա-
դարյանից հայ աշուղական ալիքամաները տարբերվում են այն
բանով, որ մինչ առաջինում ոտանավորի տողասկզբներում
այրենի գրերը շարելով գործը համարում են վերջացած, երկ-
բորդում նախ գրերը կոչվում են իրենց անուններով, առա-
ճաջորդում են նույն այդ գրերով սկզբող բառեր:

Օրինակներ մեկից և մյուսից

Առաւտա լուսոյ
Արեգակն արդար
Առ իս լոյս ծուղեա:

Բղիումն ի հօրէ
Բղիուեա ի հոգոյս
Բան քեզի հաճոյս:
Գանձե ողորմութեան
Գանձիդ ժածկելոյ,
Գտող զիս արա և այլն

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Այրն աստված որ ստեղծեց, հայր Ագամին և Եվային,
Բենն բերավ լուսեղեն զարդ հասցըրուց հարս ու փեսային.
Գիմն գոչյաց և նստեցուց ի մեջ զբախտին եղեմային
Դան զրախտն էր, շատ կայր պտուղ չարն ու բարին չիմանային»

ԹՈՒՐԻՆԶ

Յ1. Էվել ախըր

Էվել ախըր (առաջ և հետո, կամ սկիզբ և վերջ) կոչվում
են աշուղական այն ձեր ոտանավորները, որոնց բոլոր տողերը
սկզբում և վերջանում են միենույն տասով: Պարզ է որ տաղա-
չափական շատ ձևերով էլ կարելի է Էվել ախըր զրել:
Անա երկու տուն մի դումայից.

Նոր բացված ծաղկի պես բացվել ես, սիրուն,
Նայվածք Մըրայոն կուսին է նման,
Նկատելով քեզի կանվանեմ գիտուն,
Նախապես աշքերդ ունելով նշան:

Նախանձում է արեն անդամ քեզ, տիկին,
Նա չունելով քեզ պես ազնիվ ամուսին,
Նարզոսը ծծերիդ տրվելով բաժին,
Նունուֆարը բացեց զատ ու գատաստան:

32. Զինջիլամա (ողբայաբար)

Այսպես կոչվում են աշուղական այն ոտանավորները, որոնց
ամեն մի տան վերջին բառով սկսվում է հաջորդ տունը, այս-
պիսով ամբողջ երգը, շղթայվում, կապվում է իր տուներով՝
երգի այդ ձևով գրելն այն նպատակն է ունեցել որ նրա բանա-
վոր տարածվելու ժամանակ տուների հաջորդականությունը
պահպանվի և ոչ մի տունը չմոռացվի։ Զինջիլամաներ կան,
որոնք միմյանց շղթայվում են ոչ թե միայն տուներով, այլև
տողերով։

Լույսը երկնից եկավ գտավ ինձ մոլորդած ոչխարիս,
Ոչխարն ես եմ անառակ, պանդուխտ եմ ես աշխարհիս,
Աշխարհումն չար ավազակն խոցեց ոսից տկարիս,
Տկարին տեսին չօդնեցին ինձ անկյալ կլսամահիս

Այս ձեզ ծանոթ է եղել և մեր միջնադարյան բանաստեղծ-
ներին։ Հիշենք Գր. Նարեկացու «Լույս գերազանցիկը»

Լույս գերազանցիկ, երկնաշաւիդ ուն,
Ուահ արքունաճեմ վերայ ծովու քայլ
Քայլ վեհ շարժելով տեղի խորան նիստ
Նիստ արքունաճեմ անառատի տոթ...

33. Ղափալլամա

Այսպես են կոչվում այն տեսակի երգերը, որոնք իրենց
մեջ պարունակում են մի շարք հարցեր։ Այս ձեզ գործ է ածվում
աշուղական մըցումների ժամանակ, երբ վարպետներից մեկը
երգում է քառյակ, որպեսզի մյուսը պատասխանի իր հարցերին
նույն տաղաչափական կազմության քառյակով։ Ղափալլամա-
ները սովորաբար ունենում են դումայի ձեւ, օրինակ։—

ՀԱՐՅ Այն ինչ է որ չունի ճշոտությամբ հաշիվ,
Ո՞վ է չի հասկանում անարգանք, պատիվ.
Ռւմից է մնացել հայ անունն աղնիվ,
Ումնի մեր երկերը կասվի հայաստան։

ՊԱՏԱՍ. Երկընից ասազերն են անհամար անթիվ,
Մեկ է անզգամին անարգանք, պատիվ,
Հայկից է մնացել հայ անունն աղնիվ,
Նրանով մեր երկերը կասվի հայաստան... և այլն։

Իսկ զափալլամայի այն տեսակը, որի մեջ երգի հեղինակը տուն առ տուն ինքն է հարցումներ տալիս և ինքը պատարիստում կոչվում է զարօթամա (գիմառնաբար):

ՅԱ. ՌԵԶԱՄԱ (ԵՐԵԲԱՔԱՐ)

Սյստես են կոչում աշուղներն իրենց այն խաղերը, որոնց մեջ խոսում են երեք հարցի, երեք առարկայի մասին. լինում են այսպիսի խաղեր որ բոլոր տուներում նույն երեք առարկայի մասին է խոսքը, լինում են և խաղեր որ յուրաքանչյուր տան մեջ նոր երեք բանի մասին են խոսում:

- ա. Երկրագնդի տերը, երբորզությունը
Խելքն է, ուժն է, հետո հարստությունը,
Աշխարհը պինդ պահող հոյակապ ոյունը
Խելքն է, ուժն է, հետո հարստությունը
Հին աստվածքը գրքերու մեջն է հիմա,
Կամ երկինքն է, մեզնից հեռու, բացակա
Երկրագնդի վրա ջոկ աստված չկա,
Խելքն է, ուժն է, հետո հարստությունը
բ. Արի ինձ անդան կալ, այ դիվանա սիրտ,
Հայս սիրե, աղաք սիրե, ար սիրե,
Աշխարհս քոնն ըլի ինչ պիտիս տանի,
Աստված սիրե, հոգի սիրե, յար սիրե,

ՅՅ. ՎԱՐՈՒԱՂԻ

Սյս անունը կրում են աշուղական այն ոտանավորները, որոնց մեջ ա. տան բ. և դ. և հաջորդ տուների դ. տողերի հանգը կազմող միավանիլ բառը, այսպես ասած, բացվում է, այսինքն գրվում է իր տառերի անուններով. Օքինակ.

Եղիս ու հավաս ունիմ որ ժամը խոսամ,
Վարպետից եմ առել դա այլ սե (զաս)
Տեր իմ մեղքս շատ է, թողություն արա,
Արժանացու առնիմ մեթ այլ սե (մաս)...

ՍԵՐՅԱՆ Օդի Սարդիս մեղացեն դառնա,
Թե բարություն գործէ, չարություն մոռնա,
Վաղեն թամամել է, բոչը կրանա,
Գերեզմանիս վրա գիմ այլ սե (զաս),

ՅԵ. Տոտախ գեկմազ (սրբութե չօարժվող)

Աշուղները այս ձեի ոտանավորներ հորինելիս ընտրում են
այնպիսի բառեր, որոնց մեջ բացակայում են շրթնային գըերը,
հետևապես արտասանելիս շրթունքները չեն շարժվում կամ հը-
պում միմյանց: Թյուրքիայի աշուղները այս տեսակ ոտանա-
վորներին ասում են լեյպեյմեզ, որ նույն նշանակությունն
ունի:

Ահա մի տոտախ գեկմազից 2 տուն.

Սիրելի, կշտից եկար անցկացար,
Խեթ խեթ աչք ածեցիր, խիալդէ ինչ ա,
Էլած խելքս զլիսն առեցիր զնաց,
Էլի կրկին գալըդ, գընալդ ինչ ա,

Հանեցիր կես ջանըս, ինձանից տարիք,
Սըտիս զազ քաշեցիր, խաթըք չի արիք,
Խաթը անելու տեղ քար ու քանդ արիք,
Գյահն գյահն լախ լախ խնդալըդ ինչ ա,

Շ Ո Հ Լ Ա Յ Ի

ՅԵ. Թիլ քափրամազ (լեզու չօարժվող)

Աշուղներն այս անունը կըող ոտանավորներ հյուսելիս
ընտրում են այնպիսի բառեր, որոնց մեջ բացակայում են լեզ-
վային գըերը, հետևապես ընթերցելիս լեզուն չի շարժվում.
օրինակ—

Քի իմ կամում, եկ քու կամով, ով աղա,
Կամում իմ քու բուկով, բոխախով խաղա,
Քի իմ կամում եկ հիմա է կամ վաղ ա
Կակուղ խումով պահն քիմով ու համով:

Դ. Աղայանի «Արություն և Մանվել»-ից

Ինչպես տոտախ գեկմազ, այնպիս էլ գիլ քափրամազ կոչված
ոտանավորների մեջ չպետք է որոնել իմաստի կամ մաքի խո-
րություն, այդպիսի խաղերը մի տեսակ սպորտային բնույթ
ունին.

ՅՅ. Սուհամմե

Այսպես էր կոչվում աշուղական այն ոտանավորը (սովորաբար դիվանի, դագել կամ սեմայի), որի մեջ հեղինակը թաքցրած ուներ մի խրթին «պահուստ» կամ հանելուկը Այդ ոտանավորը շալի վրա ամրացված կախվում էր որճարանում որ քաղաքի աշուղները կարգան, և եթե կարող են, մեկնեն «պահուստը»: Ոտանավորի տակ գրված էր լինում թե հանելուկի բացատրությունը քննի վանկից և քննի տառերից է բաղկացած, ապա նաև թե այդ տառերի թվական գումարը քննիս է:

Ահա աշուղ Զամալուց մի մուհամմե (դիվանի).

Իմ պահուստը մի գեղեցիկ արարած է աննման,
Մեր աշխարհում հայտնի քան է, անուն ունի գովական,
Գույնը սիրուն, տեսքը սիրուն, մեծ ու փոքր սիրում են,
Նամանավանդ վաճառականք փայտայում են միշտ նրան
Երբ նա զուրս գա, ժողովուրբը ցնծության տոն է անում,
Այնունեան սպասում է բաղձալի նոր բարության,
Մենք շատերս նրա զինը չենք հասկանում իսկապես,
Եվ շատ անգամ իրը անպետք անում ենք ոտից կոխան:
Երկու տեսակ մահ են տալիս, մեկը ըսպիտակ քարով,
Մյուսը բաղցը օշարակով, թանգ գին ունի պատվական,
Ով Զամալի, հանելուկդ Հայաստանից դուրս կգա,
Գիտունները լավ ծանոթ են, առարկա է պատմական:
վանկ 4, տառ 11, տառերի հաշիվը 13,286: ¹⁾

ՅՅ. Զիվանա

Աշուղական գրականության մեջ այս ձեփ ոտանավորը նոր է, պատկանում է աշուղ Զիվանուն: Ամեն մի աշուղ այս անուն ոտանավոր հյուսելիս իր տողերի մեջ այնպիսի բառեր է ընտրում, որոնց մեջ բացակայում են իր անվան բոլոր գրերը: Ներկա գեղգում ստորև բերված օրինակում, ինչպես կտեսնի ընթերցողը

1) Այս հանելուկի մեկնությունն է որդան կարմր, որ մի տեսակ ներշնչառու միշտ է՝ տառերը հաշվում են այսպես $\pi=600$, $r=4000$, $q=4$, $m=1$, $n=600$, $k=60$, $l=1$, $p=4000$, $d=200$, $b=20$, $r=4000$, որով գումարը կազմի 13,286:

պակասում են այս ձեր առաջին հեղինակ Զիվանու անունը կազմող ԶիհԱՆԻ տառերը. (Լարդաւ հին ուղղագրությամբ, ինչպես որ իր ժամանակին գրել է աշուղը),

Դ Ռ Շ Մ Ա

Տեսել եմ, ով եսթեր, երեսդ շքեղ,
Հրվել եմ բոցովդ խփելով քեզ ձեռ,
Հզօր մօրեկ հօրեղ սերվել ես, զօրեղ,
Մտեղծել է տէրը քեզ խոհեմ սէզ սեռ

Տեղովդ լուս ես, կոյս, մերթ տեսել եմ ես,
Հերմէսը բերել է քեզ հրէ երես,
Ե՞ր չես եղել մէկ բոպէ հոգեանս,
Գերել ես սրտերը, խփելով ընեռ

Մերոքը 1) քու գէմըդ զրել է բոզոր,
Հրդեհով խեղճերը չե երել ոչ որ,
Մէրըդ հրկեղ գու է, ծոցդ ծոր է շոդ,
Հոգ չէ, հողմը փչէ թող բերէ ձմեռ

Աշուղական տաղաչափության ձևերը մեր առաջ բերած 39
օրինակով չեն սպառվում, կան և խաղերի այլ տեսակի ձևեր,
որոնք օրգանապես կապված են իրենց եղանակների հետ և ամեն
աշուղ իր հորինած որևէ խաղը հավելյալ ոտքերով, բառերով
կամ «նեյնիմ»-ներով հարմարեցնում է այդ եղանակին: Այդ-
պիսի ձևերից են, օրինակի համար Թաղյանի, Յարանա, Քեօիս—
Օղի, Շախարայի, Կաքարաք, Խյզա և այլն:

Կան և այնպիսի անուններ, որոնք տաղաչափական կանոն-
ների հետ գործ չունեն, այլ բնորոշում են երգի կամ սուանա-
վորի ներքինը, բնույթը, բովանդակությունը. այդպիսիներից
հիշենք հետեւյալները.

Օգլութամա,—խրատական, բարոյագիտական երգեր.
Զավսարլամա—կենսագրական, վարքագրական.
Գյուղավալամա—սիրահարական, սիրային երգեր.
Դարբեգարի—օտարության, դարիբության երգեր.
Սիօնի—կըոնական, հոգեոր, աղոթքներ.

1) Աերոք՝ Զիվանու իսկական անունն է:

Դասիսե—զովարանական, ջաղաղովական.

Խայալի—երևակայական, ցնորական, երազական.

Ահա օրինակի համար խայալի կոչվող ոտանավորից մէ
երկու տուն.

Անդուզական տաղանդ և գերազանց խելք,

Բարձր ուսում, հանճար ևս ունենայի,

Ո՞վ կարող էր գառնալ իմ գործիս արգելք,

Քաղցր լեզու ճաշտար ևս ունենայի:

Սկսեի մեծ օգուտ տալ մարդկության,

Ընկածին, տկարին լինեի պաշտպան,

Դառնայի պերճախոս, հմուտ պատմաբան,

Գրվածքներ շարեշար ևս ունենայի:

ՀԵՌԱԿԱ. ԲԱՆԱՎԵՃ



շուղական իրականության մեջ բացի գեմ
առ դիմ կատարվող մրցումներից ու ան-
պատրաստից քառյակներով հարց ու պա-
տասխանից գոյությունն են ունեցել և,
այսպես ասած, հեռակա բանավեճերը Մեկը

մի խաղ էր հորինում, ուրիշ քաղաքից մի ուրիշ աշուղ, առանց
հեղինակին տեսնելու, հյուսում էր մի ուրիշ խաղ «ի հանդեպ»,
պատասխանելով նրան։ Մեր գրականության մեջ այդպիսի մի
օրինակ ծանոթ է Գամառ Քաթիպայի «Հիմի էլլուսնք» ոտանավորի
գեմ Մ. Նալբանդյանի «Հիմի էլլուսնք»-ը։ Անցյալ դարի կե-
սերին աշուղական հեռակա բանավեճերից ամենքից ավելի աղ-
մուկ է հանել աշուղ Շիրինի «Աքլորը»։ Բանավեճին մաս-
նակցել են չորս հոգի։ Կարճառուտ կերպով առաջ բերենք այդ
պատմությունը։

Վաղարշապատում, Շողակաթ վանքի վանահայր մշեցի Հով-
հաննես վարդապետը 1854 թ. հունիսի 10-ին էջմիածնի վանքի
մի քանի միաբանների համար ճաշկերույթ է սարգում և հյու-
րերին իր երգ ու նվազով ուրախացնելու համար հրավիրում
է և աշուղ Շիրինին։ Ճաշի պատվավոր և միակ կերակուրը եղել
է հարիսա, աքլորի մսից, սակայն այդ կերակուրը բավական
երկար ժամանակ չի եփում և համբերությունից հանում է կոչ-
նականներին։ Ավագ միաբաններից մեկը խորհուրդ է տալիս մի
կաոր մեղրամոմ գցել հարիսայի պղնձի մեջ, որ կերակուրը
շուտով եփ գա։ Վերջապես արդեն երեկո է դառնում մինչև որ

սոված հյուրերը նոտում են ձաշի: Շիրինը մի կողմից ուտում է, մյուս կողմից իր մտքում հորինում է մի զավեշտական մուխամմազ, որը և դադարի ժամանակ զիլ ձայնով երգում է իր սաղի ընկերակցությամբ:

Այս, Հովհաննես վարդապետ, ի՞նչ ասեմ ձեր աքլորին,
Արի ճշմարիտն ասա, որքան է սրա տարին,
Ավաղ ձեր արքությանը, ամոթ դրա կատարին,
Դեռ լույսը չծագած աշջիբը օջախ արին,
Բատակեցին աքլորը, պղնձի մեջը դրին,
Մինչև էն տեղըն հասավ, որ փափագեցինք ֆանարին.

Պղինձը ջուր լցնելով, կուռ ու գյուղում չմնաց,
Արլորի հույսն ունելով նվազ արդյոք ծում չմնաց,
Բաղչումն արքատ, վանքումը սպիտակ մոմ չմնաց,
Սովածությանն հաղթվելով խելքս ինձնում չմնաց,
Երբ շնանց մոմն իջավ, ասինք թե հում չմնաց,
— Մեր վապիւ, համբերեք, աշջիքն էս լուրը բերին,
և այլն...

(Ամբողջը 7 տուն է, տպագրված է Մ. Միանսարյանի «Քնար հայկական»-ի մեջ: Պետքը. 1868, էջ 404):

Հովհաննես վարդապետը Շիրինի կշտամբանքը կտաներ, մանավանդ այդ օրը, ու գրանով էլ ամեն բան կվերջանար, եթե այդ երգը դուրս չգար վանքի պարիսպներից ու չտարածվեր: Շրջիկ աշուղներն այդ մուխամմազը հասցնում են Ալեքսանդրապոլ և երգում լայն շրջաններում: Տեղի հայ կաթողիկոների հոգեվոր հովիվը Ալեքսանդր Արարատյանը վրդովվելով այդ երգից, հորինում է մի ուրիշ մուխամմազ, որի մեջ ծաղրում է թե Հովհաննես վարդապետին և թե «ամբողջ մայր աթոռ»: Պոնի այլպես են հասկանում այն ժամանակ: Արարատյանն իր հորինած երգը գրի առնելով տալիս է տեղական աշուղներին, որ տարածեն, մի օրինակն էլ ուզարկում է Վաղարշապատ, Շիրինին:

Ի՞նչ էր ասում Արարատյան վարդապետը —

Նստիր, Շիրին, ասեմ քեզ. մեկ օր մեր ասն թարքումը Մի Այսմագուրք ճարեցի հին գրքերի շարբումը,
Էս պատմությունը կարգացի աքլորների վարքումը,
Մափ զարկի, ծիծակեցա, զարմանք մացի աքլորին.

Բայց ինձ հավատա, Շիրին, բովանդակ մեջ աշխարհին
Բացի աստված մարդ չիտե աքլորիս ծնած տարին:

Աղամ երբ որ ստեղծավ, սա տասնուհինդ տարեկան էր,
Նոյըն երբ տապան մտավ, սա փղից մեծ հայվան էր,
Աշտարակի շինությանն հազար ոտ նարդիվան էր
Մովսես գըեց հաստատեց թիֆլ ու տարին աքլորին
և այն,

(Ամբողջը 16 տուն, տպագրված է Ոսկան Հովհաննիսյանը՝
«Նոր քնար Հայաստանի» Ե. տետրակում, Մոսկվա, 1859, էջ 19):
Եթե այս երգն ասողը լիներ իջմիածնի միաբաններից մե-
կը, այնպես էլ անմեղ կանցներ, բայց որովհետև Արաբատյանը
կաթոլիկ էր ու Այսմավուրքին անվանում էր «Աքլորների վարք»
գուցե և մի այլ միտք էլ ուներ, որ մեզ համար մութ է, այդ
մարդու դեմ միանգամից հարձակվում են Սեյադը (Շամախի)՝
և Ստ. ք. Մանդինյանը (Թիֆլիզ):

Պատվելի աշըզ Շիրին, չես գիտում այս վատ դարձն,
Որ լեռի տակ ես գցել մայր աթոռի աքլարն.

Երգում է Սեյադը, Աղեքսանդր վարդապետին անվանելով
«կիսահայ», «գլուխ կեղծավորության», հարձակվում է Վատի-
կանի վրա, երկան է հանում «Հոռմի մեծ աքլորի» անպատիվ
գործերը, խրամակով Շիրինին,

Շիրին, այսուհետե խոսքիդ մեջ ամուր եղիր,
Մեզ շահ չեղած բաները մի տեսանիր, կույր եղիր.

Եթե մեր աքլորի միսը անհամ էլ լինի, ասում է Սեյադը
«հազարի հետ չեմ փոխիլ»:

(Ամբողջ երգը 14 տուն, «Քնար հայկական», էջ 407): Ման-
դինյան քահանան ավելի խիստ է իր արտահայտությունների
մեջ. նա իր մուխամմազը սկսում է այսպես—

Ականջ արա, աշըզ Շիրին, ասեմ քեզ աքլորի բանն
Սեյադի աքլորն եմ պատմում, որ նստած է Հռոմա տաճնն,

Պապականության անցյալի տխուր գործերի մասին է խո-
սում հեղինակը. ինչպես կարելի է «աքլոր ծնավ զաքլոր» ասել—
գըում է նա, այդ կարող է պատահել միայն Հռոմում. և խոկապես

Մեկ էղ աքոր նման արուի, մեծ գահակալ էր ընտրվել,
Մեկ տարվան ետ զարմանք տեսան աքլորն աքլոր է ծնել

Ու առաջ է բերում Հովհաննա պապուհու տիբրահոչակ
պատմությունը: (Ամբողջ 10 տուն, «Նոր քնար», էջ 23):
Շիրինն այս ամենը լսելով հառկանում է իր գլորած քարի
հետևանքը և գրում—

Բավականին բան զառավ այս անսկիտան աքլորը
Թող հիմա բան համարվի, թեև չէր բան աքլորը...

ու նորից հարձակվում է Արարատյանի վրա, թե՝

Այս աքլորն կորեկին, գարուն փափազ լինելով,
Կուս չստանալուն համար մեղ հակառակ լինելով,
Կեզծ ու պատիր խորամանկ երկարնակ լինելով,

Եղավ Հայոց համար «վեստ Սարդիս», Տկրկին Վասակ» կամ
«Հոռմի մեծ աքլորի տղես թարգման» և այլն ու ինքը իր
համար ասում է՝

Շիրինն հայոց տղա և ինձ մտյր Հայաստանն
Ինչն է վարձատրում երկաղական աքլորն...

(Ամբողջը 9 տուն, «Նոր քնար», էջ 28):

Աշուղական այս հետաքրքրական բանավեճը փակում է ինչ
քեզի սկզբնապատճառը, Շիրինը, վերջում երգելով մի գյափ
Արարատյանի հասցեին.

Քյուֆթայի ու յանու կարոտ վարդապետ
Քեզ համար չլսուրի նշան էլ չկա...
Շիրինն հայոց տղա սիրո եմ ծարավ
Տկածդ կրկին քեզ կատ գրավ...

(Ամբողջը 5 տուն, «Նոր քնար», էջ 30):

Մենք այնպես ենք կարծում, որ Արարատյան վարդապետ
տի դեմ շատ իսսու էր այդպիսի լեզուն Շիրինի և նրան պաշտ-
պանող «իսկական հայերի» կողմից: Այդ կրտնավորը «այլադա-
վան» լինելով հանդերձ, կրթված և հայրենասեր հայ էր և
հարդանք էր վայելում Աղեքսանդրապոլի համարակության կող-

մից, առանց դավանանքի խտրության։ Նույնիսկ նրա մահվան օրերում աշուղ ջիվանին գրել է մի դամբանական երգ։ Արարատյանին է պատկանում «Անի քաղաք նստեր կուզա» հանրածանոթ երգը։

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թեև աշուղական ոտանավորները սովորաբար կոչվում են խաղեր կամ երգեր, բայց նրանք բոլորն իրապես երգեր չեն նեղ մտքով և չեն երգվում։ Տաղաչափության բաժնում մեր առաջ ընթաց բազմաթիվ անուններից և ձևերից շատերը միայն «տաղաչափության» են պատկանում և «երաժշտական» տենդենցիներ չունեն։ Այդ ձևերից կան այնպիսինները, որոնք սերառեն կապված են իրենց եղանակների հետ և հայտնի են եղել բոլոր հին աշուղների՝ առանց ազգի խտրության։ Այդ հիմնական եղանակների հետ քիմիապես միացած մայր ձևերի թիվը որքան մեզ հայտնի է 10-ից չի անցնում, բայց նրանց հարակից եղանակների թիվը հասնում է 30-ի։

Աշուղական տաղաչափական ձևերից միայն 3-ն ունեն մի մի հիմնական եղանակ, գրանք են սեմային, մյուսեազեազ, շարեին, իսկ 6-ը բացի իրենց հիմնական եղանակներից ունեն և ուրիշ եղանակներ կամ տարբերակներ։ Նրանք հետեւալինելն են.

Գյուքելիք, հինը 3/8 հորդոր, նորը 5/8, չափավոր, կան և վան դյուքեիեթ, Քուրդիստան դյուքեիթ, Խամուրի.

Դաստան 2/4, ոեշիտատիվ։

Կա և Գյանջալի—դաստան։

Դիվանի 3/4, ծանր։

Կան և Թոփիսանա դիվանի, Մարաքյա դիվանի, Նաքարաթ։ Սաղը դիվանի։

Առօմա 2/4, ծանր, չափավոր։

Կան և Ղոշմա եմինի, Հիճրանի, Ամրահի, Գյորօղլի, Քյարամի, Կաղըզվանի, Բեզուսուլի, Ղալայչի, Բինդյոլի։

Դագել 2/4, ծանր։

Կան և Ղաղել սյուվարակ, Ղաղել նավայի,
Մուխամմազ 6/8, ծանր, չափավոր:
Կա և Մուխամմազ վանազզի:

Պատասխանել այս հարցերին թե որտեղ, երբ և ովքեր են
հսարել այս եղանակները, անսահման դժվար է, գուցե և անկա-
րելի: Հայտնի է միայն այն, որ Պարսկաստանի և հատկապես
Թյուրքիայի վարպետ աշուղների կողմից շատ բան է արված
այս, իրենց բնույթով և տոնիքականությամբ իսկական արե-
վելյան մելոդիաների ռտեղծման և զարգացման գործում:

Կոստանդինապոլսում 18-րդ դարում տաղասաց և երա-
ժիշտ Պաղտասար դպիրն իր երգերի համար հորինել է մի շարք
գեղեցիկ հայ-արեկելյան եղանակներ, որոնցից մեկը «Ի ննջմանե
արքայական»-ը դեռևս սիրով երգվում է և մեր օրերում: Սա-
յաթ-Նովան, ինչպես և իր դպրոցի աշուղները լայն կերպով
օգտագործում էին պարսկա-արևելյան եղանակներն իրենց
խաղերի համար, այնպես էլ հորինում էին նոր եղանակներ Պաղ-
տասար դպիրի և նաղաջ Հովհաննի ուժեղ աղղեցության տակ:

Իսկ հայ-աշուղնական նոր, աղղային դպրոցի վարպետնե-
րը կարող են պարծենալ իրենց հորինած շատ եղանակներով:
Մեզ հայտնի են աղղային դպրոցի հիմնադիր աշուղ Զիվա-
նու երկու տասնյակից ավելի եղանակները հարմարեցրած իր
երգերին, Դեռ հեղինակի կենդանության ժամանակ այդ եղա-
նակներից ձայնագրել են նիկ. Տիգրանյանը, Կոմիտասը, Հով-
կորդանյանը, Կարա-Մուրզան և Ա. Բրուտյանը: Հետագայում
ժողովրդի բերանից առնելով մի քանի եղանակներ ձայնագրել
են Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը: Ո՞վ գիտե-
ինչքան սիրուն եղանակներ մոռացվել են ու կորսվել ժամա-
նակին գրի շառնված լինելու պատճառով: Վերջերս կենինգրա-
դի կոնսերվատորիայի պըռֆ. Քրիստափոր Քուշնարյանը Հա-
յաստան այցելած օրերում, Նոր-Բայազեղում գրի է առել Զի-
վանու եղանակներից երկուսը, որոնցից մեկը «Մայրիկը» այժմ
մեծ տարածում և ժողովրդականություն է ստացել Հայաստա-
նում: Իսկ իր ոտանավորների վրա նոր բազմաթիվ եղանակ-
ներ հորինելու մեջ առաջնությունը պատկանում է վերջերս
վախճանված Գրիգոր Տալյանին (Երամ), նա թողել է հարյու-

բից ավելի հղանակներ, մեծագույն մասամբ իր սիրային երպերի համար: Այդ եղանակներն ամբողջությամբ զբի են առնը վեճ երաժշտագետ Արամ Քոչարյանի և ուրիշների կողմից: Դանվում են Ռոմ: Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կարինետում:

Բոլոր մեր հիշատակած աշուղական եղանակները վերլուծության ենթարկելը, նրանցից յուրաքանչյուրի ծագումը և երաժշտական արթեքավորումը ցույց տալը չի մանում մեր բանասիրական աշխատության ծրագրի մեջ. դա երաժշտագիտական գործ է, որ կարոտում է առանձին մասնագիտական ուսումնասիրության: Ցանք այն է, որ մինչեւ այժմ մենք չունենք աշուղական եղանակների հրատարակությունները, որոնք կարողանային մատչելի դառնալ թե մասնագետների քննության և թե լայն շրջանների հետաքրքրության գոհացում տալու համար: Դեռ անցյալ դարի կեսերից մեր բանասիրների և հավաքագրողների կողմից հավաքված են աշուղական բազմաթիվ երպեր (տեքստեր) և հրատարակված են: Լույս են տեսել նաև աշուղագիտական մի շարք կարևոր ուսումնասիրություններ, բայց մեր երաժշտագետանները շատ քիչ են ուշադրություն դարձրել եղանակների վրա: Պետք է հուսաւ, որ այդ գործով պիտի զբաղվեն, առաջին հերթին, մեր երաժշտական գիտա-հետազոտական հիմնարկությունները:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐԻ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Եծանուն աշուղ և քնարերգու բանաստեղծ
Սայաթ-Նովայի կյանքով և գրական ժա-
ռանգությամբ զբազվել են շատերը, գեռես
անցյալ դարի ծծ-ական թվականներից, երբ
առաջին անգամ լույս տեսավ նրա երգերի
ժողովածուն, Գելորգ Ալավերդյանի խմբագրությամբ, առաջարա-
նով և հմտալից ծանոթություններով։ Գրեթե մի գար շարու-
նակ ամենքի կողմից արթէքավորվել են մեծատաղանդ երգչի
թովիչ խաղերը և հեղինակին իրավացիորեն տրվել է բացառիկ
տեղ մի քանի հարյուրի հասնող հայ աշուղների շարքում։ Մեր
այս հոդվածով կամենում ենք լրացնել այն թերին, որ նկատե-
լի է Սայաթնովագիտության մեջ, այն է, ցույց տալ և վեր հա-
նել նրա մեծ վարպետությունը մերձարկելյան տաղաչափու-
թյան ձևերի մեջ, նշելու նաև մի կարևոր կետ, որ չի նկատված
կամ անտես է առնված, քննադատների և բանասերների կող-
մից։

Աշուղական տաղաչափությունն ուրույն տաղաչափություն
է, նրա սկզբնական, մայր ձևերը իրենց կանոններով արարա-
կան և իրանական ծագում ունին։ Հետագա դարերում այդ ձև-
վերը, անցնելով մերձարկելյան մյուս ժողովուրդների մեջ,
թյուրք, ուղբեկ, քուրդ, աղբյուջանցի և հայ աշուղներն ընդու-
նել են նրանց չափերն ու կանոնները, նաև ենթարկել որոշ
փոփոխությունների, հնարելով նույնպիս նոր ձևեր և բարդ ձե-

վեր: Մշակության ենթարկված այդ ձևերը բացի տուների, տողերի, ոտքերի, վանկերի և հանգերի պարտադիր կանոններից, ունեն և իրենց տոնիկական պահանջները, շեշտականության կանոնները, որոնք ավելի նկատելի են գառնում ասմունքի, քան երգելու ժամանակ, և որոնք, պետք է ասել, իրենց գժվարության պատճառով շարքային աշուղների կողմից ճշտությամբ չեն կիրառվել:

Աշուղական տաղաչափության բազմաթիվ ձևերից Մայաթ-Նովայի ամենից ավելի սիրած ձևը մուխամմազնէ, նա իր 66 հայերեն խաղերից 26-ը և վրացերեն 38 խաղերից 14-ը գրել է այդ ձևով): Այսուհետև հեղինակն ունի գյուբեյր, զումա, զագել, գիվանի, ոուբայի, վարսաղի, թեշնիս և այլն: Նա չունի թյուրք-հայկական աշուղական դպրոցում այնքան սիրված ձևերից մյուսազագաց, դալանդարի, սեմայի, օարքի, զարան այլն, բայց ունի երգեր այնպիսի չափերով և ձևերով, որ չունին ուրիշ աշուղներ, ունի և բարդ ձևերի նոր տեսակներ, որոնք անկասկած իր սեփականությունն են:

Նախ փորձենք վերլուծության ենթարկել Մայաթ-Նովայի մի քանի խաղերի տաղաչափությունը, այն խաղերի, որոնք գրված են հիմնական, հանրածանոթ ձևերի վրա, ապա կանց նենք նոր ձևերին և բարդ ձևերին:

Առնենք նրա զոշմայի ձևով գրված մի երգը, «Ի՞նչ կոնիմ հեքիմ», որի մեջ իբր խոսում է ինքը երգիչը և նրա սիրուհին:

Դոշմա կոչվող երգի տողերն ունենում են 11 վանկ, այսպիսի բաժանումով 6-5, կամ 3-3-3-2, կամ 4-4-3:

Մայաթ-Նովան օգտագործել է այս երեք տեսակի հատածական չափերը մի երգի մեջ, ինարկե որոշ կարգապահությամբ՝ սա նորություն է աշուղական գրականության մեջ: Ահա սքեման:

Ա. տուն

Ա. տողը 3-3-3-2

Բ. » 4-4-3

Բ. տուն

Ա. տողը 3-3-3-2

Բ. » 4-4-3

1) Աշուղի աղբքնջաներեն խաղերը դեռ չեն հրատարակված և ուրեմն դուրս են մնում այս հաշվառմից.

Գ. տողը 3-3-3-2
Դ. » 4-4-3

Գ. տողը 6-5
Դ. » 4-4-3

Ահա այդ երգի առաջին երկու տունը.

Ի՞նչ կոնիմ | հեքիմըն | ի՞նչ կոնիմ | ջառեն,
Քու տվածն | ուրիշ դիղ է | ուրիշ դիղ,
Երգում է | մըհլամըն | չի լավնում | յարեն,
Քու տվածն | ուրիշ դիղ է | ուրիշ դիղ:

Ասաց թե | հիուացի | գլխեմես | գնա
Քու ասածն | ուրիշ տիղ է | ուրիշ տիղ,
Եդ քու արարմունքն | քիզի չի մնա
Քու ասածն | ուրիշ տիղ է | ուրիշ տիղ:

Թանի որ հետեյալ բոլոր տուների մեջ էլ գ. տողերը 6-5
են և դ. տողերը 4-4-3, ուրեմն միատեսակ են, մենք առաջ բերենք բոլոր ինը տուների միայն առաջին երկու տողերի սքեման, որ ներկայացնում է այս պատկերը.

Սայաթ-Նովեն 3-3-3-2
4-4-3

Սիրեկանն 3-3-3-2
3-3-3-2

Սիրեկանն 3-3-3-2
4-4-3

Սայաթ-Նովեն 3-3-3-2
3-3-3-2

Սայաթ-Նովեն 3-3-3-2
3-3-3-2

Սիրեկանն 4-4-3
4-4-3

Սիրեկանն 3-3-3-2
3-3-3-2

Սայաթ-Նովեն 4-4-3
4-4-3

Սայաթ-Նովեն 4-4-3
4-4-3

Ի՞նչ է ցույց տալիս մեղ այս պատկերը, այն որ ինչ մեարիք չափով որ Սայաթ-Նովան իր քառյակն ուղղում է իր սիրունուն, նա նույն ձեի քառյակով էլ պատասխանում է: Հասնում են 6-րդ տունին, սիրունին իրը չի կամենում, կամ չի կարողանում նոր չափով երգել, ու շարունակում է նույնը: Սայաթ-Նովեն հետեւ

վում է նրան։ Հասնում են 8-րդ տունին. սիրուհին իր խոսքը վերջացնում է այն ձեփ քառյակով, ինչ որ քիչ առաջ իբր չէր կարողացել։ Սայաթ-Նովան էլ է վերջացնում իր խոսքը նույն ձեփ քառյակով։

Բոլորովին պատահական չի կարող լինել խոսքի մեծ վարպետի կողմից սիրախաղի հետ և այսպիսի հաջող գրչախաղը։

Եթե Սայաթ-Նովայի երգերի տաղաչափությունն այսպես մանրամասն վերլուծության ենք ենթարկում, ուրիշների կողմից թույլ տված աղավաղումները, կամ ձեռագիր դավթարից անճիշտ ընթերցումները պարզվում են մեր առաջ։ Օրինակ, այս երգում 4 տան ա. տողը որ տաղաչափական մեր ցույց տված կանոնով պետք է լիներ 3-3-3-2, դուրս է բերված 5-6 «ասաց իմ դիղեմեն քիզ չկա չարա»։ Երգիչը իր խողի տուները հերթականությամբ սկսում է «ասաց թե» և «ասի թե» բառերով։ Ինչո՞ւ պետք է այդ տունը տարբեր լիներ և վնասեր եռավանկ ոտքին։ Պարզ է, որ խկականը պետք է լիներ «ասաց թե դիղեմեն քիզ չկա չարա»։

Մուլիամմեզները լինում են տարբեր չափերի, տողերը 14 վանկից (4-3-4-3), կամ 15 վանկից (3-4-4-4) կամ 16 վանկից (4-4-4-4) և կամ 20 վանկից (5-5-5-5)։

Սայաթ-Նովայի մուլիամմեզներից շատերը գրված են 4-4-4-4 չափով, նորություն են նրա «Փահրադն մեռած» (5-4-5) և «Քանի վուր ջան իմ» (5-5-5) չափերով։ Նա շատ հաճախ իր տողերն հանգավորում է վերջին բառի կամ բառերին նախորդող բառերը, ինչպես օրինակ—

Ինձ սիրեցիր, էշիւրն նընգար, խաղի դավրար իմ քիզ ամա,
Մի քաղի քըշի ծաղիկն վարդ առասմբար իմ քիզ ամա,
Չիմ թողնի արեգակումն բազի սաջար իմ քիզ ամա,
Ես քու մահըն վնանց կու խնդրիմ, նուզը ու շաբար իմ քիզ ամա,

Կազելը Սայաթ-Նովան գրում է 16 վանկով և ոչ սովորական 15-ով (3-4-4-4), հատկապես իրանական հին հղանակներից մեկով երգելու համար։ «Աշխարհումս ախ չիմ քաշի» խաղի տակ ինքը հեղինակն ունի այսպիսի ծանոթություն ոչ սպական Պազալի, գաստա բե գաստա բարիփանուրի ձեռում Արութինի ասած»։

Այս ձեռվ է գրել Վահան Տերյանը «Ասում եմ ձեզ մնաք բարով» իր մի «գաղելը»:

Թագիանի ձեր հրդ հյուսելը հայ աշուղական գրականության մեջ պատկանում է Սայաթ-Նովային։ Ուրիշ ոչ մի հայ աշուղի խաղերի մեջ մեզ չի պատահել տեսնել այդպիսին։

Երգի կազմությունն հետեւյալ չափերն ունի:

Ամեն մի տունն ունի 7 տող հիմնական և մի կցորդ տող, որ կրկնվում է 3-րդ և 7-րդ տողերից հետո։ Առաջին երեք տողերն ունին 12-ական վանկ (8-4), մնացած երեք տողերը 8-ական վանկ (5-3), իսկ կցորդ տողը 5 վանկից, հանգավորվում են առաջին երկու տողը միատեսակ, մնացած բոլոր տողերը կցորդ-ների հետ միասին, միատեսակ։

Թեկուզ քու քաշըն մարզիտ տան բրոյի ըըոյի,

Թեկուզ քու քաշըն ալմաս տան բրոյի ըըոյի

Յար չիմ տա, չիմ հիսացնի քիզ քու յարեմեն, բարեբարեմեն։

Չիմ քաշվի էկած մահեմեն

Բաղիփի տըված ահեմեն,

Թեկուզ բաղամ դա շահեմեն,

Յար չիմ տա, չիմ հիսացնի քիզ քու յարեմեն, բարեբարեմեն։

Հեղինակը ծանոթագրել է որ այս երգը պետք է երգել «Դուլիսանգինդանի հանգով» այսինքն եղանակով։

Դյուլիս (երկատիք), աշուղական երգերի մեջ այս շատ սովորական ձեր մեջ՝ որ գրվում է 2 տող 16 վանկերով, կամ 4 տող 8 վանկերով (4-4), Սայաթ-Նովան առնելով վերջին ձեր, ամեն տան 3-րդ տողից հետո ալեւացրել է մի եռավանկ և նույնահանգ կրկնվող բառ, դարձրել է բառիք, մուխամմեզից անմիջապես հետո երգելու համար։

Չիս ասում թե լաց իս էլի,

Բարով տեսա, իմ սիրեկան,

Վարդի նման բաց իս էլի

- խարերով

խարերով

Բարով տեսա, իմ սիրեկան։

Սայաթ-Նովան աշուղական տաղաչափության պարզ, հիմ-

նասկան ձեւրից կաղմել է բարդ ձեւեր, երկու, երեքն և երեք ձեւերը միացնելով մի երգի մեջ, այսպես.

Սուխամմագ-բայաթի. իր շնորհիրդ մալում իմ արի» մուխամմեզի (որ զրկած է 7-8 չափով) ամեն մի տունին ավելացրել է մի տուն բայաթի (4-3).

Խոսքիրդ մալում իմ արի, անարատ մաքուր իս, ախաղեր,
Օսկե փարչումն լցուցած անմահական ջուր իս, ախաղեր,
Ամողն վհնց կու կշտանա դուն կաթնե ախաղուր իս, ախաղեր,
Աշխարքն ծով, դուն մեջն նավ, ման կուգաս, փրփուր իս ախաղեր,
Վախում իմ թե ինձ էլ էրիս անհանգչելի հուր իս, ախաղեր.

Հուր իս էշխով կըրակած
Խոսք իմ ասում առակած
Իմ սիրմա էրծաթ ախաղեր
Օսկեջոռի վարադնած:

Շարունակության մեջ ամեն մի տուն մուխամմեզը առաջին 4 տողերում ունի նոր հանգավորում, 5-րդ տողերը վերջանում են ա, տան հանգով «...ուր իս ախաղեր» իսկ բայաթու քառյակներն իրենց առաջին երեք տողերում ունին տարբեր հանգեր, իսկ 4-րդ տողերը կրում են առաջին տան հանգավորումք: Բացի այս, բայաթու քառյակները շղթայվում են մուխամմեզի իրենց նախորդող տուների հետ, այսինքն ինչ բառով որ վերջանում են նրանց հանգ ընդունող վերջին բառերը, նույն բառով էլ սկսվում են բայաթու քառյակները: Աշուղական երգերի մեջ այդպիսի ձեռք կոչվում է զինջիլամա (շղթայաբար): Մեր օրինակում տես, «անհանգչելի հուր իս, ախաղեր» և բայաթու «հուր իս էշխով»-ը:

Փարստի ալիքլամա Սայաթ-Նովան իր «Այրն աստված սիրիս» երգի մեջ միացըրել է աշուղական այդ երկու ձեռ, վարսաղին, որ իր հանգավորվող տողերում վերջին բառը զրվում է տառերի անուններով, այսինքն փոխանակ գրելու քար, զրում է քո, այլ, քո և այլն, իսկ ալիքլաման, որ նշանակում է այբբենաբար (եվրոպական տերմինով արեցեղաբարի) պահանջում է երգի տուները սկզբեց մինչև վերջը սկսել այլ, քեն, զիմ, զա և այլն հասնելով մինչև փյուր, թե:

Սայաթ-Նովան ունի մի խաղ, որ զրել է զյուքերի չափով

(4-4) բայց բարիթավուր երգելու համար, այդ նպատակով էլ հանգավորել է տարբեր. առաջին ձերն 5-րդ տող է ավելացրել և երկու քառավանկ բառեր մտցրել 4-րդ և 5-րդ տողերի մեջ,— այսպես.

Անզան արա բարիթավուր,
Դնա հիդն խաղ մի անի,
Յարի սիրտն զաղ մի անի,
Եղ կրակն չաղ մի անի,
Զաղ շուռ արի,
Յարսուն տարի,
Յարին ըեղամաղ մի անի.

Հոչակավոր աշուղն իր մի խաղում միացրել է երեք ձեւ, ոռուքայի-բայարի-թեօնիս: Այս երգն ունի հետեւյալ կազմությունը. ամեն մի տուն ունի 10 տող, առաջին 6 տողը բայաթի է, (Գ. Ախվերդյանը հեղինակի զավթարը վերծանելիս շինել է 3 տող). հետո գալիս է մի ոռուքայի (քառյակ) ղոշմայի 11 (4-4-3) վանկով, բացի այդ թեօնիսի կանոնով հանդ ընդունող նույն բառը գործածվում է տարբեր նշանակությամբ. այդ երգը հետեւյալն է.

Ես կանչում եմ լալանին,
Բաղեշխանեն լալ անին
Վայ թե հասրաթեդ մեռնիմ
Բլրուկ միզու լալ անին.
Դոստիրս հիռու կանզնին,
Ցաղիրն զան լալ անին.

Քիզ սազ կուզա ալ զումաշն նազանի,
Եկ ճակատիդ կապէ զարլու մուզայիշ,
Զեռիդ բռնե օսկեջրած մկրտան
Խուճուճ խուճուճ մազերուդ տուր արայիշ:

Սայաթ-Նովան որքան վարպետ է պատկերավոր ոճեր ստեղծելիս, այնքան էլ իր խաղերի հանգավորութմների մեջ նա չի նեղում բառեր գտնելուց և բնավ չի քաշվում օտար բառեր գործածելուց, միայն թե հարուստ լինին իր հանգերը, միայն թե գեղեցիկ հնչեն տողերը երգելու, մանավանդ ասմունքի ժամանակ: Եվ անվանի երգիչը «ի սեր արվեստի» հաճախ օգտվում է «Licentia poetica»-ից, անտես առնելով լեզվական կամ բար-


բըստությունը, որի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրություն չի դարձրել, ակներև է: Նրանց բազմազանությունը, նրանց մեջ երեացող արևելյան ֆանտազիայի թռիչքները, տեղական կոլորիտը, արժանի են գնահատության: Չափից դուրս զարմանալի բազմատեսակություն ունին այդ երգերը և տոնիկական շեշտականություն: Ահա այն արժանիքները, որ կտեսնի նրանց մեջ խոհուն ընթերցողը» («Revue des Deux Mondes» 1852, Paris, հայերեն թարգմանությունը «Լումա», 1896 Ա.):

«Պարսից երաժշտության մայր և երկրորդական եղանակներու տեղեկանալու ու սրանց հարմար ներդաշնակությունով գործածելու համար քանի չան կուլի մաշել Սայաթ-Նովան» իր առաջարանի մեջ ասում է Գ. Ախվերդյանը:

Մենք պետք է նշենք այստեղ այն կարեոր հանգամանքը, որ աշուղական յուրաքանչյուր ձեմ ոտանավոր ունի իր ամունքի ուրույն տեսակը, ըեշիտատիվ-եղանակավոր ընթերցումը: Այդպիսի ընթերցման ժամանակ է, որ ինքնիրենց նկատելի են դառնում տվյալ ձեմ ոտանավորի տողերի մեջ վանկերի անշեշտը, քաշը և շեշտվածը: Ազուղները, ներկա դեպքում վարպետներից վարպետը Սայաթ-Նովան, այդ կանոններին է հետեւվել, փույթ չէ թե իր շեշտերն ու ոլորակները կարող են և չհամընկնել քերականական կամ տրամարանական շեշտերի կամ ոլորակների հետ:

Ակնառու կերպով, մեր խոսքն ավելի համոզիչ դարձնելու համար ահա մի երկու օրինակ.

Դիվանի կոչված ձեմ (4-4-4-3) ասմունքի շեշտականությունը



Թա փափառվ վառվում եմ արև սիրական ուրտեղ ես,
Երկնային ամպերու մեջ նստնդ ծիածան ուրտեղ ես.

(Զիվանի)

Սայաթ-Նովայի դիվանին ունի նույնը.

Դարդ մի անի, ջան ու ջրաք, միտքդ դիվաց չ'ը տեսնե,
Աչըկ խավըի, անդան խուլանա, երեսդ թաց չ'ը տեսնե.


բըստությունը, որի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրություն չի դարձրել, ակներև է: Նրանց բազմազանությունը, նրանց մեջ երեացող արևելյան ֆանտազիայի թռիչքները, տեղական կոլորիտը, արժանի են գնահատության: Չափից դուրս զարմանալի բազմատեսակություն ունին այդ երգերը և տոնիկական շեշտականություն: Ահա այն արժանիքները, որ կտեսնի նրանց մեջ խոհուն ընթերցողը» («Revue des Deux Mondes» 1852, Paris, հայերեն թարգմանությունը «Լումա», 1896 Ա.):

«Պարսից երաժշտության մայր և երկրորդական եղանակներու տեղեկանալու ու սրանց հարմար ներդաշնակությունով գործածելու համար քանի չան կուլի մաշել Սայաթ-Նովան» իր առաջարանի մեջ ասում է Գ. Ախվերդյանը:

Մենք պետք է նշենք այստեղ այն կարեոր հանգամանքը, որ աշուղական յուրաքանչյուր ձեմ ոտանավոր ունի իր ամունքի ուրույն տեսակը, ըեշիտատիվ-եղանակավոր ընթերցումը: Այդպիսի ընթերցման ժամանակ է, որ ինքնիրենց նկատելի են դառնում տվյալ ձեմ ոտանավորի տողերի մեջ վանկերի անշեշտը, քաշը և շեշտվածը: Ազուղները, ներկա դեպքում վարպետներից վարպետը Սայաթ-Նովան, այդ կանոններին է հետեւվել, փույթ չէ թե իր շեշտերն ու ոլորակները կարող են և չհամընկնել քերականական կամ տրամարանական շեշտերի կամ ոլորակների հետ:

Ակնառու կերպով, մեր խոսքն ավելի համոզիչ դարձնելու համար ահա մի երկու օրինակ.

Դիվանի կոչված ձեմ (4-4-4-3) ասմունքի շեշտականությունը




Թա փափառվ վառվում եմ արև սիրական ուրտեղ ես,
Երկնային ամպերու մեջ նստնդ ծիածան ուրտեղ ես.

(Զիվանի)

Սայաթ-Նովայի դիվանին ունի նույնը.

Դարդ մի անի, ջան ու ջրաք, միտքդ դիվաց չ'ը տեսնե,
Աչըկ խավըի, անդան խուլանա, երեսդ թաց չ'ը տեսնե.

Սեմայի ձեր (4-4-4-4) առմունքի շեշտականությունը.



Անոնց ձմբան արև՝ դարձավ վառարանը հայոց բախտին
Զյունով ծածկված սարի պես և տեսարանը հայոց բախտին

(Զիվանի)

Սայաթ-Նովան, իր մուխամմեզների մեջ մանավանդ, մեծ
ուշադրություն է դարձրել շեշտերի կանոններին.


Ահա օրինակի համար «Թամամ աշխարհի» սքեման.



Թամամ աշխարհ պտուտ եկա չթողի Հաբաշ նազանի

Զը տեսա քու դիդարի պես, զուն դիմունին բաշ նազանի

Իսկ իր «Քանի վուր ջան իմ» խաղի մեջ վարպետը խոս-
քերի երաժշտությունը հասցնում է վիրտուոզության: Նա տո-
ղերի մեջ էլ կրկնակի հանգեր է մտցրել և սուեղծել աշուզական
գրականության մեջ մի գլուխ գործոց:



Թանի վուր ջան իմ, յար քի զուրբան իմ ապա բնչ անիմ
Արտասունը անիմ, շատ հոգուց հանիմ, յար զաղետ տանիմ,
Ասիր ջեյրան իմ, թուղ քի սեյր անիմ, յար մտիկ անիմ,
Մուտ բաղչեն նազով, քիզ գովիմ սազով, յար իթիմազով.

Հանգերի և ոիթմի խոշոր վարպետ Սայաթ-Նովայի խա-
ղերի մեջ նկատվում է մի այլ ուշադրության արժանի նորու-
թյուն, որ չունեն ուրիշ աշուզներ և որի վրա մինչև այժմ ոչ
ոք ուշադրություն չի դարձրել: Դա այն է, որ աշուզը իր մի
քանի խաղերի տողերը փոխեփոխ հանգափորում է արտկան և
իգական հանգերով, որպեսզի նրանք իրենց միատեսակ շեշտե-
րով ձանձրույթ չպատճառեն և ավելի երաժշտական դառնան:

Սայաթ-Նովայից առաջ այդպիսի փորձեր արել է Պաղտասար
դպիրը կ. Պոլսում:

Մեկ ազնըզի մի սերն կա ի զինիս
Գիշերն է երազիս, զերեկն է սրտիս,
Կորուսեր եմ իմ անման սիրելիս,
Անոր համար կու պտտիմ ի սարերն, ի ձորերն.

Արական և իգական հանգերով իր տողերը վերջացնելու
փորձերը շատ ավելի առատ են Սայաթ-Նովայի երգերի մեջ:
Այդ հանգերը մոտավորապես այսպիսի դասավորություն ունին:
ա. Երգի տուները արական և իգական հանգեր ունին փո-
փոխակի. տես օրինակ «աշխարհս մեկ փանջարա է» 5 տուն
ունեցող մուխամմեզը, հանգերը փոխանակվում են հերթով—
ի ա ի ա ի:

բ. Երգի տան առաջին 3 տողը իգական և 4-րդ տողերը
արական հանգեր—այսպես իիխա իիխա և այլն.

գ. Երգի տուների առաջին 3 տողը արական են և 4-րդ
տողերը իգական—այսպես աաաի աաաի և այլն.

դ. Երգի ա և բ տուները իգական, գ. տունը արական և
դ. ե. նորից իգական հանգեր, այսպես՝ իիխիի.

Այսուհետեւ գալիս են այն խաղերը, որոնց մեջ մենք դժո-
վարանում ենք որևէ սիստեմ նկատել: Ահա այդ խաղերը իրենց
արական և իգական հանգերի ներկայությամբ:

Խաղ	դ.	Վունց վուր դարիբ	արակ.	2 տուն,	իգակ.	3 տուն
»	ե.	Առանց քիզ ինչ կոնիմ	»	2	»	2 »
»	ժոտ.	Աշխարհումս ախ չիմ	»	3	»	2 »
»	ի.	Ինչ կոնիմ հեքիմն	»	5	»	4 »
»	իտ.	Գուզիմ ումբըս	»	3	»	2 »
»	լէ.	Բեդասըլին վուր	»	3	»	2 »
»	իբ.	Քանի վուր ջան իմ	»	3	»	2 »
»	ծթ.	Ամեն մի մտիկ տալով	»	1	»	2 »

Մենք վերջացրինք: Գրեթե երկու դար է անցել Սայաթ-
Նովայի այդ մեծատաղանդ ըանաստեղծի և խորորագույն աշու-
զի ծաղկման օրերից և նրա սքանչելի երգերը ոչ միայն չեն

Կորցըել իրենց արժեքը, իրենց թարմությունը, այլև բավելի
ու ավելի հասկանալի և սիրելի են դառնում մեզ, մեր ժամա-
նակում, բնավ չդադարելով նոր ուսումնասիրությունների նյութ-
ծառայելուց, նորանոր մարգարիտներ որոնելուց նրանց մեջ:

«Սովետական գրականություն» 1941 Ն 2

Մանոքրուրյուն.

Տարիներ առաջ «Սովետ. գրականության» մեջ տպագրված այս հոդ-
վածում, որ մենք հարմար գտանք կցել մեր ներկա ուսումնասիրությանը
անխուսափելիորեն կրկնվել է մի քանի մտքեր, ինչպես էջ 46-ում ա. և բ-
արզացները և էջ 87-ի վերջին արզացը:

Գ. Լ.

ԴՅՈՒՒԵՑԻՒԹ

«Ազգ էմ որքան»

Moderato. Animato

Զիվանի

Ազգ իմ, որ — ժան եղ — կուն մը — սս, պիր-տըս քն —
զա — սից չի զա — ս — վի, հա-պար տն —
սակ լար — զա — բանդ տաս, պիր — տըս,
պիր-տըս քն — զա — սից չի զա — ս — վի:

ԴԱԶԵԼ

«Ավետարեր խոսնակը»

Զիվանի

Française

Ավ — սե — սա — քն — թ խոս. նա. կը հա — յուն հա — րա. զն
պի — տի զա — ս — ս, կըս. պա. սե — մ և հոյս. ու. ւիլս
դա. րուն հա. րա. վն պի. տի զայ, ա — ս — ս:

ԴԻՎԱՆԻ

ԵԹԻ ԳԻՐՎԱՉԱՐՈՎ

ԶԼՈՎԱՆԻ

Allegretto

Գո գա-գոզ վա - ռ - գամ եմ ա - րի տի - րն - կան

ուր-տն-դնս եր - կնա-յին ամ-պն-րու մնշ- նըս - տող ծի-ա - ծան

ուր-տն-դնս ձա-նա-պարհըդ նա-յն-լու աչ - բու-մըս լուս

հը - մը - նաց եկ ե - բն-կոյք տն-սա-նեմ ակ -

նիկ սի - րն - կան ուր-տն-դնս ձանապարհըդ նա - յն - լու աշ -

ֆն - բու-մըս լուս հը - մը - նաց եկ ե - բն-կոյք

տն-սա - նեմ ակ - նիկ սի - րն - կան ուր - տն-դնս:

ԱԵՐԱՅԻ

«РІДКОВІ КОМПЮТЕРИ»

Swallow

Andante Espr.

Allegro non troppo



ՂՈՇՄԱ

ԱԿԱՐԴԱՑԵՔ ՀԻՄ ԲԱՂՋԻՆ

Զահըն

Moderato

Վ կազմացեք իմ բաղջին կազմ. էյ, էյ;

Կարդա - - - յեմ իմ բաղդին նա - մա - կի սե - կը.

Ե - բեկում ե ին - յի օ - տա - րի նը - ման, ախ.

Ըս - կը - - - սեյ բառաւ. մել կան. թիս սե - բե - կը.

յը - մ - բան ժամա - նա - կի հուն - վա - րի նը - ման, ախ.

Ա - պան - դը ւ - ժը ւ - ժը ւ - ժը ւ - ժը էյ.

ՄՅՈՒՍԵԶԵՏ

»Ակնաբկյա ով սիրուէհի»

Շիրէն

Allegro

Ակ - նար-կյա, օվ իմ սիր-րու - հի, ակ - նար-կյա տղ-կա - րիս, օդ -


Նյա սի - րա-կա - րիս, մերբ իմ նե - զու-թյա նըս հա - սու - լըր, մերբ. դե -
զու ձա - րի - ս, տուր ան - մը - խի. թա - րիս, ան - բաղ-տու -

թյա նըս յեռ-քի - ցը ո - զոր-մն - լի նմ' լատ, եր -

բեն էլ հու - սա - հատ . ափ - սոս, հա - զար ափ - սոս, ա -

պա վայ ինչ ին - լա - գա - րի - ս, պան - տուխտ և

օ - տա - ըլս, հի, պան-դուխտ և օ - տա - րիս :



Գ. ԼԵՎՈՆՑԱՆԻ ԱՇՈԽՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ առուղեր, Ալեքսանդրապոլ, 1892 թ.

Հայ առուղական բնարեգությունը, «Հանդ. գրակ. և պատմական» Մոոկլա, 1896 թ.

Հայ առուղերը, պատմաբանասիր. ուսումնասիրություն «Ազգագրական հանդես», Թիֆլիս 1903 X—XIII գրքեր.

Սայաթ-Նովայի համալսարանական առաջերը «Զիթենի», Ժողովածու, Թիֆլիս, 1915 թ.:

Գեղորգ Սխվերդյան, Կյանքը և գործը «Անահիտ», Պարիզ, 1929 թ. № 2:

Հայ ժողովրդական եվ առուղական երգերը եվ Երանց փոխարքերությունը, «Տեղեկագիր ԽՍՀ Դիտ. և Արվ. ինստիտուտի, Երևան, 1930 թ. № 4.

✓ Սայաթ-Նովա, Քննական ուսումնասիրություն (աշուղի խաղերի ժողովածուին կից), Երևան, Պետհրատ, 1931 թ.

✓ Սայաթ-Նովա, Բ. մասսայական՝ հրատարակություն. առաջարանը, Երևան, Պետհրատ, 1935 թ.

✓ Ժամանակը չէ՝ արգյուն, (Սայաթ-Նովայի աղբքեցաներեն խաղերի տպագրության մասին), Երևան «Գրակ. թերթ» 1935, № 9.:

✓ Խոսիի նարտապետը (Սայաթ-Նովա), Երևան, «Գրակ. թերթ», 1936 թ. № 2

✓ Սուլ Զիվանի, Կյանքի և գործի ուրվագիծը (երգերի ժողովածուին կից), Երևան, Պետհրատ, 1936 թ.

✓ Սովագաբան Գ. Թարգմերդյանի «Հայ աշուղներ» գրքի, չի ՍՀ Պատմ. և գրակ. ինստիտուտ, Երևան, 1937 թ.

Искусство армянских ашугов и ансамблей арм. ашугской песни, Арм. Гос. Филармония, Ереван, 1939

Սայար. Նովան ռուսերեն, (քննադատություն ռուսերեն հրատարակության), «Գրակ. թերթ» 1940, № 9.

Սայար. Նովայի խաղերի տաղաչափուրյան մի բանի առանձնահատկությունների մասին, «Սովետական գրականություն» Երևան, 1941 թ. № 2.

Առուղիները եվ Երանց արվեստը. Ա. Մելիքյանի անվան երաժշտական Գիտահետազոտական Կարինեաի հրատարակություն, Երևան, 1944 թ.

Սոցիալական հասարակական մոտիվները հայ առողջական գրականուրյան մեջ, (անտիպ).

Հայ առողջական գավարեններից, (Բնտիք երգերի ժողովածու) առաջարանով և ծանոթություններով (անտիպ):

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԻ

1. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
2. ԱՇՈՒՂՆԵՐԸ	7
ա) Պալատական աշուղներ	16
բ) Քաղաքային աշուղներ	18
գ) Գյուղական աշուղներ	32
3. ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ	34
4. ԱՐՎԵՍՏԸ	46
ա) Հիմնական ձևեր	52
բ) Բարդ ձևեր	67
գ. Տեխնիկական ձևեր	72
5. ՀԵՌԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃ	80
6. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	84
7. ԱՅՑԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐԻ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	87
8. ՆՄՈՒՇՆԵՐ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ	99

Շապիկը և գրաֆիկ Շկարշերը
Եկարիչ Գ, ԲՐՈՒԺՅԱՆԻ

Պատ, Խմբագիր՝ Ա. Շահինյան
Երաժշտական մասը Խմբագրությամբ Մ. Աղայանի

Վ.Ֆ 00626. Պատվեր 119. Տիրաժ 2000.
Տպագրական 6,1 մամ, Հեղինակային 5,2 մամ.
Ստորագրված է տպագրության 24/VI—44 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, 1924

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0068937

(In 204) 234
ԳՐԱԾ 12 Դ.

A II
302

ГАРЕГИН АЕВОНИЯН
АШУГИ И ИХ ИСКУССТВО

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1944